

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2020
N 2 (51)

Գիտական հանդես

Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակադրման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

Փաքս՝ 574453 Էլ. լայք՝ www.ardaradatutyunjournal.com

Հրապարակված է 07.05.2020թ.

Տպագրությունը՝ Էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական՝ N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

Սրբուի Գալյան – Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ, խմբագրական խորհուրդի նախագահ:

Srbuhi Galyan – Deputy Minister of Justice of the Republic of Armenia, Chairman of the Editorial Board..

Աշոտ Հայրապետյան – «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր:

Ashot Hayrapetyan – “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO, PhD in Law, Associate Professor, Chief editor.

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Artak Asatryan – PhD in Law.

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor.

Արմեն Հարուտյունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor.

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Volodya Hovhannisyan – Doctor of Law, Associate Professor.

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Armen Yesayan – Third Class State Advisor of Justice of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

Գրիգոր Բագրիյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր:

Grigor Badiryan – Doctor of Law.

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor.

Մերգել Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Arakelyan – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor.

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor.

Ժորա Ջիանգիրյան – «Գլաձոր» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ruben Avagyan – Rector of “Manc” University, Doctor of Law, Professor.

Արփինե Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Արպին Խովհաննիսյան – PhD in Law, Associate Professor.

Սուրեն Քրմոյան – ՀՀ փոխվարչապետի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու:

Suren Krmoyan – Adviser to Deputy Prime Minister, PhD in Law.

Սերգեյ Հայրապետյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Hayrapetyan – Doctor of Historical Sciences, Professor.

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor.

Գարիկ Քերյան – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor.

Մուշեղ Հովսեպյան – ԵՊՀ-ի ժուռանի իստիլյուտի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Mushegh Hovsepyan – Head of Chair of Printed and Broadcast Media of YSU, Doctor of Philological Sciences, Professor.

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ազրորիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor.

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Hayk Kupelyants – PhD in Law.

Ալեքսանդր Կրիմով – ՌԴ Սանկտ Պետերբուրգի Դաշնային քրեակատարողական ծառայության համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, ներքին ծառայության գեներալ-մայոր, պրոֆեսոր

Alexander Krymov - Acting rector of the St. Petersburg University of the Federal Penitentiary Service of Russia (FPS of Russia), Major General of the Internal Service, Professor.

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատմիճների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր:

Andrey Skiba – Head of Chair of Criminal and Executive Right of Legal Faculty of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Legal Sciences, Associate Professor, Major of Internal Service.

Եվգենի Բարաջ – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսական գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ:

Ievhen Barash – Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine.

Հենրիկ Լինդեբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիճների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր:

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Social Sciences.

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology of the All-Russian State University of Justice, Doctor of Legal Sciences, Professor.

Սերգեյ Չերնյավսկի – Ռուսականայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ռուսականայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Chernyavsky – Vice Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Legal Sciences, Professor.

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right of the All-Russian State University of Justice, Doctor of Legal Sciences, Professor.

Վլադիմիր Գուրեև – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs of the All-Russian State University of Justice, Doctor of Legal Sciences, Associate Professor.

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Procedure of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Legal Sciences, Professor.

Վիտալի Ստոկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor.

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Aleksandr Rubis – Professor of the Department of Criminal Procedure of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Legal Sciences, Professor.

ԽՄՔԱԳ-ՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՆԻ

Արմեն Օհանյան (պատասխանատու քարտուղար), Սիրա Արիստակեսյան (տեխնիկական խմբագիր), Անուշ Հայրումյան (սրբագրիչ), Սամվել Արքահամյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 6 ՍԵՐԳԵՅ ՄԵՂՅԱՆ**
ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԷԼԻՆԱ ԳԵՂԱՄՅԱՆ
 «Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավական բնույթը և
 գոյարանական հիմքերը քաղաքացիական դատավարությունում
- 18 ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
 Կոռպերատիվների գործունեության սկզբունքները
- 24 ԼԻԼԻԹ ՊԵՏՏՐՈՍՅԱՆ**
 Տնօրինչականության սկզբունքի դրսևորման առանձնահատկությունները
 վարչական դատավարությունում
- 30 ԻԶԱԲԵԼԼԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**
 Աշխատանքի ազատ ընտրության որոշ իրավական հարցեր
 միջազգային փորձի ներքո
- 36 ՌՈԲԵՐՏ ՄՀԵՐՅԱՆ**
 Մեղադրանքի հասկացությունը և գործառութային բնութագիրը
 ՀՀ քրեական դատավարությունում
- 44 ԱՀԱՐՈՆ ՌՈՒՇԱՆՅԱՆ**
 Կիրերհանցագործությունների կանխարգելման իրավակառուցակարգային
 ընդհանրական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում
- 50 ԶՈՀՐԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ**
 Հողի սեփականության իրավունքի սահմանափակումը
 օտարերկրյա քաղաքացիների համար
- 56 ՎԱՀԵ ԲԱՂԴԱՍՅԱՆ**
 ՀՀ օրենսդիր և դատական իշխանությունների փոխհարաբերությունները
 կառավարման խորհրդարանական համակարգի պայմաններում

ՍԵՐԳԵՅ ՄԵՂՅԱՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարող,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
դատավարության ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ ՏՄՊՊՀ անդամ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական
իրավաբանական խորհրդատվության կենտրոնի
դասախոս-կոորդինատոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԷԼԻՆԱ ԳԵՂԱՍՅԱՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի օգնական

«ՊԱՐՏԱԴԻՐ» ՀԱԿԸՆԴԴԵՄ ՀԱՅՅԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

ՀՀ քաղաքացիադատավարական նոր օրենսդրության նորույթներից է «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտը: Աշխատությունում, հայրենական և արտասահմանյան տեսական աղյուրների, ՀՀ և այլ երկրների քաղաքացիադատավարական օրենսդրության, ՄԻԵԴ, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների, ԱՍՆ դատական պրակտիկայի համատեքսում, վերլուծվում են քննարկվող ինստիտուտի՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրման իիմքերը և դրա էությունը: Արդյունքում՝ ենթինակները եզրահանգում են, որ սկզբնական հայցի բավարարությ բացառող հակընդդեմ հայցի հարուցումը ոչ թե պատասխանողի պարտականությունն է, այլ՝ իրավունքը, որի իրականացումը օրենսդիրը, իրավական դրշակի կողմէության, res judicata, դատավարական խնայողության, կոնցենտրացիայի, դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքների կենսագործնան և կողմների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման նպատակվ, բույլատրում է, որպես ընդհանուր կանոն, իրականացնել բացառապես հակընդդեմ հայցի հարուցման միջոցով:

Հիմնարարեր՝ «պարտադիր» հակընդդեմ հայց, Compulsory counterclaim, Խսոսութեա, իրավական որոշակիություն, res judicata, դատավարական խնայողություն, կոնցենտրացիա:

Հակընդդեմ հայցը (լատիներեն՝ actio contraria) սկզբնական հայցի հարուցմամբ պայմանավորված միևնույն վարույթում քննելու համար պատասխանողի կողմից ընդդեմ սկզբնական հայցվորի հարուցողի հայցն է: Այն հնարավորություն է տալիս միևնույն դատավարության ընթացքում նվազագույն ուժերի ու միջոցների կիրառմամբ լուծել կողմների փոխադարձ պահանջները և կանխել միջյանց հետ կապված վեճերով հակասական դատական ակտերի կայացումը²:

Սկզբնական հայցի դեմ հակընդդեմ հայցի ներկայացման համապատասխան ինքնին ենթադրում է որոշակի կապ այս երկու հայցերի միջև, որը մի կողմից դրսնորվում է առանց սկզբնական հայցի առկայության հակընդդեմ հայցի հարուցման անհնարինությամբ, իսկ մյուս կողմից՝ սկզբնական և հակընդդեմ հայցերի փոխակապակցվածությամբ:

Ընդ որում, սկզբնական և հակընդդեմ հայցերի փոխակապակցվածությունը կարող է ունենալ տարբեր աստիճաններ, որից ենթով՝ Ն.Ի. Կլեյնը հակընդդեմ հայցերը բաժանում է երկու խմբի. հակընդդեմ հայցեր, որոնք սկզբնական հայցի հետ կապված են նրանով, որ հակընդդեմ հայցով հայցվորի իրավունքը բացառում է սկզբնական հայցով հայցվորի իրավունքը կամ հաշվանցի միջոցով դադարեցնում է այն և հակընդդեմ հայցեր, որոնք սկզբնական հայցի հետ կապված են իրենց իիմքերով³:

Հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրը⁴ (այսուհետ՝ ՔԴՕ) և ամրագրել է սկզբնական և հակընդդեմ հայցերի փոխադարձ կապը որոշելու իրավապայմաններ: Մասնավորապես, ՔԴՕ 140-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հակընդդեմ հայցն ընդունվում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Է վարույթ, եթե.

1. հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը,
2. հակընդդեմ հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառում է սկզբնական հայցի բավարարումը,
3. հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործի առավել արագ և արդյունավետ լուծումը:

Հակընդդեմ հայցը և առարկությունն ավանդաբար համարվում են հայցի դեմ պատասխանողի շահերի պաշտպանության հիմնական միջոցներ : Հակընդդեմ հայցը, ի տարբերություն առարկության, ունի նաև հարձակողական բնույթ, քանի որ կոչված է ոչ միայն կանխելու կամ նվազեցնելու սկզբնական հայցի հնարավոր հետևանքները, այլև նյութափական պահանջի առաջադրմամբ սկզբնական հայցվորին ստիպելու հանդես գալ պաշտպանության դիրքերից: Սակայն, հարկ է նկատել, որ հակընդդեմ հայցը միշտ չէ, որ իրականացնում է սկզբնական հայցի դեմ պաշտպանության գործառույթ : Այսպես, օրինակ, նման նպատակը բացակայում է բոլոր այն դեպքերում, երբ հակընդդեմ հայցի հարուցումը թույլատրվում է գործի առավել արագ և արդյունավետ լուծման նկատառումներով: Այս առումով ուշագրավ է Ն.Ա. Առապովի մոտեցումը, որը հակընդդեմ հայցերն առանձնացնում է՝ մի խմբում ներառելով նրանք, որոնք ունեն սկզբնական հայցից պաշտպանվելու նպատակ (օրինակ՝ սկզբնական հայցի հիմքը վերացնելու կամ հաշվանցի նպատակով՝ հարուցվող հակընդդեմ հայցերը), իսկ մյուսում՝ այն հակընդդեմ հայցերը, որոնք չեն հարուցվում սկզբնական հայցից պաշտպանվելու նպատակով (օրինակ՝ սկզբնական հայցի ելքի վրա չափող հակընդդեմ հայցերը) :

Անկախ այն հանգամանքից՝ հակընդդեմ հայցն ունի սկզբնական հայցի դեմ պաշտպանական բնույթ, թե՝ ոչ, այն պատասխանողին վերապահված դատական պաշտպանության միջոց է և ենթակա է իրացման տնօրինչականության սկզբունքի տրամարանության շրջանակներում: Այլ կերպ ասած՝ հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի իրականացումը կամ դրա իրականացումից հրաժարումը բացառապես պատասխանողի հայեցողության տիրույթում է: Ընդ որում, նախկին քաղաքացիական դատավարության օրենսգիրը որևէ կերպ չէր անդրադառնում հակընդդեմ հայցի իրավունքը չիրականացնելու հետևանքներին, իսկ հայրենական և ոռուսական դատավարագիտությու-

նում բազմաթիվ են տեսակետներն այն մասին, որ հակընդդեմ հայցը կարող է քննվել ինչպես սկզբնական հայցի հետ, այնպես էլ՝ առանձին վարույթում¹⁰:

Այս համատեքտում քաղաքացիադատավարական նոր օրենսդրության ամենակարևոր նորույթներից մեկը կարելի է համարել այն դրույթը, որի համաձայն՝ պատասխանողի կողմից սկզբնական հայցի դեմ պաշտպանական բնույթ ունեցող հակընդդեմ հայց չներկայացնելը, որպես կանոն, պատասխանողին գրկում է նման հայցը առանձին հարուցելու հնարավորությունից: Խոսքը ՔԴՕ 140-րդ հոդվածի 4-րդ մասի մասին է, ըստ որի «Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված հիմքով հակընդդեմ հայց չներկայացնելը պատասխանողին գրկում է հետագայում այնպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է սույն հոդվածով սահմանված կարգով հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով»: Այս կերպ, փաստորեն, օրենսդրը բացասական հետևանքների կիրառման հեռանկարով խթանել է առանձին խումբ հայցերի հարուցումը՝ սկզբնական հայցի հարուցումից հետո սահմանելով դրանց քննության հնարավորություն բացառապես հակընդդեմ հայցի կարգավիճակում: Այս տեղից էլ բխեցվում է հայրենական դատավարագիտության համար նոր՝ «պարտադիր» հակընդդեմ հայց պայմանական եզրույթը:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի ներքրումը պայմանավորված էր դատական պրակտիկայից եկող ազդակներին, դատավարագիտական մի շարք հիմնադրույթներին համարժեք արձագանքելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես, նախկին քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ պատասխանողները, ունենալով սկզբնական հայցի հիմքում դրված հանգամանքները հակընդդեմ հայցուն չեզոքացնելու հնարավորություն, տարբեր պատճառներով ձեռնպահ են մնացել հակընդդեմ հայցի հարուցումից, իսկ դատարանն էլ, իր հերթին, սահմանափակված լինելով տնօրինչականության սկզբունքով, առանց համապատասխան պահանջի չի ճանաչել դրանց անվավերությունը կամ այլ կերպ դադարեցրել իրավական գործողությունը: Միևնույն ժամանակ նոյն այդ պատասխանողները դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ձեռնամուխ են եղել իրենց դեմ կայացված

դատական ակտերի հիմքում դրված հանգամանքների չեղարկման (օրինակ՝ գումարի բռնազանձման մասին վճռի հիմքում դրված գործարքի վիճարկման և այլն) պահանջներով հայցերի հարուցմանը և բարենպաստ դատական ակտի դեպքում արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայմանը¹¹: Արդյունքում՝ ստեղծված իրավիճակը խնդրահարույց էր մի քանի տեսանկյունից: Այսպես:

Առաջին. օրինական ուժի մեջ մտնելու պահից, որպես կանոն, սպառվում են դատական ակտի հետագա բողոքարկման և վերանայման հնարավորությունները, քանի որ, ինչպես արդարացիորեն նշում է Վ.Ֆ. Յակովլես, արդարադատությունն ինչոր տեղ պետք է ավարտվի¹²: Մտնելով օրինական ուժի մեջ՝ դատական ակտը ձեռք է բերում որոշակի հատկանիշներ, ներառյալ՝ անփոփոխելիություն (անհերքելիություն), որն էլ ուղղված է դատական ակտի կայունության ապահովմանը¹³:

Այս կապակցությամբ ուշագրավ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը, որը բազմից նշել է հետևյալը. «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախարանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքը ներադրում է res judicata սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որպեսզի կողմերից ոչ մեկը չունենա իրավունք պահանջելու վերջնական և պարտադիր դատական ակտի վերանայում՝ ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով: Նահանջն այս սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է էական և անհերքելի քննույթ ունեցող հանգամանքներում»¹⁴: Սեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է ձևավորել հետևյալ մասին. «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանման վարույթը ենթադրում է, որ առկա են նախկինում անհասանելի ապացույցներ, որոնք պետք է հանգեցնեն դատավարության այլ արդյունքի: Դատական ակտի բեկանման համար դիմող անձը պետք է ապացուցի, որ զրկված է եղել այդ ապացույցները գործի քննության ժամանակ ներկայացնելու հնարավորությունից, և որ այդ ապացույցները կարևոր են:»¹⁵:

Res judicata սկզբունքի հիմքում ընկած է այն

դատական ակտի անփոփոխելիության գաղափարը, որով դատավարության կանոնների պահպանմամբ քննվել և վերջնական լուծում է տրվել կողմերի միջև վեճին¹⁶: Դատական ակտերի անփոփոխելիության սկզբունքը ապահովում է միանգամից երկու խումբ շահերի պաշտպանություն: Նախ, այն ապահովում է հասարակական շահի պաշտպանությունն առ այն, որ դատարանի ժամանակը և ուսուրանությունը չպետք է ծախսվեն նույն հարցերի կրկնակի քննության վրա, երկրորդ՝ այն պաշտպանում է անհատի շահն առ այն, որ իր իրավունքների հետ կապված հարցերը վճռվեն վերջնական և որոշակի կերպով¹⁷: Եթե գործին մասնակցող անձններ հնարավորություն ունենան պարզապես վերաբացելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտով վճռված հարցերը, կարող ենք ասել, որ չի լինի ոչ դատական քննության ավարտ և ոչ էլ դատարանի հեղինակության սկզբը: Դատական ակտերի անփոփոխելիությունը միայն արդյունավետ քաղաքականություն չէ, այն դատական իշխանության գոյության կարևոր պայման է¹⁸:

Վերը շարադրված մոտեցումներից բխում է, որ իրավական որոշակիության սկզբունքը, երաշխավորելով դատական ակտերի կայունությունը, լուրջ իրավաչափ նկատառությունների ազդեցության դեպքում թույլ է տալիս բացառությունները: Ընդ որում, նման բացառությունը պետք է պայմանավորված լինի էական և անհերքելի հանգամանքներով և կարևոր ապացույցներով, որոնք ներկայացնելու հնարավորությունից շահագրգիռ անձը գործի քննության առաջնական ժամանակ գրկված է եղել:

Նման պայմաններում ակնհայտ է, որ հակընդդեմ հայց հարուցելու իրավունքը սեփական հայեցողությամբ շիրականացնելու, սկզբնական հայցի բավարարումը լրիվ կամ մասնակի բացառող պահանջը առանձին հայցով քննարկման առարկա դարձնելու և բարենպաստ դատական ակտ ստանալու դեպքում այդ հիմքով օրինական ուժի մեջ մտած նախորդ դատական ակտը վերանայելու անսահմանափակ հնարավորությունը համատեղելի չէր իրավական որոշակիության սկզբունքի և դատական ակտերի կայունության գաղափարի հետ:

Երկրորդ. Սահմանադրության փոփոխություններից հետո այլևս սահմանադրական մակարդակով օրենսդրական կարգավորման սկզբունքը է դիտարկվում արդյունավետության սկզբունքը: Մասնավորապես, Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Այս առումով էական են հետևյալ հանգամանքները.

1) Սահմանադրական դատարանը, անդրադառնալով արդար դատաքննության իրավունքի համատեքստում կիրառվող «իր գործի քննություն» արտահայտության սահմանադրափական բովանդակության բացահայտմանը, նշել է հետևյալը. ««Իր գործի քննություն» հասկացությունը ներառում է բոլոր այն փոխկապակցված հայցապահաճնշերի համակցված քննությունը, որոնք նպատակառողիկած են մեկ ընդհանուր խնդրի լուծմանը, այն է՝ այդ գործի շրջանակներում անձի խախտված իրավունքի վերականգնմանը:»

Վերոնշյալ նշանակում է, որ ինչպես ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով, այնպես էլ Մարդու իրավունքների և իմանարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով և ներպետական դատավարական օրենսդրությամբ սահմանված երաշխիքները պետք է ապահովեն ոչ միայն այս կամ այն կոնկրետ հայցապահաճնշի քննության շրջանակում և համատեքստում, այլ նաև՝ տվյալ խախտված իրավունքի վերականգնմանը միտված տարաբնույթ փոխկապակցված հայցապահաճնշերի քննության շրջանակում և համատեքստում, քանի այդ հայցապահաճնշերի վերջնական նպատակը մեկն է՝ միևնույն խախտված իրավունքի ամրողական վերականգնումը: Հետևաբար, անձի միևնույն խախտված իրավունքի վերականգնմանն ուղղված փոխկապակցված հայցապահաճնշերի դիտարկումը որպես միմյանցից տարանջատված առանձին և ինքնուրույն գործերի հարուցման հիմքեր, կարող է հանգեցնել անձի գործի արդյունավետ, ամրողական և բազմակողմանի քննության ապահովման դատավարական երաշխիքների խախտմանը»²¹:

2) Դատական ակտոր, մտնելով օրինական ուժի մեջ, ձեռք է բերում նաև նախադատելիության հատկանիշ, որի համաձայն՝ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանի կողմից հաստատված և դատական ակտում ձևակերպված փաստերը չեն կարող կասկածի տակ դրվել կամ կրկին հետազոտվել նույն անձանց մասնակցությամբ ուրիշ գործերի քննության ժամանակ²²: Դատավարական տեսանկյունից նախադատելիության ինստիտուտն ուղղված է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովմանը:

3) Դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման կառուցակարգերի և

ընթացակարգերի սահմանման հարցում պակաս կարևոր չեն դատավարական խնայողության²⁴ և դրա մասնակի դրսերում հանդիսացող կոնցենտրացիայի սկզբունքները: Դատավարական խնայողությունը կարելի է բնորոշել որպես դատարանի և դատավարության մասնակիցների նվազագույն գործառության, ժամանակային և ֆինանսական ծախսերով արդարադատության իրականացումը երաշխավորող իմանադրույթ: Այս մի կողմից ենթադրում է անհրաժեշտ գործիքակազմի առկայություն դատավարական օրենսդրությունում և հետևաբար հասցեազրված է օրենսդրին, իսկ մյուս կողմից հանդես է գալիս որպես ուղենիշ դատարանների կողմից հայեցողական լիազորությունների իրականացման ժամանակ²⁶: Ընդ որում, ընդհանրապես հակընդիմ հայցի ինստիտուտը Սահմանադրական դատարանը դիտարկել է դատավարական խնայողության սկզբունքի դրսերման միջոց՝ հետևողականորեն արտահայտելով հետևյալ դիրքորոշումը. «Հակընդիմ հայցի ինստիտուտը ինարավորություն է տալիս մեկ դատավարության ընթացքում մեկ դատական ակտով լուծել կողմերի փոխադարձ պահաճները և դատավարական նվազագույն ուժերի ու միջոցների կիրառմամբ դատական գործընթացն իրականացնել առավել արդյունավետությամբ»²⁷:

Հիշատակված իմանադրույթների համատեքստում, գնահատելով գործի ավարտից հետո առանձին հայցով սկզբնական հայցի բավարարումը բացառող հայցի հարուցման և լուծման գործընթացը, պետք է արձանագրել հետևյալը.

- մեկ ընդհանուր խնդրի լուծմանն ուղղված կամ առնչվող հայցերի առանձին քննությունը և լուծումը չեն ներդաշնակում անձի իր գործի ամրողական լուծման սահմանադրուեն երաշխավորված ակնկալիքի հետ,

- նոր գործի քննության ընթացքում նախորդ գործում հաստատված փաստերի քննարկման և ընդիուպ դրանց հակառակի հաստատման հնարավորությունը խաթարում է դատական ակտերի այլեւորությունը պահաճնաշնորհ քննարկման առարկա դարձնելու և բարենպատ դատական ակտ ստանալու դեպքում այդ հիմքով օրինական ուժի մեջ մտած նախորդ դատական ակտը վերանայելու հնարավորությունը ստեղծում են դատավարական խնայողության և կոնցենտրացիայի սկզբունքների խախտման ոխսեր, որոնք, ի թիվս այլնի, կարող են դրսերվել դատարանների ծան-

բարենավածության (նոր քաղաքացիական գործի հարուցում, ավարտված քաղաքացիական գործի վերաբացում, առաջին գործով արդեն իսկ կատարված դատական ակտի շրջադարձում և այլն) և դատական ծախսերի ավելացմամբ: Ընդ որում, նոր գործի հիմքով առաջին գործի վերաբացման և վերաբացման արդյունքում սկզբնական գործով հայցի մերժման դեպքում կարող է տեղի ունենալ նաև պետական կառավարման համակարգի ռեսուրսների վատնում, քանի որ այս դեպքում ոչ միայն աննպատակ կդառնան այս դատական ակտի հարկադիր կատարմանն ուղղված Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ջանքերը և ռեսուրսները, այլև հենց նրա կողմից նոր ջանքերի և ռեսուրսների կիրառմամբ պետք է ապահովվի վճռի շրջադարձման կատարումը:

Երրորդ. թե՛ նախկին, թե՛ գործող քաղաքացիադատավարական օրենսդրությունը որպես ընդհանուր մոտեցում ամրագրում է դատավարական իրավունքներից բարեխսդորեն օգտվելու դրույթը: Ավելին, ՔԴՕ-ն, շարունակելով այս մոտեցումը, տարրեր իրավական ներգործության միջոցների կիրառման սպառնալիքով ամրագրել է նաև դատավարական իրավունքների չարաշահման անթույլավորությունը: Այս առումով պատասխանողի սկզբնական վարույթում առանց հարգելի պատճառի անգործությունը և հետագայում առանձին հայցի ներկայացումը կարող են վկայել դատավարական իրավունքի չարաշահման մասին, որը վնասում է ոչ միայն կողմերի, այլև արդարադատության շահերը: Այս առումով հիշատակման է արժանի Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որը նախկին քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ մինչև վճիռ կայացնելու պահը հակընդեմ հայց հարուցելու իրավունքի առկայության պայմաններում արձանագրել է հետևյալը. «Զոհրաբ Թովմայանը հայցը վարույթ ընդունելու պահից ունեցել է բավարար ժամանակ հակընդեմ հայց ներկայացնելու համար, ավելին՝ 25.03.2010 թվականին նրա կողմից ներկայացվել է պատասխան հայցադիմումի լրացման վերաբերյալ և տվյալ ժամակահատվածում Զոհրաբ Թովմայանը նույնական հակընդեմ հայց չի ներկայացրել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Զոհրաբ Թովմայանը չի հիմնավորել մինչև 26.03.2010 թվականը հակընդեմ հայց ներկայացնելու անհնարինությունը, հետևաբար Դատարանի կողմից հակընդեմ հայց ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու մասին միջնորդության մերժումը իրավաշափ է:»²⁸:

Հարկ է նկատել, որ «պարտադիր» հակընդեմ

հայցի ինստիտուտը նոր չէ դատավարական գրականության և օրենսդրության համար: Այն (անգլերեն՝ Compulsory Counterclaim) ծագել է ամերիկյան քաղաքացիական դատավարությունում: Ընդ որում, ինչպես նշում է պրոֆեսոր Միլլարը, դրա ծագումը կապվում է դեռևս 1722 թվականին Նյու Չերսի նահանգում հաշվանցի հայցերի վերաբերյալ ընդունված օրենքի հետ: ԱՄՆ քաղաքացիական դատավարությունում «պարտադիր» հակընդեմ հայցի կանոնի օրենսդրական վերջնական ձևակերպումը կապվում է պրոֆեսոր Դեյվիդ Շապիրոյի անվան հետ, ում ջանքերի շնորհիվ առավելապես 1982 թվականին ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոններում կատարված փոփոխության արդյունքում վերջնական ձևակերպում ստացավ այս կանոնը: Այսպես, ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոնների 13-րդ կանոնի «Պարտադիր հակընդեմ հայց» վերտառությամբ «ա» կետը սահմանում է, որ.

«(1) Ընդհանուր առմամբ, որպես հակընդեմ պետք է ներկայացվեն բոլոր այն հայցերը, որոնք ներկայացման պահին հայցին ունի ընդեմ հակադիր կողմի, եթե այդ հայցերը.

(Ա) ծագում են հակադիր կողմի հայցի հիմքում ընկած միևնույն գործարքից կամ իրադարձությունից, և

(Բ) չեն պահանջում դատավարությանը այնպիսի նոր կողմերի ներգրավվում, ում գործն ընդդատյա չէ սկզբնական հայցը քննող դատարանին:»:

«Պարտադիր» հակընդեմ հայցի վերոնշյալ կանոնին հետևեց ամերիկյան քաղաքացիական դատավարությունում այս ինստիտուտի հետագա զարգացումը՝ հստակեցնելով և որոշակի առումով ընդլայնելով նաև կանոնի կիրառման շրջանակը և դրա իրավական հետևանքները:

Ուշագրավ է, սակայն, որ մինչ այս կանոնի օրենսդրական ամրագրումն էլ ամերիկյան դատական պրակտիկայում և տեսական աղբյուրներում արդեն իսկ առկա էին այնպիսի իրավական դիրքորոշումներ, որոնք բացառում էին պատասխանողի կողմից սկզբնական գործով վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո այնպիսի հայցերի ներկայացումը, որոնք սկզբնական գործով քննով դեպքում կարող էին հանգեցնել գործի այլ ելքի: Այսպես, դեռ 1929 թվականին ԱՄՆ դատական պրակտիկայում արտահայտվեց այն դիրքորոշումը, որ իրավահարաբերության վրա հիմնված վճիռը պարտադիր է նույն իրավահարաբերությունից ծագող վեճի համար ոչ միայն այն հարցերով, որոնք արդեն քննվել են առաջին վեճի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

շրջանակներում, այլև այնպիսի հարցերով, որոնք պետք է քննված լինեին, եթե վեճերի ծագման հիմքը նույնն է, և երկրորդ գործով տարբերվող վճիռը կարող է լրիվ կամ մասնակիորեն փոփոխել, վերացնել առաջինով հաստատված իրավունքներն ու շահերը: Ընդ որում, վեճերի նույնությունը պետք է մեկնաբանել ոչ թե զուտ ձևական, այլ բովանդակային առումով՝ կողմերի իրավունքներից ու պարտականություններից ելնելով³¹: Պատահական չեն, որ արդեն «պարտադիր» հակընդդեմ հայցի կանոնի ներդրման հիմնավորումներում նախագծի հերինակների, ինչպես նաև՝ հետագայում ամերիկյան դատավարագետների կողմից արտահայտվել են այն դիրքորոշումը, որ անկախ այս կանոնի ամրագրումից՝ հայցվորի կողմից վերջնական վճռի ստացումից հետո պատասխանողը, ընդհանուր կանոնի համաձայն (res judicata սկզբունքից ելնելով), չի կարող հարուցել այնպիսի նոր հայց, որի քննության արդյունքում կարող է վերացվել արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճիռը³²: Այսպիսով, անկախ «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավական հստակ ամրագրումից, պատասխանողի կողմից նման հայցի հետագա հարուցման արգելքը ենթադրվում և ածանցվում էր ընդհանուր իրավունքում հայտնի res judicata սկզբունքից, մասնավորապես՝ դրա դրսերում համարվող դատական ակտերի նախադատելիության սկզբունքից, և դրա ակունքները ամերիկյան իրավունքում առկա էին ինստիտուտի օրենսդրական ամրագրումից շատ ավելի վաղ³³:

Հակընդդեմ հայցի պարտադիրության ու նույն վարույթի շրջանակներում սկզբնական պահանջի բավարարման բացառման ուղղված հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորության առկայության պայմաններում հետագայում պատասխանողի կողմից առանձին հայց հարուցելու արգելքի ընկալումը և դրան տրված մեկնաբանություններն ամերիկյան քաղաքացիական դատավարությունում միատեսակ չեն եղել: Չնայած այն հանգանակին, որ ԱՄՆ դաշնային օրենսդրությամբ ամրագրված վերոնշյալ կանոնը չի պարունակում սկզբնական գործով չներկայացված «պարտադիր» հակընդդեմ հայցը հետագայում առանձին վարույթով ներկայացնելու վերաբերյալ ուղղակի արգելքը, այնուամենայնիվ, նման արգելքի առկայության վերաբերյալ մոտեցումը զուտ տեսական դասակարգում չեն, և ամերիկյան դատական պրակտիկայի զարգացումը հանգել է նրան, որ «պարտադիր» հակընդդեմ հայցը սկզբնական հայցի հետ մեկ վարույթում չներկայացվելու դեպքում բացառվի հետագայում այն որպես նոր հայց ներկայացնելու

հնարավորությունը³⁵: Ընդ որում, հակընդդեմ հայցը «պարտադիր» համարելու համար բավարար չէ այն, որ վերջինս սկզբնական հայցի հետ ծագի նույն իրավահարաբերությունից, բավարար չէ նույնիսկ հայցերի փաստական կազմի համընկնումը: Հակընդդեմ հայցը «պարտադիր» կարող է համարվել բացառապես այն դեպքում, եթե իր էությամբ կարող է բացառել հայցվորի օգտին վճիռ կայացնելը³⁶: Որպես օրինակ կարելի է դիտարկել այն իրավիճակը, եթե հակընդդեմ հայցը բացառում է այն գույքի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը, որը վերջինս իր հայցով պահանջում է պատասխանողի ապօրինի տիրապետումից: Հետևաբար, հակընդդեմ հայցը «պարտադիր» համարելու և հետագայում վերջինիս առանձին վարույթով ներկայացնելով բացառելու կարևորագույն նախապայման է հակընդդեմ հայցի՝ սկզբնական հայցի բավարարումը ամբողջապես կամ մասամբ բացառելը:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի տարրեր դիտարկվում են Խապանիայի քաղաքացիատավարական օրենսդրությունում: Սանավորապես, Խապանիայի քաղաքացիական դատավարության ակտի «Res judicata սկզբունքը» վերտառությամբ 222-րդ հոդվածը բացառում է այնպիսի հարցերով դատավարության անցկացումը, որոնց հիմքում դրված են վերջնական և անփոփոխելի վճռով լուծված հարցերը, ներառյալ՝ պատասխանողի կողմից այնպիսի գործարքի անվավերության հայցի ներկայացնելը, որի հիմքով ներկայացվել էր սկզբնական հայցը³⁷: Իսկ, օրինակ՝ Ռուսաստանի դեպքում, թեև «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտը ներդրված չէ, սակայն դրա օգտին են խոսում դատական պրակտիկան և մասնագիտական շրջանակները³⁸:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի էությունն առավել ամբողջական բացահայտելու առումով պակաս կարևոր չէ գնահատել այն նաև պատասխանողի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխիքների համատեքստում: Այսպես, դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչներն ամրագրված են Սահմանադրության 63-րդ հոդվածում, ինչպես նաև Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արդար դատարձնության իրավունքի համատեքստում բազմից անդրադարձել է դատարանի

մատչելիության իրավունքին առնչվող հարցերին՝ ձևավորելով հետևյալ սկզբունքային դիրքորոշումները.

- այս իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանագրել որոշակի պահանջներով և չափանիշներով³⁹,

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վճառ հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաշափության ողամիտ հարաբերակցություն:»⁴⁰:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ անհրաժեշտ հավասարակշռության հարցը պարզելու համար էական է այն հանգամանքը, թե արդյոք պետության գործողությունների կամ անգրძության պատճառով տվյալ անձը ստիպված է եղել կրել անհամաշափ և ավելորդ քեզ: Համաշափության թեստի նպատակն է նախևառաջ պարզել, թե միջամտության արդյունքում ինչպես և ինչ չափով է սահմանափակվել դիմումատուի իրավունքը, և դրա արդյունքում ինչպիսի անբարենպաստ հետևանքներ են վրա հասել նրա համար: Հետագայում, այդ ազդեցությունը հավասարակշռվում է միջամտության հիմքում ընկած հանրային շահի կարևորությամբ: Նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյոք հնարավոր էր հասնել նույն նպատակին՝ դիմումատուի իրավունքների նկատմամբ նվազ միջամտությամբ, և արդյոք դիտարկվել է այդպիսի լուծման հնարավորությունը⁴¹:

Սահմանադրական դատարանը ևս մի շարք գործերով քննարկման առարկա է դարձրել արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատարանության իրավունքների երաշխավորման հիմնահարցերը և, ի թիվս այլ հիմնադրույթների, ձևակերպել հետևյալ սկզբունքային մուտեցումը. «Իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ ինպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նպատակայմանը պետք է լինի իրագործելի, ողամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:»⁴²:

Վերը շարադրված դիրքորոշումների լույսին ներքո առաջին հերթին պետք է արձանագրել, որ ՔԴՕ 140-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը ամենին չի նշանակում, որ հակընդեմ հայց հարուցելու իրավունքն օրենքով նախատեսված դեպքերում վերածվում է պարտականության, քանի որ դա կիակասեր դատական պաշտպանության միջնությունը և դատավարական իրավունքները սեփական հայեցողությամբ իրականացնելու տնօրինչականության սկզբունքով երաշխավորված հնարավորությանը: Միևնույն ժամանակ, քննարկվող ինստիտուտին առնչվող կարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ պատասխանողի դեմ սկզբնական հայցի հարուցման փաստով տեղի է ունենում պատասխանողի հայց հարուցելու իրավունքի փոխակերպում հակընդեմ հայց հարուցելու իրավունքի: Այսինքն՝ տվյալ դեպքում, որպես կանոն, պատասխանողի համապատասխան իրավունքների և օրինական շահերի հնարավոր պաշտպանության միջոց է դառնում միայն հակընդեմ հայցը, և հենց այդ կերպ է օրենսդիրը նախատեսում պատասխանողի համար կոնկրետ սուբյեկտիվ իրավունքի դատական պաշտպանության իրավունքի, ներառյալ՝ դատարանի մատչելիության իրավունքի իրականացման հնարավորությունը: Ընդ որում, պատասխանողի կողմից այս իրավունքը սահմանված կարգով չիրականացնելու դեպքում այն դիտարկվում է դատավարական անգրձությամբ (լուրջամբ) տնօրինված և հանգեցնում է պատասխանողի հայցի իրավունքի դատավարական կողմի, այսինքն՝ հայց հարուցելու իրավունքի դադարման: Այլ կերպ ասած՝ հակընդեմ հայց հարուցելու իրավունքի իրականացումից հրաժարումը տվյալ դեպքում ունենում է էստոպելային (անզերեն՝ estoppel) հետևանք՝⁴³:

Պետք է նշել, սակայն, որ պատասխանողի կողմից սկզբնական հակընդեմ հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառող հակընդեմ հայցի հարուցման իրավունքի իրականացումից հրաժարումը պատասխանողի համար հանգեցնում է բացասական հետևանքների միայն սկզբնական հայցի համապատասխան մասը բավարարող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նման եզրահանգումը բխում է ՔԴՕ 140-րդ հոդվածի 4-րդ մասի այն ձևակերպումից, որի համաձայն՝ համապատասխան հիմքով հակընդեմ հայց չներկայացնելը պատասխանողին գրկում է հետագայում այնպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառել սկզբնական հայցի բավարարումը: Այսինքն՝ չբավա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բարված սկզբնական հայցի դեպքում գործնականում անհնար է բացառել դրա բավարարումը: Բացի այդ, այսպիսի մոտեցումը համահունչ է «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի հետապնդած վերը շարադրված նպատակներին, քանի որ սկզբնական հայցի մերժման դեպքում առկա չէ այս ինստիտուտի միջոցով ապահովվող շահերի պաշտպանության խնդիր: Այս առումով հիշատակման է արժանի Կ. Կիբրնոնտի տեսակետը, որի համաձայն. «Այն պահից, երբ հայցվորը հաղթում է գործը կամ ստանում է իր օգտին վճիռ, պատախանողը, ընդհանուր առմամբ, չի կարող հանդես գալ այդ վճիռ վերանայմանը հանգեցնող նոր հայցերի հարուցմամբ:»⁴⁴:

«Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի վերլուծությունից բխում է նաև, որ այն պարունակում է պատախանողի իրավունքների պաշտպանության և մեկ երաշխիք: Մասնավորապես, այն բացառիկ դեպքերում, երբ հակընդդեմ հայցի հարուցման իրավունքի չիրականացումը եղել է ոչ թե պատախանողի կամահայտնության, այլ օրինակի բնույթ բնեցող խոշընդուների հետևանքը, ապա հետազոյւմ հայց հարուցելու արգելվն ինքնին կիրառելի չէ, և պատախանողը կարող է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը ձեռնամուխ լինել առանձին հայցի հարուցման միջոցով: Այս կերպ, օրենսդիրը հնարավոր իրողություններին առավել համակողմանի արձագանքելու նպատակով արդարացիորեն շեղվել է ընդհանուր կանոնից և սահմանել պատախանողի համապատասխան իրավունքի և օրինական շահի պաշտպանության լրացուցիչ հնարավորություն:

Նման պայմաններում ակնհայտ է, որ «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտը լիարժեքորեն երաշխավորում է նաև պատախանողի դատական պաշտպանության իրավունքը: Պատահական չէ, որ Սահմանադրական դատարանը, թեկուզ այլ հիմնավորումներով, ՔԴՕ 140-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող:⁴⁵

Այսպիսով, «պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի վերաբերյալ կարելի է կատարել հետևյալ եղանակումները.

1. «Պարտադիր» հակընդդեմ հայցի ինստիտուտի ներդրումը Հայաստանի Հանրապետության բաղադրային դատավարության իրավունքում առաջադիմական քայլ և կոչված է ապահովելու իրավական որոշակիության և *res judicata*, դատավարական խնայողության և կոնցենտրացիայի, դատավարական իրավունքների չարաշահման անրույշտարելիության սկզբունքների, դատական

ակտերի նախադատելիության հատկանիշի, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը:

2. «Պարտադիր» հակընդդեմ հայցը կարելի է բնորշել որպես բաղադրային դատավարության իրավունքի ինստիտուտ, որի ուժով անձի դեմ հայց հարուցվելու պահից այդ հայցի բավարարումը ամրողությամբ կամ մասնակիորեն բացառող հայց հարուցելու նրա իրավունքը փոխակերպվում է հակընդդեմ հայց հարուցվելու իրավունքի, որը սեփական հայեցողությամբ չիրականացվելու դեպքում դադարում է:

3. «Պարտադիր» հակընդդեմ հայցը պատասխանողի համար չի հանգեցնում բացառական հետևանքների և չի զրկում հետազոյւմ առանձին հայց հարուցելու հնարավորությունից, եթե սկզբնական հայցը չի բավարարվում:

4. Սկզբնական հայցով հայցվորի դեմ պատախանողի հայց հարուցելու իրավունքը դադարում է սկզբնական հայցը բավարարող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից, և այդ պահից՝ նա զրկվում է սկզբնական հայցի բավարարումը ամրողությամբ կամ մասնակիորեն բացառող առանձին հայց հարուցելու հնարավորությունից, եթե հայց հարուցելիս չի հմանավորի, որ հակընդդեմ հայց հարուցելու իրավունքի չիրականացումը պայմանավորված է եղել իրենից անկախ հանգամանքներով:

¹ Stéu, Aaron X. Fellmeth and Maurice Horwitz, Guide to Latin in International Law, 2009 (հասանելի է հետևյալ հղումով <https://www.oxfordreference.com/view/10.1093/acref/9780195369380.001.0001/acref-9780195369380-e-57?rskey=ctlory&result=36>, հղումը 19.04.2020թ.դրույամբ):

² Stéu, Коршунов Н.М. , Мареев Ю.Л. Гражданский процесс: учеб. пособие /под. ред. Н.М. Коршунова. – М.: МПСИ; Воронеж: МОДЭ , 2011, С. 192.

³ Stéu, Клайн Н.И. Встречный иск в суде и арбитраже. – М: Стагут, 2017, С. 60.

⁴ Ընդունվել է 09.02.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Stéu ՀՀՊՏ 2018:03:05/16 (1374) Հոդ. 208-րդ:

⁵ Stéu, орինակ՝ Абушенко Д.Б. и др. Гражданский процесс: учеб. /отв. ред. – В.В. Ярков. – 7-е изд., перераб. и доп. – М.: Волгера Клювер, 2009, С.299, Женетль С.З., Никифоров А.В. Гражданский процесс: Учебник. - 3-е изд.-М.: РИОР:ИНФРА-М, 2012, С. 108.

⁶ Stéu, Петкилев П.И. Встречный иск как форма защиты // Международный журнал прикладных наук и технологий «Integral». 2019, ?3.

⁷ Գտնում ենք, որ հաշվանցի նպատակով հարուցվող հակընդիմ հայցերին պաշտպանության գործառույթ վերագրել կարելի է միայն որոշակի վերապահմամբ, քանի որ այն հանգեցնում է ոչ թե սկզբնական հայցի իրավաչափության հերթմանը, այլ հիմնավոր սկզբնական հայցի քաղաքարման հետևանքների նվազեցմանը կամ քացանմանը:

⁸ Stéu, Арапов Н.Т. Встречный иск в советском гражданском процессуальном праве: автореф. дис. ... канд. юрид. наук. – Томск, 1965, С. 16-17.

⁹ Ընդունվել է 17.06.1998թ.: Ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Stéu ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

¹⁰ Stéu, орինակ՝ Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. դրկտոր, դրցեն Լ.Զ. Թարլուսյանի խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն - Եր.: «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» հրատ., էջ 252, Ելասօն Ա.Ա. Гражданский процесс: учебник для бакалавров / А.А. Еласов. - 4-е изд., перераб. и доп. - М.: Издательство Юрайт, 2012, էջ 266:

¹¹ Stéu, орինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ 3-1615 (Ա) քաղաքացիական գործով 12.12.2007թ., թիվ 3-248 (ՎԴ) քաղաքացիական գործով 10.09.2010թ., թիվ Գ-Դ/0144/02/10 քաղաքացիական գործով 23.03.2012թ., թիվ Լ-Դ/0201/02/10 քաղաքացիական գործով 18.07.2014թ., թիվ ԵՄԴ/0563/02/12 քաղաքացիական գործով 30.04.2015թ և թիվ Գ-Դ/0240/02/13 քաղաքացիական գործով 22.07.2016թ. դրույմները:

¹² Stéu, Яковлев В.Ф. От реформирования к совершенствованию судебно-арбитражной системы, укреплению независимости судебной власти // Вестник ВАС. 1998 N4, С. 20.

¹³ Stéu, Սեղյան Ս.Գ. Առաջին ասյանի դատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթը և որևէ կանոնադրության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում - Եր.: ԵՊՀ հրատ., 2020, էջեր 145-149:

¹⁴ Stéu, орինակ՝ Case of Brumărescu v. Romania (Application no. 28342/95), 28/10/1999, Case of Ryabykh v. Russia (Application no. 52854/99), 24/07/2003, Case of Nelyubin v. Russia (Application no. 14502/04), 02/11/2006:

¹⁵ Stéu, Case of Pravednaya v. Russia (Application no. 69529/01), 18/11/2004:

¹⁶ Stéu, Ion Deleanu, Tratat de procedură civilă, vol. II, Universul Juridic Publishing House, Bucharest, 2013, էջ 72, Kevin M. Clermont, Res Judicata as Requisite for Justice, 68 Rutgers U.L. Rev. 2016, էջ 1069:

¹⁷ Stéu, M. W. K. “Res Judicata: The Requirement of Identity of Parties.” University of Pennsylvania Law Review and American Law Register, vol. 91, no. 5, 1943, էջ 467, JSTOR (հասանելի է www.jstor.org/stable/3309225, 23.04.2020թ. դրույամբ):

¹⁸ Stéu, Kevin M. Clermont, Common-Law Compulsory Counterclaim Rule: Creating Effective and Elegant Res Judicata Doctrine, 79 NOTRE DAME L. REV. 2004, էջ 1746:

¹⁹ Stéu, Սարկոսյան Տ.Ա. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը քաղաքացիական դատավարությունում - Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 20:

²⁰ Ընդունվել է 06.12.2015թ.: Ուժի մեջ է մտել 22.12.2015թ.: Stéu ՀՀՊՏ 2015.12.21/Հասովկ թողարկում, հոդ. 1118-րդ:

²¹ Stéu, Սահմանադրական դատարանի 03.02.2009 թ. թիվ ՍԴ-787 դրույմը:

²² Stéu, Սեղյան Ս.Գ. Ապացույցները և ապացույցները քաղաքացիական դատավարությունում, Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 66-69:

²³ Stéu, Սահմանադրական դատարանի 27.12.2016թ. թիվ ՍԴ-1334 դրույմ:

²⁴ Stéu, Алесякин А.А. Принцип процессуальной экономии: за и против // Вестник Омского университета, Серия «Право», 2014, N3(40), Хатмуллин К.Ю. Принцип процессуальной экономии и право-временные средства его обеспечения // Вестник Омского университета, Серия «Право», 2014, N 3 (40):

²⁵ Stéu, Малюкина А.В. Идея концентрации гражданского процесса: общая характеристика // Вестник Московского университета. Серия 11. Право, N 2:

²⁶ Stéu, Սարկոսյան Տ.Ա. Հայցային վաղենության ինստիտուտը դատավարական խնայողության սկզբունքի համառերասում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադուսախոսական կազմի գլուխությունի նյութերի ժողովածու, 2(2) 2018, ԵՊՀ, գլխ. Խմբ. Գ.Ա. Ղազինյան, Երևան, 2019:

²⁷ Stéu, Սահմանադրական դատարանի 23.06.2016թ. թիվ ՍԴ-1289, 18.10.2016թ. թիվ ՍԴ-1315 և 18.06.2019թ. թիվ ՍԴ-1464 դրույմները:

²⁸ Stéu, Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/1035/02/08 քաղաքացիական գործով 27.12.2010թ. դրույմը:

²⁹ Stéu, R. W. Millar, Civil Procedure of the Trial Court in Historical Perspective, Law Center of New York University for the

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

National Conference of Judicial Councils. F. H. L. (1953), էջ 137:

³⁰ Stiu, R. C. Casad & K. M. Clermont, Resjudicata: A Handbook On Its Theory, Doctrine, And Practice, (2001), էջեր 111-112; R. H. Field Et Al., Materials For A Basic Course In Civil Procedure, էջեր 688-689 (8th Ed. 2003); David L. Shapiro, Civil Procedure: Preclusion In Civil Actions 39 (2001); Ch. A. Wright & A. R. Miller, Federal Practice And Procedure: Civil §1201, § 4414, էջեր 325-337 (3d ed. 2004), Restatement (Second) of Judgments § 22 (Am. Law Inst. 1982):

³¹ Stiu, Court of Appeals of the State of New York, Case of Schuylkill Fuel Corp. v. Nieberg Realty Corp., 250 N.Y. 304, 165 N.E. 456 (N.Y. 1929):

³² Stiu, ophibnial, Restatement (Second) of Judgments § 22(2)(a)-(b). (Am. Law Inst. 1982), K. M. Clermont, Common-Law Compulsory Counterclaim Rule: Creating Effective and Elegant Res Judicata Doctrine, 79 Notre Dame L. Rev. էջ 1749 (2004):

³³ Stiu, ophibnial, Clermont K. M., նշված աշխատությունը, էջեր 1752-1753, Restatement (Second) of Judgments § 22(2)(b). (Am. Law Inst. 1982):

³⁴ ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոնների 13 (a) կանոնն ինքնին չի նախատեսում դրանով սահմանված դատավարական գործողության՝ հավելնդեմ հայցի չափոցման իրավական հետևանքները: Սակայն այդպիսի հետևանքներն ուղղակիորեն բխեցվում են ամերիկյան իրավունքում հայտնի՝ անձի կողմից իր ունեցած իրավունքից կամովին և զիտակցարք հրաժարվելու դրվագինց (waiver or voluntary, intentional relinquishment of a known right) (ունի, օրինակ, H.C. Black, Black's law dictionary. Centennial edition (1881—1991). St. Paul, Minn, West Publishing Co, 1991. էջ 1092, C. P. Campbell, "The Doctrine of Waiver." Michigan Law Review 3, no. 1 (1904), էջեր 9-17) և դրան այլմ, ընդունելի են նաև դատավարական պարակնելայում:

³⁵ Stiu, Clermont K. M., նշված աշխատությունը, էջ 1749:

³⁶ Stiu, Restatement (Second) of Judgments « 22(2)(a)-(b). (Am. Law Inst. 1982), comment F:

³⁷ Հասանելի է հետևյալ հղումը http://world.moleg.go.kr/cms/commonDown.do?DLD_CFM_NO=6F4FH6SM5RCK8BO3MJ12&FL_SEQ=11305 հղումը՝ 25.04.2020թ. դրույթ:

³⁸ Stiu, ophibnial` Клейманов А.Я. Об установлении в российском гражданском и арбитражном процессе последствий отказа ответчика от права на предъявление встречного иска // Закон. - М.: Закон, 2011, N 4.

³⁹ Stiu, ophibnial` Case of Luordo v. Italy (Application no. 32190/96), 17/10/2003, Case of Staroszczyk v. Poland (Application no. 59519/00), 09/07/2007 և Case of Stanev v. Bulgaria (Application no. 36760/06), 17/12/2012:

⁴⁰ Stiu, ophibnial` Case of Khalfaoui v. France (Application no. 34791/97), 14/03/2000 և Case of Marini v. Albania (Application no. 3738/02), 18/12/2007:

⁴¹ Stiu, ophibnial` Vaskrsic v. Slovenia (Application no. 31371/12), 25/04/2017:

⁴² Stiu, ophibnial` Սահմանադրական դատարանի 03.03.2015թ. թիվ U-1192 և 12.07.2016թ. թիվ 1293 որոշումները:

⁴³ Իրավունքի իրավանացումից հրաժարվելու և էստոպելի կանոնի մասին առավել մանրամասն տես՝ Ղամբարյան Ա., Իրավունքից հրաժարվելու քրեալատավարական միջամտության հարցերը, Եր.: «Տիգրան Սեծ» հրատ., 2018:

⁴⁴ Stiu, Clermont K. M., նշված աշխատությունը, էջ 1746:

⁴⁵ Stiu, Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. թիվ U-1464 որոշումը:

Օգուազործված գրականության ցանկ

1. Aaron X. Fellmeth and Maurice Horwitz, Guide to Latin in International Law, 2009 (հասանելի է հետևյալ հղումով <https://www.oxfordreference.com/view/10.1093/acref/9780195369380.001.0001/acref-9780195369380-e-57?rskey=ctlory&result=36>, հղումը 19.04.2020թ. դրույթ):
2. Коршунов Н.М., Мареев Ю.Л. Гражданский процесс: учеб. пособие /под. ред. Н.М. Коршунова. – М.: МПСИ; Воронеж: МОДЭ , 2011, 431 էջ:
3. Клейн Н.И. Встречный иск в суде и арбитраже. – М: Статут, 2017, 368 էջ:
4. Абушенко Д.Б. и др. Гражданский процесс: учеб. /отв. ред. - В.В. Ярков. - 7-е изд., перераб. и доп. - М.: Волггерс Клювер, 2009, 702 էջ:
5. Женетль С.З., Никифоров А.В. Гражданский процесс: Учебник. - 3-е изд.-М.: РИОР:ИНФРА-М, 2012, 432 էջ:
6. Петкилев П.И. Встречный иск как форма защиты // Международный журнал прикладных наук и технологий «Integral». 2019, N 3, 6 էջ:
7. Арапов Н.Т. Встречный иск в советском гражданском процессуальном праве: автореф. дис. ... канд. юрид. наук. – Томск, 1965, 25 էջ:
8. Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. դրվագություն Լ.Զ. Թաղեկույանի Խմբագրությամբ): - Չորրորդ հրատարակություն - Եր.: «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻՑԻ» հրատ., 696 էջ:
9. Власов А.А. Гражданский процесс: учебник для бакалавров / А.А. Власов. - 4-е изд., перераб. и доп. - М.: Издательство Юрайт, 2012, 548 էջ:
10. Яковлев В.Ф. От реформирования к совершенствованию судебно-арбитражной системы, укреплению независимости судебной власти // Вестник ВАС. 1998. N 4.
11. Սեղրյան Ս.Գ. Առաջին ասյանի դատարանի դատավարական ակտերի իրավաբանական բնույթը և որակական կայունության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում - Եր.: ԵՊՀ հրատ., 2020, 194 էջ:
12. Ion Deleanu, Tratat de procedură civilă, vol. II, Universul Juridic Publishing House, Bucharest, 2013:
13. Kevin M. Clermont, Res Judicata as Requisite for Justice, 68 Rutgers U.L. Rev. 2016, SSRN Electronic Journal. 68.

- 10.2139/ssrn.2614433:
14. M. W. K. "Res Judicata: The Requirement of Identity of Parties." University of Pennsylvania Law Review and American Law Register, vol. 91, no. 5, 1943, 6 էջ:
 15. Kevin M. Clermont, Common-Law Compulsory Counterclaim Rule: Creating Effective and Elegant Res Judicata Doctrine, 79 NOTRE DAME L. REV. 2004, 17 էջ:
 16. Մարկոսյան Տ.Ա. Նոր երևան Եկած հանգամանքներով դատական ակտերի վերամայման վարույթը քաղաքացիական դատավարությունում - Եր.: ԵՊՀ հրատ., 2013, 208 էջ:
 17. Ստեղյան Ս.Գ. Ապացուցումը և ապացույցները քաղաքացիական դատավարությունում, Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, 341 էջ:
 18. Ալեքսին Ա.Ա. Принцип процессуальной экономии: за и против // Вестник Омского университета, Серия «Право», 2014, N 3(40), 7 էջ:
 19. Խաղուլին Կ.Ю. Принцип процессуальной экономии и право-временные средства его обеспечения // Вестник Омского университета, Серия «Право», 2014, N 3 (40), 5 էջ:
 20. Մալոկина А.В. Идея концентрации гражданского процесса: общая характеристика // Вестник Московского университета. Серия 11. Право, N 2, 9 էջ:
 21. Մարկոսյան Տ.Ա. Հայցային վաղեմուրյան իմստիտուտը դատավարական խնայողության սկզբունքի համառեսուսում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախուսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2(2) 2018, ԵՊՀ, գլխ. Խմբ. Գ.Ա. Ղազինյան, Երևան, 2019, 18 էջ:
 22. R. W. Millar, Civil Procedure of the Trial Court in Historical Perspective, Law Center of New York University for the National Conference of Judicial Councils. F. H. L. (1953), 534 էջ:
 23. R. C. Casad & K. M. Clermont, Resjudicata: A Handbook on Its Theory, Doctrine, And Practice, (2001), 296 էջ:
 24. R. H. Field Et Al., Materials For A Basic Course in Cml Procedure (8th Ed. 2003):
 25. David L. Shapiro, Civil Procedure: Preclusion in Civil Actions 39 (2001), 178 էջ:
 26. Ch. A. Wright & A. R. Miller, Federal Practice And Procedure: ClivL §1201, § 4414 (3d ed. 2004), 37 էջ:
 27. Court of Appeals of the State of New York, Case of Schuylkill Fuel Corp. v. Nieberg Realty Corp., 250 N.Y. 304, 165 N.E. 456 (N.Y. 1929):
 28. Restatement (Second) of Judgments (Am. Law Inst. 1982):
 29. K. M. Clermont, Common-Law Compulsory Counterclaim Rule: Creating Effective and Elegant Res Judicata Doctrine, 79 Notre Dame L. Rev. (2004), 17 էջ:
 30. H.C. Black, Black's law dictionary.Centennial edition (1881—1991). St. Paul, Minn, West Publishing Co, 1991:
 31. C. P. Campbell, "The Doctrine of Waiver" Michigan Law Review 3, no. 1 (1904), 18 էջ:
 32. Клейманов А.Я. Об установлении в российском гражданском и арбитражном процессе последствий отказа ответчика от права на предъявление встречного иска // Закон. - М.: Закон, 2011, N 4, 10 էջ:
 33. Ղազարյան Ա., Իրավունիքի հրաժարվելը և քրեալսատավարական միջամտության հարցերը, Եր.: «Ժիզրան Սեծ» հրատ., 2018, 544 էջ:
 34. Case of Brumărescu v. Romania (Application no. 28342/95), 28/10/1999:
 35. Case of Ryabykh v. Russia (Application no. 52854/99), 24/07/2003:
 36. Case of Nelyubin v. Russia (Application no. 14502/04), 02/11/2006:
 37. Case of Pravednaya v. Russia (Application no. 69529/01), 18/11/2004:
 38. Case of Luordo v. Italy (Application no. 32190/96), 17/10/2003:
 39. Case of Staroszczyk v. Poland (Application no. 59519/00), 09/07/2007:
 40. Case of Stanev v. Bulgaria (Application no. 36760/06), 17/12/2012:
 41. Case of Khalfaoui v. France (Application no. 34791/97), 14/03/2000:
 42. Case of Marini v. Albania (Application no. 3738/02), 18/12/2007:
 43. Vaskrsić v. Slovenia (Application no. 31371/12), 25/04/2017:
 44. Սահմանադրական դատարանի 03.02.2009 թիվ ՍԴ-787 որոշումը:
 45. Սահմանադրական դատարանի 27.12.2016թ. թիվ ՍԴ-1334 որոշում:
 46. Սահմանադրական դատարանի 23.2016թ. թիվ ՍԴ-1289 որոշումը:
 47. Սահմանադրական դատարանի 18.1.2016թ. թիվ ՍԴ-1315 որոշումը:
 48. Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. թիվ ՍԴ-1464 որոշումը:
 49. Սահմանադրական դատարանի 03.03.2015թ. թիվ ՍԴ-1192 որոշումը:
 50. Սահմանադրական դատարանի 12.07.2016թ. թիվ 1293 որոշումը:
 51. Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. թիվ ՍԴ-1464 որոշումը:
 52. Վճռաբեկ դատարանի թիվ 3-1615 (Ա) քաղաքացիական գործով 12.12.2007թ. որոշումը:
 53. Վճռաբեկ դատարանի թիվ 3-248 (ՎԴ) քաղաքացիական գործով 10.09.2010թ. որոշումը:
 54. Վճռաբեկ դատարանի թիվ Գ-Դ-1/0144/02/10 քաղաքացիական գործով 23.03.2012թ. որոշումը:
 55. Վճռաբեկ դատարանի թիվ Լ-Դ-4/0201/02/10 քաղաքացիական գործով 18.07.2014թ. որոշումը:
 56. Վճռաբեկ դատարանի թիվ ԵՍԴ-0563/02/12 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշումը:
 57. Վճռաբեկ դատարանի թիվ Գ-Դ-0240/02/13 քաղաքացիական գործով 22.07.2016թ. որոշումը:
 58. Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐՍԴ-1035/02/08 քաղաքացիական գործով 27.12.2010թ. որոշումը:

ԱՐԴԱՐԱԴԱՒՅՆՅՈՒՆ

Сергей Мегрян

Главный принудительный исполнитель РА.

Доцент кафедры гражданской процедуры юридического факультета ЕГУ,
кандидат юридических наук

Тигран Маркосян

Член государственной комиссии РА по защите экономической конкуренции.

Лектор-координатор консультационной
службы студентов юридического факультета ЕГУ,
кандидат юридических наук

Элина Гегамян

Ассистент главного принудительного исполнителя РА

РЕЗЮМЕ

Правовой характер института “принудительного” встречного иска и его онтологические основы в гражданском процессе

Институт “принудительного” встречного иска является одним из новаций нового гражданско-процессуального законодательства РА. Основы для установления и сущность обсужденного института анализируются в этой научной работе, в контексте отечественных и зарубежных теоретических источников, законодательства Республики Армения и других стран, правовых позиций ЕСПЧ, Конституционного суда, Кассационного суда, практики судов США. Авторы в результате делают вывод о том, что предъявление встречного иска, исключающего удовлетворение первоначального иска, не является обязанностью для ответчика, а правом для него, осуществление которого законодателем, с целью осуществления принципов правовой определенности, res judicata, процедурной экономии, концентрации и недопустимости злоупотребления proceduralными правами и для обеспечения права сторон на эффективную судебную защиту, разрешается, как правило, исключительно путем подачи встречного иска.

Ключевые слова: “принудительный” встречный иск, compulsory counterclaim, estoppel, правовая определенность, res judicata, процедурная экономия, концентрация.

Sergey Meghryan

Chief Compulsory Enforcement Officer of the Republic of Armenia.

Associate Professor of the Chair of Civil Procedure, Yerevan State University, Faculty of Law,
Candidate of Legal Sciences

Tigran Markosyan

Member of the State Commission for the Protection of Economic Competition of RA.

Lecturer-Coordinator, Student Law Counselor Center, Yerevan State University,
Candidate of Legal Sciences

Elina Geghamyan

Assistant of the Chief Compulsory Enforcement Officer of the Republic of Armenia

SUMMARY

The legal nature of the “compulsory” counterclaim institute and its ontological foundations in civil procedure

The “compulsory” counterclaim institute is one of the novelties of the new civil procedural legislation of the RA. The grounds for the establishment and the nature of the discussed institute are analyzed in this scientific paper in the context of domestic and foreign theoretical sources, procedural laws of the Republic of Armenia and other states, legal positions of the ECHR, the Constitutional court, the Cassation court and the practice of the US courts. In the result, authors conclude that the pleading of counterclaim, which completely or partially excludes the initial claim's satisfaction, is not the defendants' obligation but a right, the exercise of which, according to the legislator, as a general rule, can be implemented exclusively by filing a counterclaim for the exercise of the principles of legal certainty, res judicata, judicial economy, the inadmissibility of abuse of procedural rights and concentration and to guarantee the right of the parties to effective judicial protection.

Key words: “compulsory” counterclaim, estoppel, legal certainty, res judicata, judicial economy, concentration.

Բնագիրը ներկայացվել է 27.04.2020թ.

Հնդրութել է տպագրության 29.04.2020թ.

Հողվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
վաստակավոր իրավաբան Ա. Ղամբարյանը

ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԿՈՂՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է կոռպերատիվների գործունեության սկզբունքներին. նկարագրված է սկզբունքների իրավական բնույթը:

Աշխատանքում ներկայացված են Եվրոպական միուրյունում գործող կոռպերատիվ սկզբունքները և ԱՄՆ-ում դրանց առկա կարգավորումները: Ուսումնասիրվում են նաև սկզբունքների տեսակները և դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Հաշվի առնելով սկզբունքների օրենսդրական ամրագրման կարևորությունը՝ առաջարկվում է օրենսդրության կոռպերատիվների միջազգային դաշինքի կողմից ընդունված սկզբունքների և դրանց տեսակների հասկացությունը սահմանել՝ որպես ներպետական իրավունքի աղբյուր:

Հիմնարարեր-կոռպերատիվների գործունեության սկզբունքներ, Կոռպերատիվների միջազգային դաշինք, բաց և ինքնակամ անդամություն, կոռպերատիվ արժեքներ:

Կոռպերատիվների գործունեությունը հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են՝ անդամների կողմից միմյանց աջակցությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, անաշառությունը, սոցիալական պատասխանատվությունը, միասնությունը: Հենց այդ արժեքների հիման վրա ել ձևափորվել են կոռպերատիվների գործունեության սկզբունքները:

Կոռպերատիվների սկզբունքները (այսուհետ նաև՝ Ակզրունքներ) ուղեցույց են, որոնց միջոցով ապահովվում է կոռպերատիվ արժեքների գործնական կիրարկում²: Ակզրունքները լավագույն արտացոլումն են՝ կոռպերատիվներին անդամության, դրանց կառավարման, համագործակցության, անդամների միջև եկամուտների բաշխման բնույթի³:

Կոռպերատիվ սկզբունքները առաջացել են շատ վաղ ժամանակներից, երբ ստեղծվել են առաջին՝ Ռոշդելյան կոռպերատիվները: 1860 թվականին սահմանվեցին առաջին սկզբունքները: Չնայած սկզբունքները մեծ զարգացում են ապրել, այնուամենայնիվ, նրանք չեն կորցրել իրենց բնորոշ սկզբնական և հիմնական հատկությունները:

Սկզբունքներն անցել են զարգացման և կատարելագործման երկարատև ժամանակահատված: Տարբեր երկրներում ընդունվել են տարբեր տեսակի կոռպերատիվների գործունեության սկզբունքներ: Այսպես՝ Մեծ Բրիտանիայում՝ սպառողական, Ֆրանսիայում՝ արտադրական, Գերմանիայում՝ վարկային-խնայողական կոռպերատիվների սկզբունքներ և այլն: Կոռպերատիվների զարգացումը և տարածումը ստիպեց մշակել և ընդունել նոր սկզբունքներ: Կոռպերատիվների միջազգային դաշինքի ստեղծումից հետո այդ սկզբունքները վե-

րանայվեցին: Դաշինքը սկզբունքները նախ ընդունեց 1937 թվականին, ապա՝ 1966-ին, իսկ սկզբունքների վերջնական տարբերակը ընդունվեց 1995 թվականին, որը գործում է մինչ օրս: Ի սկզբանե գործել են 8 սկզբունքներ, որոնք 1995թ-ին Կոռպերատիվների միջազգային դաշինքի կողմից խմբագրվելու և ընդունվելուց հետո դարձան յոթը:

Սկզբունքների ընդունումը նպատակ ուներ սահմանել կոռպերատիվների միասնական բնույթը ու հասկացությունը: Ներկայումս Եվրոպական միուրյունում ուսումնասիրություններ են կատարվում Սպրունքները կատարելագործելու և ԵՄ-ում կոռպերատիվների նոր սկզբունքներ ընդունելու համար⁴: Աշխատանքի միջազգային դաշինքի կողմից ինկորպորացիայի ենթարկվելուց հետո Կոռպերատիվների միջազգային դաշինքի կողմից ընդունված կոռպերատիվ սկզբունքները դարձան նաև կոռպերատիվ իրավունքի պաշտոնական աղբյուր: Այսօր ել կան երկրներ, որոնք իրենց ազգային օրենսդրությամբ ամրագրում են կոռպերատիվների սկզբունքները:

Կոռպերատիվ սկզբունքների բազում բնորոշումներից առավել հաջողված ենք համարում հետևյալը:

«Ակզրունքները՝ կոռպերատիվի անդամի, նրա մարմինների գործունեության օրինակելի ձևերն են: Ակզրունքները՝ կոռպերատիվների անդամության, դրանց կառավարման, համագործակցության, անդամների միջև եկամուտների բաշխման կարգի ելակետային դրույթներն են»:

Ինչպես ցույց է տալիս զարգացած երկրների փորձը՝ կոռպերատիվ սկզբունքների ամրագրումը ունի նաև կարևոր գործնական նշանակություն,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մասնավորապես.

1. Ակզրունքները հաշվի են առնում կոռագերատիվների մասին օրենսդրության, ինչպես նաև՝ կոռագերատիվների կանոնադրությունը մշակելիս, քանի որ կոռագերատիվ սկզբունքներից անգամ մեկի խախտումը կարող է հանգեցնել ամբողջ կոռագերատիվ համակարգի փլուզման:

2. Կոռագերատիվները իրենց գործունեությունը իրականացնում են կոռագերատիվ սկզբունքներին համապատասխան, որոնք կոռագերատիվների համար համարվում են «համաշխարհային ստանդարտներ»:

3. Ակզրունքների շնորհիվ է, որ կոռագերատիվները ձեռք են բերում յուրօրինակ կազմակերպարավական կառուցվածք :

Կոռագերատիվների միջազգային դաշինքի կողմից ընդունված և բազմաթիվ երկրների հմայիմենտացված սկզբունքները հետևյալներն են.

1. **Բաց և կամավոր անդամակցություն.** Կոռագերատիվները կամավոր միավորումներ են, քանի որ կոռագերատիվները անդամակցելու համար ովագություն ունենալ կամավոր է և ազատ: Կոռագերատիվի անդամ կարող է դառնալ ցանկացած անձ, ով՝ կոռագերատիվին անդամակցելով, ցանկանում է ունենալ իրավունքներ և պատասխանատվություն կրել: Անձին կոռագերատիվ անդամագրելիս՝ արգելվում է խորականություն՝ սեռային, սոցիալական, ռասսայական, կրոնական և քաղաքական նկատառություն: Կոռագերատիվը համարվում է կենսունակ միայն այն պարագայում, եթե ստանում է իր անդամների աջակցությունը, և վերջիններս շահագրգություն են նոր անդամներ ներգրավելու գործում: Հենց անդամների ակտիվությունն է կանխորշուրություն կոռագերատիվի հաջողությունը⁹: Սակայն, քանի որ կոռագերատիվները չենքաղաքացիություն, որ կոռագերատիվը կարող է ներգրավել անսահմանափակ թվով անդամների. յուրաքանչյուր կոռագերատիվը, իր ստեղծման պահից, պետք է գիտակցի իր հնարավոր պոտենցիալը¹⁰:

2. **Կոռագերատիվների կառավարումը ժողովրդավարական հիմունքներով.** Կոռագերատիվները ժողովրդավարական կազմակերպություններ են, որոնք ղեկավարվում են իրենց անդամների կողմից: Կոռագերատիվի յուրաքանչյուր անդամ ակտիվություն մասնակցում է կոռագերատիվի կառավարմանը և որոշումների կայացմանը: Կոռագերատիվի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է քոլոր անդամների առաջ: Կոռագերատիվներում գործում է «մեկ անդամ՝ մեկ ձայն» սկզբունքը, կառավարման

մարմինները պատասխանատու են քոլոր անդամների առաջ: Իհարկե, բիզնես գործունեությամբ գրաղվող կազմակերպությունում գրեթե անհնար է քոլոր անդամների համատեղ ղեկավարումը, սակայն կոռագերատիվի կառավարման մողելի յուրահատկությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր անդամ պետք է իր մասնակցությունը ունենարիզնեսի կառավարողների և կոռագերատիվի անունից հանդես գալու իրավասությամբ օժտված անձանց ընտրության գործում¹¹: Այդ պատճառով էլ կոռագերատիվի անդամների իրավունքները հավասար են կառավարման մարմին ընտրելու, կոռագերատիվի գործունեության նպատակները սահմանելու և փոխելու, կառավարման մարմինների գործունեությունը վերահսկելու գործում: Այս սկզբունքը իր լավագույն արտացոլումն է ունեցել կոռագերատիվի անդամների ընդհանուր ժողովում, որտեղ յուրաքանչյուր անդամ, անկախ իր մասնակցության չափից և ձևից ունեցած մեկ ձայնի իրավունքը:

3. **Անդամների տնտեսական մասնակցությունը.** Անդամները կատարում են վճարումներ կոռագերատիվին անդամակցելու, կոռագերատիվների գործունեության, ինչպես նաև տնտեսական հիմք ապահովելու համար՝ փայավճար (ընդգծումը մերն է): Կոռագերատիվի եկամուտը բաշխվում է անդամների միջև՝ ըստ աշխատանքային մասնակցության: Անդամների ստացած շահույթի մի մասը մնում է կոռագերատիվի ներսում, որը հիմնականում ուղղվում է անրաժանելի ֆոնդերի ավելացմանը:

4. **Ինքնակառավարում և անկախություն.** Կոռագերատիվները ինքնակար կազմակերպություններ են, որոնք կառավարվում են իրենց անդամների կողմից: Եթե կոռագերատիվները համագործակցում են այլ կազմակերպությունների հետ, այդ թվում՝ պետության, կամ ներգրավում են ֆինանսական միջոցներ արտաքին աղբյուրներից, ապա դա անում են՝ առանց իրենց անկախությունը խարարելու¹²: Այդ իսկ պատճառով էլ Կոռագերատիվների միջազգային դաշինքը նշել է, որ կոռագերատիվի կայացման գործում 4-րդ՝ ինքնակառավարման և անկախության սկզբունքի պահպանումը թերևս ամենակարևորն է¹³:

5. **Կրթության, վերապատրաստման և տեղեկատվության ապահովում.** Կոռագերատիվները ապահովում են իրենց անդամների կրթությունը և վերապատրաստումը, կոռագերատիվի գործունեության մասին տեղեկատվությունը պետք է հասանելի լինի իր անդամներին: Տեղեկատվության ապահովումը իրենից ենթադրում է նաև կոռագերատիվի առավելությունների և դրական կողմերի ներկայացում հասարակությանը, հատկապես՝ երիտասարդդ-

ներին: Կրթության ապահովումը իրենից ենթադրում է նաև կոռապերատիվի նոր անդամների ուսուցումը, վերջիններիս իրավունքները և պարտականությունները պատշաճ ներկայացնելը, ինչպես նաև թիմային մտածելակերպի սերմանումը կոռապերատիվների անդամների մեջ: Կոռապերատիվի կառավարման մարմիններում ներգրավված անդամները պետք է իրազեկված լինեն այլ անդամների առջև ունեցած իրենց պարտավորությունների մասին: Հարկ է նկատել նաև, որ տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը նախատեսված է Տնտեսական հանագործակցության և զարգացման կազմակերպության կողմից ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքների ցանկում¹⁴: Ընդ որում, տեղեկատվությունը պետք է ներառի ինչպես ֆինանսական, այնպես էլ ընկերության նպատակների, մասնակիցների իրավունքների և այլնի մասին:

6. Կոռապերատիվների համագործակցություն. Իր անդամների կարիքները լավագույնս բավարարելու և կոռապերացիայի օրգագումանը նպաստելու համար՝ կոռապերատիվները պարտավոր են համագործակցել միմյանց հետ շրջանային, տարածաշրջանային, ազգային և միջազգային մակարդակներում: Կոռապերատիվները հաճախ միավորում են՝ ստեղծելով միություններ, որոնք գրականության մեջ անվանվում են կոռապերատիվների կոռապերատիվներ, կամ՝ երկրորդ մակարդակի կոռապերատիվներ: Այսինքն՝ կոռապերատիվ, որին անդամակցում են ֆիզիկական անձինք և առնվազն մեկ իրավաբանական անձ՝ կոռապերատիվ: Իսկ կոռապերատիվի համագործակցության երրորդ մակարդակն իրենից ենթադրում է առնվազն մեկ երկրորդ մակարդակի կոռապերատիվի ներգրավում: Կոռապերատիվների համագործակցությունը բույլ է տալիս առավել արդյունավետ ներկայացնելու անդամների շահերը համայնքային և պետական մակարդակում՝ միևնույն ժամանակ կոռապերացիան դարձնելով ավելի ուժեղ:

7. Հզգատարությունը համայնքի հանդեպ. Իր անդամների կարիքները բավարարելուց զատ կոռապերատիվները քայլեր են ծեռնարկում համայնքում տնտեսության զարգացման, աշխատատեղերի ստեղծման համար, ինչն էլ ավելի է ընդգծում դրանց սոցիալական բնույթը: Կոռապերատիվների անդամները իրենք են որդոշում ինչպես և ինչ չափով կոռապերատիվի միջոցները ուղղել համայնքային խնդիրների կարգավորմանը: Ցոքերորդ սկզբունքը՝ որպես սկզբունք իրավական ամրագրում ստանալուց բացի, իր անողողակի արտացոլումն է գտնել նաև մի շարք երկրների օրենսդրություններում:

Այսպես՝ Գերմանիայի օրենքը սահմանում է, որ կոռապերատիվի լուծարումից հետո նրա միջոցները ուղղվում են նրա պարտավորությունները կատարելուն, իսկ մնացած միջոցները՝ այն համայնքի զարգացմանը, որտեղ գործունեություն է իրականացնում տվյալ կոռապերատիվը¹⁵: «Գյուղատնտեսական կոռապերատիվների մասին» ՀՀ օրենքը ևս նախատեսում է այդպիսի կարգավորում, մասնավորապես, Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ կոռապերատիվի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո անբաժանելի ֆոնից միջոցները ուղղվում են համայնքի զարգացմանը:

Ամփոփելով վերը նշված յոթ սկզբունքների նկարագիրը՝ հարկ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, թե կոռապերատիվների գործունեության սկզբունքները լիովին պահպանելը, հատկապես սկզբունական շրջանում, գրեթե անհնարինությունը է: Սակայն, սկզբունքների պահպանումը պետք է ուղենիշ լինի յուրաքանչյուր կոռապերատիվի համար, որպես իր նպատակին հասնելու ճանապարհ, և հենց սկզբունքների ամբողջությունն ունի պահպանումն է թույլ տալիս ընդգծել կոռապերատիվների տարրերությունը այլ իրավաբանական անձանցից¹⁶:

Կոռապերատիվ սկզբունքների ամերիկյան մոդելը մի փոքր տարրերվում է Կոռապերատիվների միջազգային դաշինքի կողմից ընդունված սկզբունքներից: Ամերիկյան սկզբունքները հետևյալն են:

1. Օգտագործող-սեփականատեր սկզբունք. Կոռապերատիվները դեկավարվում են օգտագործողների կողմից:

2. Օգտագործող-դեկավարող սկզբունք. Կոռապերատիվները դեկավարվում են այն անձանց կողմից, ովքեր օգտագործում են այն:

3. Օգտագործող-շահառող սկզբունք. Կոռապերատիվների ստացված շահույթը բաշխվում է օգտագործողների (անդամների) միջև՝ ըստ մասնակցության շափի:

Միացյալ Նահանգներում առանձնացված են նաև սկզբունքներ, որոնք կապված են կոռապերատիվների գործարարական (բիզնես) գործունեության հետ: Այդ սկզբունքները հետևյալն են:

Բնքնարժեքային գին. Գյուղատնտեսական կոռապերատիվն իր անդամներին գյուղատնտեսական ապրանքներ է մատակարարում ինքնարժեքով, գումարած «մարժա» (վերադիր) սկզբունքով, որը ծածկում է կոռապերատիվի գործառնական ծախսերը և ապահովում է ավելցուկ: Ավելցուկը օգտագործվում է անդամներին պարզեավճարներ տալու և որոշ չնախատեսված ծախսերի համար:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ավելցուկի միայն մի մասը կարող է դիտվել որպես շահույթ: Շահույթը, որպես կանոն, պահպում է պահուստային ֆոնդերում կոռպերատիվի ապագա ծրագրերի իրականացման համար, ինչը շատ կարևոր է, քանի որ զարգացող երկրներում ստեղծվող կոռպերատիվները հաճախ դժվարանում են ֆինանսական ռեսուրսներ հայրային հարցում:

Համամասնության սկզբունքը. Այս սկզբունքը գործում է նոր սերնդի այն կոռպերատիվներում, որտեղ «մեկ անդամ՝ մեկ ձայն» սկզբունքը փոխարինվել է որոշակի ներդրումների ավելացման հետ, համամասնորեն ձայները ավելացնելու դրույթով, ինչը դրսերդում է թե՛ կառավարչական որոշումների ընդունման, թե՛ օգուտների բաշխման հարցում: «Մեկ անդամ՝ մեկ ձայն» սկզբունքը կարող է խոչընդոտ հանդիսանալ առանձին ֆերմերների և ներդրողների կողմից կոռպերատիվին անդամագրվելու համար, քանի որ նրանց նյութական մասնակցությունն ավելի շատ է, հետևաբար, ավելի շատ է նաև ռիսկը: Կարծում ենք, որ նման մոտեցման օրենսդրական ամրագրումը մեր իրավական համակարգում կննպաստի գյուղատնտեսական կոռպերատիվներում ներդրումների ներգրավմանը: Սակայն, մեր կարծիքով, անհրաժեշտ է օրենքով սահմանել նաև առավելագույն ձայների քանակ (օրինակ՝ ընդհանուր ձայների միջև 25 տոկոսը՝ կախված ֆինանսական մասնակցությունից), որպեսզի չխարսխվի կոռպերատիվների էությունը, ինչպես նաև շունահարվեն կոռպերատիվի մյուս անդամների իրավունքները: Այսպիսի անդամները պետք է ունենան փոխկապակցված անձի կարգավիճակ:

Ինքնափինանսավորման սկզբունք. Կոռպերատիվները, որպես կանոն, իրենք են ծածկում իրենց վնասները և ֆինանսավորում զարգացման ծախսերը¹⁸:

Անփոփելով վերոգրյալ՝ կարծում ենք, որ մեր օրենսդրությամբ ևս անհրաժեշտ է ամրագրել Կոռպերատիվ միջազգային դաշինքի կողմից ընդունված կոռպերատիվ 7 սկզբունքները, ինչը կունենա կարևոր գիտագործնական նշանակություն, մասնավորապես՝ սկզբունքների իրավական ամրագրումը: Այն կարևոր նշանակություն կունենա որպես իրավունքի աղբյուր և կոռպերատիվներին վերաբերող իրավական ակտերը մշակելիս սկզբունքները կը նդունվեն որպես ելակետ իրավական նորմերի մշակման գործում: Սկզբունքների իրավական ամրագրումը կը նդգծի կոռպերատիվների յուրօրինակությունը այլ իրավաբանական անձանց շրջանակում: Սկզբունքների ամրագրման գործնական նշանակությունը կկայանա նրանում, որ կոռպերատիվները ստիպված կլինեն իրենց գործունեության

ընթացքում առաջնորդվել Սկզբունքներով, ինչն է կննպաստի կոռպերացիայի զարգացմանը՝ վերջինիս միջազգային չափանիշներին և ոգուն համահունչ: Սկզբունքների գործնական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ դրանք կոչված են աջակցելու կոռպերատիվների կառավարմանը իրավական կարգավորման ինստիտուցիոնալ շրջանակների գնահատման և կատարելագործման հարցում քաղաքականություն մշակող պատասխանատվածություն՝ նպատակ ունենալով ապահովել տնտեսական արդյունավետություն, կայուն աճ և ֆինանսական կայունություն: Սկզբունքները կոչված են ապահովելու՝ «զապունների և հակակշիռների» համակարգի արդյունավետ կիրարկումը:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկվում է. «Գյուղատնտեսական կոռպերատիվների մասին» ՀՀ օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 4.1-րդ հոդվածով.

«1. Սկզբունքը կոռպերատիվի անդամի, նրա մարմինների գործունեության օրինակելի ձևն է: Սկզբունքները կոռպերատիվների անդամության, դրանց կառավարման, համագործակցության, անդամների միջև եկամուտների բաշխման կարգի ելակետային դրույթներն են:

2. Կոռպերատիվի գործունեության սկզբունքներն են.

1. բաց և կամավոր անդամությունը,

2. կոռպերատիվների կառավարումը ժողովրդական հիմունքներով,

3. անդամների տնտեսական մասնակցությունը,

4. ինքնակառավարումը և անկախությունը,

5. կրթության, վերապատրաստման և տեղեկատվության ապահովումը,

6. կոռպերատիվների համագործակցությունը միմյանց միջև,

7. հոգատարությունը համայնքի հանդեպ:»:

- ¹ Տե՛ս, The U.S. Department of Agriculture (USDA) Research Report 231, Comparing Cooperative Principles of the U.S. Department of Agriculture and the International Cooperative Alliance, June 2014, էջ 4:
- ² Տե՛ս, Guy Tchami “Handbook on Cooperatives for use by Workers’ Organizations” © International Labour Organization 2007.
- ³ Տե՛ս, Մակարենկո Ա. Պ. «Թեորիա և պատմություն կոոպերատիվիզմի»: Սովորություն. Մ. 1999, հատ. 85.
- ⁴ Տե՛ս, The U.S. Department of Agriculture (USDA) Research Report 231, Comparing Cooperative Principles of the U.S. Department of Agriculture and the International Cooperative Alliance, June 2014, էջ 1:
- ⁵ Տե՛ս, International Co-operative Alliance: Statement on the Co-operative Identity (1995).
- ⁶ Տե՛ս, SGECOL Study Group On European Cooperative Law-Draft principles of European cooperative law.PECOL-May 2015, էջ 4:
- ⁷ Տե՛ս, Մակարենկո Ա. Պ. «Թեորիա և պատմություն կոոպերատիվիզմի»: Սովորություն. Մ. 1999, հատ. 85.
- ⁸ Տե՛ս, Վախիտօվ Կ. Ի. «Իշխանության կոոպերատիվիզմ»: Մ. 2008, հատ. 32:
- ⁹ Տե՛ս, Hans-H. Münkner and Rolf Trodin: Organised Self-help to solve Housing Problems (Marburg, 1999).
- ¹⁰ Տե՛ս, Guy Tchami “Handbook on Cooperatives for use by Workers’ Organizations” © International Labour Organization 2007, էջ 15:
- ¹¹ Տե՛ս, նույն տեղում:
- ¹² Տե՛ս, նույն տեղում:
- ¹³ Տե՛ս, նույն տեղում էջ 18:
- ¹⁴ G20/SZQ4 «Կոռպորատիվ կառավարան սկզբունքներ» Եր.: Կոռպորատիվ կառավարման Կենտրոն, 2016թ., էջ 45:
- ¹⁵ Տե՛ս, Germany Cooperative societies act 1973, with regulations for the registration of cooperative societies, passed on 1 May 1889, հոդված 155-ը:
- ¹⁶ Տե՛ս, Guy Tchami “Handbook on Cooperatives for use by Workers’ Organizations”. International Labour Organization 2007, էջ 19:
- ¹⁷ Տե՛ս, Rural Cooperative business service, agricultural cooperative in the 21st century, (Cooperative Information Report No. 60, 2002):
- ¹⁸ Տե՛ս, նույն տեղում:

Օգտագործված գրականության ցանկ

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք ՀՀՊԸ 1998.08.10/17(50):
- ՀՀ օրենքը «Գյուղատնտեսական կոռպորատիվների մասին» ՀՀՊԸ 2015.12.30/91(1180):
- G20/SZQ4 «Կոռպորատիվ կառավարման սկզբունքներ» Երևան, Կոռպորատիվ կառավարման Կենտրոն, 2016թ.:
- Մակարենկո Ա. Պ. “Թեորիա և պատմություն կոոպերատիվիզմի”: Սովորություն. Մ. 1999.
- Վախիտօվ Կ. Ի. “Իշխանության կոոպերատիվիզմ”: Մ. 2008:
- The U.S. Department of Agriculture (USDA) Research Report 231, Comparing Cooperative Principles of the U.S. Department of Agriculture and the International Cooperative Alliance, June 2014:
- Guy Tchami “Handbook on Cooperatives for use by Workers’ Organizations” . International Labour Organization 2007:
- International Co-operative Alliance: Statement on the Co-operative Identity (1995).
- SGECOL Study Group On European Cooperative Law-Draft principles of European cooperative law.PECOL-May 2015:
- Hans-H. Münkner and Rolf Trodin: Organised Self-help to solve Housing Problems (Marburg, 1999).
- Germany Cooperative societies act 1973, with regulations for the registration of cooperative societies, passed on 1 May 1889:
- Rural Cooperative business service, agricultural cooperative in the 21st century, (Cooperative Information Report No. 60, 2002):

Արթուր Վարդանյան
Ասպիրանտ կաֆեդրա հայացական իրավագության

РЕЗЮМЕ
Принципы кооперативной деятельности

В статье анализируется правовая сущность принципов кооперативной деятельности.

В статье были указаны виды кооперативных принципов в разных развитых странах Европейского союза, а также в США, рассматривается правовая природа каждого из принципов. Учитывая важность принципов нами был предложен внести законодательные изменения, и юридически закрепить принципы, принятые международным кооперативным альянсом, как источник кооперативного права.

Ключевые слова- Кооператив, принципы кооперативной деятельности, Международный кооперативный альянс, открытое и добровольное членство, кооперативные ценности.

Artur Vardanyan
PhD student of YSU, Chair of Civil Law

SUMMARY
Principles of cooperative activities

The article analyzes the legal essence of the cooperative activity principles. In the article are mentioned the types of principles of cooperative activities in different developed countries of European Union and also in the United States. The legal essence of each principle is described. Realizing the importance of the principles we have suggested to make legislative changes, and fix the principles adopted by International Cooperative Alliance as a source of a cooperative law.

Key words- Cooperative, principles of cooperative activities, International Cooperative Alliance, open and voluntary membership, cooperative values.

Բնագիրքը ներկայացվել է 07.04.2020թ.

Ընդունվել է տպագրության 28.04.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ավետիսյանը

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

ՏՆՕՐԻՆՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

Հոդվածը նվիրված է տնօրինչականության սկզբունքի դրսևորման առանձնահատկությունների բացահայտմանը վարչական դատավարությունում: Ըստ այդմ, վերլուծության են ենթարկվում վարչական դատավարությունում «ex officio» սկզբունքի իրացման պայմաններում տնօրինչականության սկզբունքի դրսևորմանը, սահմանափակումները և դատարանի կողմից ձեռնարկվող գործողությունները:

Հիմնարարեր՝ սկզբունքներ, «ex officio» սկզբունք, ամօրինչականություն, վարչական դատավարություն, ամօրինչականության սկզբունք:

Վարչական դատավարության սկզբունքները վարչական դատավարության իրավունքի նորմերում ամրագրված դրույթներն են, որոնք ընկած են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերով արդարադատության իրականացման հիմքում և արտահայտում են վարչական դատավարության առանձնահատկությունները¹:

Տեսաբանների կարծիքով վարչական դատավարության սկզբունքների օրենսդրական ամրագրումն ունի հիմնարար նշանակություն, քանի որ միայն այդ կերպ է հնարավոր դառնում վարչական դատավարության նպատակների և խնդիրների իրականացումը²:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՎԴՕ) 5-9-րդ հոդվածներով սահմանված են վարչական դատավարության սկզբունքները: Դրանք են՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելը, վարչական դատավարության իրականացումը կողմերի իրավահավասարության հիման վրա, գործերի քննության բանափորությունը, դատական վարույթի իրավարականությունը, վարչական դատավարությունը պետական լեզվով իրականացնելը:

Թվարկված սկզբունքների շարքում «ex officio» սկզբունքը, հանդիսանալով վարչական դատավարության առանձնահատկություններն ընդգծող սկզբունք, պայմանավորում է նաև վարչական դատավարությունում այլ սկզբունքների դրսևորման առանձնահատկությունները³:

Դատավարագետները, ուսումնասիրելով այս սկզբունքի հարաբերակցությունը վարչական դատավարության այլ սկզբունքների հետ, առանձնացնում են իրավական այն հարցադրումը, թե արդյո՞ք «ex officio» սկզբունքի ամրագրումը և ըստ այդմ դատարանին ակտիվ լիազորություններով օժտելը չի խորնդուում վարչական դատավարությունում մր-

ցակցության, կողմերի իրավահավասարության և տնօրինչականության սկզբունքների իրացմանը⁴:

Այսպիսով, անհրաժեշտ է բացահայտել «ex officio» սկզբունքի իրացման պայմաններում տնօրինչականության սկզբունքի դրսևորման առանձնահատկությունները վարչական դատավարությունում:

Դիսպոզիտիվության (տնօրինչականության) սկզբունքի համաձայն՝ գործի ելքով շահագրգորված անձինք ունեն հնարավորություն ազդելու գործի քննության վրա՝ վեճի առարկան ազատ տնօրինելու, ինչպես նաև օրենքով իրենց տրված դատավարական իրավունքները դատավարության բոլոր փուլերում իրացնելու միջոցով⁵:

Վճռաբեկ դատարանն, անդրադառնալով այս սկզբունքի եռթյանը, նշել է, որ Սահմանադրությամբ և եվրոպական կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով⁶:

Հարկ է նշել, որ վարչական դատավարությունում այս սկզբունքի դրսևորման առումով առկա են

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տարբեր մոտեցումներ: Այսպես, որոշ գիտնականներ գտել են, որ վարչական դատավարությունում «ex officio» սկզբունքի առկայությունը խոչընդոտում է տնօրինչականության սկզբունքի դրսերմանը, քանի որ անձը, ով դիմել է դատական պաշտպանության համար այլևս չի կարող ուղղորդել դատական քննությունը:

Այդուհանդերձ, գիտնականների գերակշիռ մասը գտել է, որ «ex officio» սկզբունքը չի հակասում տնօրինչականության սկզբունքին, այլ դրա առկայության պայմաններում այն ունի որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորված դատական քննության առարկայով: Ավելին, հանրային իրավահարաբերությունների բնույթով պայմանավորված տնօրինչականության սկզբունքի իրացումը կրում է որոշակի արդարացված սահմանափակումներ⁸:

Այսպես, օրինակ, Ա. Ֆեղինայի կարծիքով վարչական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի առանձնահատկությունը ենթադրում է վարչական դատարանի կողմից գործին մասնակցող անձանց որոշակի գործողությունների նկատմամբ վերահսկողություն, այդ բվում՝ նրանց նյութական իրավունքների և դատական պաշտպանության մեխանիզմների տնօրինման նկատմամբ⁹:

Հատկանշական է, որ, թեև ՈԴ վարչական դատավարության օրենսգրքով ևս տնօրինչականության սկզբունքը նախատեսված չէ վարչական դատավարության սկզբունքների շարքում, ՈԴ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համաձայն՝ դիմումի վերաբերյալ սկզբունքը հանրային իրավահարաբերություններից բխող վիճերի քննության ընթացքում կարող է սահմանափակվել հանրային իրավահարաբերությունների առանձնահատկություններից ենելով միայն այն դեպքերում, երբ վիճելի հանրային իրավահարաբերության բնույթը չի ենթադրում սուբյեկտիվ նյութական իրավունքների ազատ տնօրինում¹⁰:

Գտնում ենք, որ «ex officio» սկզբունքը վարչական դատավարությունում չի կարող բացառել դատական պաշտպանության իրավունքի իրացման կարևորագույն սկզբունքը՝ տնօրինչականության սկզբունքը: Այլ հարց է, որ այս սկզբունքը ձեռք է բերում որոշակի առանձնահատկություններ և որոշ դեպքերում նաև ենթարկվում սահմանափակումների:

Այսպես, թեև ՎԴՕ-ն տնօրինչականության սկզբունքը չի նախատեսել որպես վարչական դատավարության առանձին սկզբունք, այնուամենայնիվ, այն արտացոլված է ՎԴՕ-ի տարբեր դրույթներում: Մասնավորապես՝ հայցվորը կարող է իր կողմից ընտրված վարչական հայցի տեսակով դիմել դատարան, փոփոխել հայցի հիմքը և/կամ առարկան, մի քանի պահանջներ միացնել իրար, իրա-

ժարվել հայցից, պատասխանողը՝ ներկայացնել հակընդդեմ հայց, նրանք կարող են կնքել հաշտության համաձայնություն և այլն:

Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ թվարկված գործողությունները կրում են նաև որոշ սահմանափակումներ: Այսպես, օրինակ.

- հակընդդեմ հայց չի կարող ներկայացվել վիճարկման և պարտավորեցման հայցերով, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ և ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով (ՎԴՕ 87-րդ հոդված):

- նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերի քննության ընթացքում նորմատիվ իրավական ակտի վիճարկման պահանջին չեն կարող միացվել այլ պահանջներ, չի կարող կնքվել հաշտության համաձայնություն, հայցվորը չի կարող հրաժարվել պահանջից:

Գտնում ենք, որ վերոգրյալ սահմանափակումները արդարացված են, քանի որ դրանք ամրագրված են վարչական դատավարության առանձնահատկությունների հաշվառմամբ և չեն կարող համարվել տնօրինչականության սկզբունքի խախում: Այսպես, օրինակ՝ վիճարկման հայց ներկայացված լինելու դեպքում, եթե անձը վիճարկում է վարչական ակտը, կամ պարտավորեցման հայցի դեպքում՝ պահանջում է պարտավորեցնել վարչական մարմին ընդունելու վարչական ակտ, հակընդդեմ հայցի ներկայացումն իմաստագործ է:

Հատկանշական է, որ, թեև ՎԴՕ-ն չի պարունակում դրույթներ դատարանի կողմից «ex officio» սկզբունքի իրացման պարագայում տնօրինչականության սկզբունքի դրսերումների հետ կապված, այդուհանդերձ, գտնում ենք, որ նույնիսկ «ex officio» սկզբունքի տարր հանդիսացող օժանդակման գործառույթի իրացումից հետո ևս դատավարական որոշ գործողությունների իրականացումը առկախաված է անձի տնօրինչական գործողություններից:

Վճռաբեկ դատարանը ևս, ենելով վարչական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի էությունից, արձանագրել է, որ ստանալով սխալ հայցատեսակով ձևակերպված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը՝ հայցվորը կարող է կատարել inter alia հետևյալ դատավարական գործողությունները.

1) ընդունելով ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ դատարանի առաջարկը և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպված դատարանի կողմից մատնանշված պատշաճ հայցատեսակին համահունչ,

2) չընդունել դատարանի առաջարկը և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպել նույն կերպ, ինչպես որ այն ձևակերպված է ենթել սկզբնապես ներկայացված հայցադիմումի մեջ¹²:

Տնօրինչականության և «ex officio» սկզբունքի հարաբերակցությունը քննարկելիս հաճախ անդրադարձ է կատարվում այն հարցադրմանը, թե արդյոք դատարանը կարող է դուրս գալ վարչական հայցի առարկայից:

Այս առումով, օրինակ գերմանացի իրավագետների կարծիքով՝ վարչական դատարանը չափուր է դուրս գալ ներկայացված հայցապահանջի սահմանենքից և այդ սահմանենքում պետք է օժանդակի հայցվորին՝ մատնանշելով հայցադիմումում առկա ձևական սխալները, ոչ հատակ հայցապահանջը հստակեցնելու, ինչպես նաև ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու անհրաժեշտությունը¹³: Ընդ որում, այս մոտեցմամբ է շարուադվել Գերմանիայի վարչական դատավարության օրենսգրքի «ex officio» սկզբունքի իրացմանը վերաբերող հոդվածը:

Գտնում ենք, որ վարչական դատարանը «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող գործողություններն իրացնելիս չի կարող դուրս գալ հայցապահանջի շրջանակներից, այն կաշկանդված չէ հայցապահանջի ձևակերպմամբ¹⁴: Այսպես, եթե հայցապահանջը չի ստացել պատշաճ ձևակերպում «ex officio» սկզբունքի ուժով դատարանը առաջարկում է վերացնել համապատասխան թերությունները:

Այդուհանդերձ, համաձայն ենք այն տեսակետին, որ թեև վարչական դատարանը չի կարող դուրս գալ հայցապահանջի շրջանակներից, այն կաշկանդված չէ հայցապահանջի ձևակերպմամբ¹⁴: Այսպես, եթե հայցապահանջը չի ստացել պատշաճ ձևակերպում «ex officio» սկզբունքի ուժով դատարանը առաջարկում է վերացնել համապատասխան թերությունները:

Վարչական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի եռությունը բացահայտելիս անհրաժեշտ է անդրադանալ նաև այն հարցին, թե արդյոք վարչական դատարանը վարչական ակտի իրավաչափությունը կարող է գնահատել հայցվորի կողմից չվկայակոչված հիմքով: Նշված հարցը քննարկում անհրաժեշտ է ծավալել վիճարկման և ճանաչման հայցերի շրջանակներում:

Այսպես, ՎԴՕ 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել անվավեր ճանաչել վարչական ակտը, իսկ 69-րդ հոդվածով նախատեսված ճանաչման հայցով՝ առ ոչինչ:

Նշված երկու հայցատեսակների պարագայում, թեև նույնական է հայցի նյութական օբյեկտը՝ վարչական ակտը, սակայն դրա իրավաչափության գնահատման հիմքերը այլ են:

Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված են վարչական ակտն անվավեր և առ ոչինչ ճանաչելու հիմքերը:

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել,

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը,

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում,

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնիայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնիայտ ոչ իրավաչափ իրավունք:

Իսկ Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով,

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ, եթե ներկայացված փաստաթղթերից ակնիայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

գ) շահերի բախման իրավիճակում:

Այսպիսով, ճանաչման և վիճարկման հայցատեսակներով վարչական ակտի իրավաչափության գնահատման օբյեկտիվ ուղենիշները տարբեր են: Արդյունքում, եթե հայցվորը, տնօրինչականության սկզբունքի ուժով, որոշում է վիճարկման կամ ճանաչման հայցով վարչական ակտի իրավաչափությունը վիճարկել վերոնշյալ հիմքերից որևէ մեկով, ինչպես պետք է վարվի վարչական դատարանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշման համաձայն՝ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակում վարչական դատարանը պարտավոր է քննարկել այն հարցը, թե առկա¹⁵ է արդյոք այն ակնառու կոպիտ սխալներից որևէ մեկը, որոնք նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում:

Փաստորեն, վարչական ակտի առոշինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակում վարչական դատարանը պարտավոր է քննարկման առարկա դարձնել վարչական ակտի առոշինչության բոլոր հիմքերի առկա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յության կամ բացակայության հարցը՝ անկախ հայցվորի կողմից այդ հիմքերից մեկը, մի քանիսը կամ բոլորը վկայակոչված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Ինչ վերաբերում է վիճարկման հայցին, ապա Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը, անկախ հայցվորի կողմից վկայակոչված իրավական հիմքերից, պետք է մատնանշի նաև ողջամտորեն հնարավոր բոլոր այն իրավական նորմերը, որոնց խախտումը կարող է հիմք հանդիսանալ վարչական ակտի անվավերության համար և առաջարկի հայցվորին դրանք համարել համապատասխան փաստական տվյալներով:

Միաժամանակ, հաշվի առնելով տօնօրինչականության սկզբունքի բովանդակությունը և դրա կիրառելիությունը նաև վարչական դատավարությունում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս հետագա դատավարական գործողությունների իրականացման ժամանակ վարչական դատարանը կաշկանդված է շահագործության անձի կամ այլ դատարանի կողմից մատնանշման լիազորության իրականացումից հետո պնդում է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատվի միայն որոշակի իրավական նորմի և ըստ այդմ ներկայացված փաստական հանգամանքների շրջանակներում, վարչական դատարանը գործի հետագա քննությունը պետք է իրականացնի և գործն ըստ էության լուծող դատական ակտում վարչական ակտի իրավաչափությունը գնահատի միայն այդ իրավական և փաստական հիմքերի շրջանակներում¹⁶:

Նշված որոշումները վերաբերել են այն դեպքերին, երբ վարչական ակտը վիճարկել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի ա) կետի հիմքով, այն է՝ վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնարանման հետևանքով, մինչդեռ առկա չէ դիրքորոշում այն մասին, թե արդյոք վարչական դատարանը պետք է անդրադառնա վարչական ակտի անվավեր ճանաչման այլ հիմքերին, եթե հայցվորը դրանք չի մատնանշել:

Բացի այդ, հարց է ծագում, թե արդյո՞ք վարչական դատարանն ունի հայցի իրավական հիմքերը համալրելու վերաբերյալ մատնանշում կատարելու իրավագորություն, և ՎԴՕ-ով հայցվորի՝ հայցի իրավական հիմքերի մատնանշման պարտականության բացակայության պայմաններում, ինչպես կարող է վարչական ակտի իրավաչափության գնահատման իրավական նորմերի որոշումը վերապահ-

վել վերջինիս:

Հաշվի առնելով վերը բարձրացված հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնարանությունները և միաժամանակ «ex officio» և տնօրինչականության սկզբունքների կապակցությամբ մեր կողմից կատարված վերլուծությունները՝ գտնում ենք.

1) ճանաչման հայցի դեպքում վարչական ակտի առ ոչինչ լինելը որոշելիս անհրաժեշտ է գնահատել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված առողջության բոլոր հիմքերը՝ անկախ հայցվորի կողմից դրանք մատնանշելու հանգամանքից,

2) վիճարկման հայցի դեպքում՝

ա) նախ հարկ է բացառել վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հիմքերի առկայությունը,

բ) եթե վարչական ակտը անվավեր ճանաչելու հիմքում դրվել է դրա՝ օրենքի խախտմամբ ընդունված լինելու փաստը, ապա դատարանը չպետք է կաշկանդվի հայցվորի կամարտահայտությամբ, իսկ դատարանի կողմից մատնանշումը պետք է վերաբերի լոկ հայցի փաստական հիմքերը համալրելուն: Այսինքն, վարչական դատարանը պարտավոր է գնահատել վարչական ակտով կարգավորվող իրավահարաբերությանը վերաբերող բոլոր այն իրավական նորմերի շրջանակը, որոնց խախտմամբ կարող է ընդունված լինել վարչական ակտը և գնահատել դրանց պահպանվածությունը,

գ) այն դեպքում, երբ վարչական ակտի վիճարկման հիմքում դրվել են միայն վարչական ակտի անվավեր ճանաչման մեկ հիմքին վերաբերող փաստեր, ապա վարչական ակտը «ex officio» սկզբունքի ուժով պետք է անդրադառնա մյուս հիմքերին, եթե վարչական վարույթի նյութերից բխում է նման հիմքի առկայությունը: Այսպիսով, եթե, օրինակ, հայցվորը ներկայացնում է փաստարկներ առ այն, որ վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ, սակայն վարչական դատարանի համար գործի քննության արդյունքում պարզ է դատնում, որ վարչական ակտն ընդունված է կեղծ փաստաթերի կամ տեղեկությունների հիման վրա, ապա, մեր գնահատմամբ, դատարանը պետք է անդրադառնա նաև այդ հիմքով վարչական ակտի գնահատմանը:

Անփոփելով ամբողջ վերոգրյալը՝ կարելի է եղանակել, որ տնօրինչականության սկզբունքի գոյությունը վարչական դատավարությունում կասկած չի հարուցում, սակայն այն ունի առանձնահատուկ դրսորումներ և «ex officio» սկզբունքի իրացմամբ պայմանավորված՝ կարող է կրել որոշակի սահմանափակումներ:

- ¹ Стю, Ярков В.В., Административное судопроизводство, Учебник для студентов высших учебных заведений, Уральский государственный юридический университет, Екатеринбург - Москва, 2016г., С. 9.

² Стю, Ярков В. В., Принципы административного судопроизводства: общее и особенное, Закон 7, 2016г., С. 52-60.

³ Стю, Phillips D., The Inquisitorial Aspects of an Adversarial System //Med. Sci. & L., T. 42, 2002г., C. 98.

⁴ Стю, Henrichsen C., "Administrative Justice in a Scandinavian Legal Context: From a Liberal and a Social State to a Market State or a Milieu State." Administrative Justice in Context, Ed. Michael Adler, London, Hart Publishing, Bloomsbury Collections, 2010г., С. 321–350.

⁵ Стю, Треушникова М. К. Административное судопроизводство: учебник для студентов юридических вузов, факультетов и юристов, повышающих квалификацию. 1-е изд. Под ред. М.: Издательский Дом "Городец", 2017г., С. 90.

⁶ Стю, Җәнәрбәқ ұштарларыңı թің U-3/0055/02/13 қартоң 18.07.2014 թаңдаңың қартоңынан:

⁷ Стю, Тараненко В. Ф., Принципы диспозитивности и состязательности в советском гражданском процессе, М.: Изд-во ВЮЗИ, 1990г., С. 5.

⁸ Стю, Гарбуева А. В., Принципы административного судопроизводства в России и Германии. Diss. Сибирский федеральный университет, 2017г., С. 57, Щербакова Л. Г., Принцип диспозитивности и его реализация в арбитражном судопроизводстве. Diss, Гражданский процесс, Саратов, 2010г., С. 104.

⁹ Стю, Федина А. С., Принципы административного судопроизводства //Вестник Тверского государственного университета. Серия: Право, N. 3, Тверь, 2015г., С.131-140.

¹⁰ Стю, Постановление Конституционного Суда РФ от 16.07.2004 N 15-П "По делу о проверке конституционности части 5 статьи 59 Арбитражного процессуального кодекса Российской Федерации в связи с запросами Государственного Собрания - Курултая Республики Башкортостан, Губернатора Ярославской области, Арбитражного суда Красноярского края, жалобами ряда организаций и граждан". // СЗ РФ. 2004г., № 31, С. 3282.

¹¹ Стю, Яковлева А. П., Состязательность административного судопроизводства и активная роль суда //Вестник Поволжского института управления, N. 6 (51), 2015г., С. 108.

¹² Стю, Җәнәрбәқ ұштарларыңı թің Қ-8117/05/18 үшіндең 30.09.2019 թаңдаңың қартоңынан:

¹³ Стю, Kaufmann M., Untersuchungsgrundsatz und Verwaltungsgerichtsbarkeit. Mohr Siebeck, 2012г., էջ 310:

¹⁴ Стю, Schreier A., Judge at Supreme Administrative Court Berlin-Brandenburg, "General principles of administrative court proceedings, including the inquisitorial principle", Ежегодник публичного права 2018: Принципы административных процедур и административного судопроизводства, Москва, 2018г., С. 93-107.

¹⁵ Стю, Җәнәрбәқ ұштарларыңı թің Қ-4502/05/15 үшіндең 30.11.2018 թаңдаңың қартоңынан:

¹⁶ Стю, Җәнәрбәқ ұштарларыңı թің Қ-2976/05/15 үшіндең 30.11.2018 թаңдаңың қартоңынан, թің Қ-6067/05/16 үшіндең 25.12.2019 թаңдаңың қартоңынан:

Օգտագործված գրականության զանկ

- 1) Հայաստանի Հանրապետության փարական դատավարության օրենսգիրը: Ընդունվել է 05.12.2013 թվականին, ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին: №Շն ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1, հոդ.1186.1-րդ:
 - 2) Ярков В.В., Административное судопроизводство, Учебник для студентов высших учебных заведений, Уральский государственный юридический университет, Екатеринбург - Москва, 2016г., С. 9.
 - 3) Ярков, В. В., Принципы административного судопроизводства: общее и особенное, Закон 7, 2016г., С. 52-60.
 - 4) Phillips D., The Inquisitorial Aspects of an Adversarial System //Med. Sci. & L., T. 42, 2002г., С. 98.
 - 5) Henrichsen C., “Administrative Justice in a Scandinavian Legal Context: From a Liberal and a Social State to a Market State or a Milieu State.” Administrative Justice in Context, Ed. Michael Adler, London, Hart Publishing, Bloomsbury Collections, 2010г., С. 321–350.
 - 6) Трушникова М. К., Административное судопроизводство: учебник для студентов юридических вузов, факультетов и юристов, повышающих квалификацию. 1-е изд. Под ред. М.: Издательский Дом “Городец”, 2017г., С. 90.
 - 7) Тараненко В. Ф., Принципы диспозитивности и состязательности в советском гражданском процессе, М.: Изд-во ВЮЗИ, 1990г., С. 5.
 - 8) Гарцуева А. В., Принципы административного судопроизводства в России и Германии. Diss. Сибирский федеральный университет, 2017г., С. 57, Щербакова Л. Г., Принцип диспозитивности и его реализация в арбитражном судопроизводстве. Diss, Гражданский процесс, Саратов, 2010г., С. 104.
 - 9) Федина А. С., Принципы административного судопроизводства //Вестник Тверского государственного университета. Серия: Право, N. 3, Тверь, 2015г., С. 131-140.
 - 10) Постановление Конституционного Суда РФ от 16.07.2004 N 15-П “По делу о проверке конституционности части 5 статьи 59 Арбитражного процессуального кодекса Российской Федерации в связи с запросами Государственного Собрания - Курултая Республики Башкортостан, Губернатора Ярославской области, Арбитражного суда Красноярского края, жалобами ряда организаций и граждан”. // СЗ РФ. 2004г., № 31, С. 3282.
 - 11) Яковleva A. P., Состязательность административного судопроизводства и активная роль суда //Вестник Поволжского института управления, N. 6 (51), 2015г., С. 108.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

- 12) Kaufmann M., Untersuchungsgrundsatz und Verwaltungsgerichtsbarkeit. Mohr Siebeck, 2012г., С. 310.
- 13) Schreier A., Judge at Supreme Administrative Court Berlin-Brandenburg, “General principles of administrative court proceedings, including the inquisitorial principle”, Ежегодник публичного права 2018: Принципы административных процедур и административного судопроизводства, Москва, 2018г., С. 93-107.
- 14) Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/8117/05/18 վարչական գործով 30.09.2019 թվականի որոշումը:
- 15) Վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ-3/0055/02/13 գործով 18.07.2014 թվականի որոշումը:
- 16) Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4502/05/15 վարչական գործով 30.11.2018 թվականի որոշումը:
- 17) Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018 թվականի, թիվ ՎԴ/6067/05/16 վարչական գործով 25.12.2019 թվականի որոշումները:

Լիլիթ Պետրօսյան

Ասիրանտ կաֆեդրա ցայցանական պրոցեսա ԵԳՄ

РЕЗЮМЕ

Особенности реализации принципа диспозитивности в административном судопроизводстве

Статья посвящена анализу принципов “ex officio” и диспозитивности в административном судопроизводстве. В результате обсуждаются понятия и характерные черты принципа диспозитивности и полномочия суда. Анализ норм административного судопроизводства показывает, что, хотя этот принцип отдельно не предусмотрен в кодексе административного судопроизводства, его существование очевидно в нем. Кроме того, автор рассматривает проявление принципа диспозитивности в административном судопроизводстве, показывает способы его реализации и приходит к выводу, что этот принцип имеет определенные особенности из-за принципа “ex officio” и может быть ограничено в силу специфики публичного права. Эти особенности следует учитывать при определении принципа диспозитивности в кодексе административного судопроизводства Армении.

Ключевые слова: принципы, принцип “ex officio”, диспозитивность, административное судопроизводство, принцип диспозитивности.

Lilit Petrosyan

PHD Student of the Chair of Civil Procedure of YSU

SUMMARY

Peculiarities of exercising the principle of dispositivity in administrative court procedure

The article is devoted to the analyse of “ex officio” and dispositivity (optionality) principles in administrative court procedure. As a result, the notion and characteristics of dispositivity principle and the authorities of the court are being discussed. The analyze of the norms of administrative court procedure indicates that even though this principle is not stipulated separately in the code of the administrative court procedure, its existence is evident in administrative court procedure. Furthermore, the author examines the manifestation of dispositivity principle in administrative court procedure, showing the ways it is realized, and makes a conclusion that this principle has certain peculiarities because of “ex officio” principle and can be limited because of the nature of public relationships. In other words, these peculiarities should be considered when defining dispositivity principle in the code of Administrative court Procedure.

Key words: principles, “ex officio” principle, dispositivity, administrative court proceedings, principle of dispositivity.

Բնագիրը ներկայացվել է 12.04.2020թ.

Ընդունվել է տպագրության 28.04.2020թ.

Հողվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մելքոնյանը

ԻԶԱԲԵԼԼԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի
տեսության և սահմանադրական իրավունքի
ամրիոնի հայցորդ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՉԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՆԵՐՔՈ

Սույն հոդվածում ուսումնասիրվում է մի շարք երկրների դատաիրավական փորձն աշխատանքի ազատ ընտրության իրավունքի ոլորտում: Մեկնարանվում է Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի ազատ ընտրության իրավունքին հաղորդած բովանդակությունն ու դրա կիրառությունը, միևնույն ժամանակ, իմանափորվում է, որ գրադարանի, գրադապունքի, գրադապության ընտրությունն աշխատանքն ազատ ընտրելու իրավունքներից է, որը կարող է դրսարձիկ անձի ինքնազբան աշխատանքով և տնտեսական գործունեության իրականացմամբ: Հոդվածում տրվում է այն եզրակացությունը, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը հանդիսանում է տնտեսական գործունեություն ծավալելու գործիքներից մեկը և տնտեսական գործունեությամբ գրադարձելու իրավունքի օրենսդրական կարգավորումների արդյունքում կարող է սահմանափակվել աշխատանքի ազատ ընտրության իրավունքը:

Հիմնարարեր՝ աշխատանքի իրավունք, աշխատանքի ազատ ընտրության իրավունք, անտեսական գործունեությամբ գրադարձելու իրավունք, ծեռճարկատիրական գործունեությամբ գրադարձելու իրավունք:

Արտասահմանյան երկրների սահմանադրությունները տարբեր մոտեցումներ են դրսևորում աշխատանքի ոլորտում ազատությունների, իրավունքների և պարտականությունների ամրագրման հարցերում: Ելենով այս մոտեցումներից՝ օգտագործվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ աշխատանքի ազատությունը և աշխատանքի իրավունքը, ընդ որում՝ որոշ դեպքերում ներառվում է նաև աշխատելու պարտականությունը: Այդ կապակցությամբ հարկ է պատշաճ ուշադրության արժանացնել այն հանգամանքը, թե, մասնավորապես, պետության սահմանադրությունն ինչ իմաստ է հաղորդում այդ կատեգորիաներին:

Անկախ սահմանադրական ամրագրումից՝ ներկա շուկայական տնտեսության պայմաններում իրատեսական չէ ապահովել յուրաքանչյուրին աշխատանքով: Մինչեռ, գրեթե բոլոր պետությունների սահմանադրություններում, պետության սոցիալական քաղաքականության մկրունքի տեսքով, ամրագրված է պետության պարտավորությունը բնակչության գրադապության ապահովման գործում [1]: Նույնիսկ այն երկրներում, որտեղ աշխատանքի իրավունքն ամրագրված է ոչ թե որպես պետության քաղաքականության մաս, այլ՝ որպես իրավունք, միևնույն է՝ չի ընկալվում պետության կողմից աշխատանք տրամադրելու պարտավորություն: Օրինակ՝ ճապոնիայի Սահմանադրությամբ ամրագրված աշխատելու իրավունքն ամրագրված է այնպիսի կազմությամբ, որ յուրաքանչյուրի իրավունքն ապահովություն է տնտեսական գործունեության համար (Ճապոնիայի 1946թ. ընդունված Սահմանադրության 27-րդ հոդված) հանդիսանում են պետության քաղաքական պարտավորություններ՝ աշխատաշուկային միջամտել այնպիսի կարգավորումներով, որ աշխատողները հնարավորություն ունենան օգտվել հար-

մար աշխատանք գործելու հնարավորություններից, ինչպես նաև բոլոր նրանք, ովքեր չունեն աշխատելու հնարավորություն, ապահովվեն ապրուսի միջոցով[2]:

Ըստ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի սահմանադրությունների մի մասի՝ «Աշխատելու իրավունք» բովանդակող ձևակերպումների գերակշիռ հատվածում այն, այդուհանդերձ, չի ընկալվում՝ որպես պետության կողմից աշխատանքի ապահովման հոչակում, և այդ առումով սահմանադրական դատարաններն ունեն որոշիչ նշանակություն: Որոշ սահմանադրություններում «աշխատելու իրավունք» և «աշխատանքն ազատ ընտրելու իրավունքի» կամ «աշխատանքի ընտրության ազատության» միջև եղած տարբերությունները չեն հանգեցրել սոցիալ-տնտեսական տարբեր գործնարարությունների [3, էջ 276]: Միևնույն ժամանակ, մի շարք երկրների համար հատկանշական է այն, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը դիտարկվում է որպես տնտեսական գործունեության քաղաքիչ, այսինքն՝ հանդիսանում է անձի կողմից ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու ազատություն:

Հունգարիայի 1949թ. Սահմանադրության (1989թ. հոկտեմբերի 23-ի փոփոխություններով) 70 Բ հոդվածով ամրագրված էր յուրաքանչյուրի աշխատանքի իրավունքը և իր աշխատանքն ու մասնագիտությունն ազատ ընտրելու իրավունքը (Հունգարիայի ներկայիս՝ 2011թ. Սահմանադրության 12-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուրի իրավունքն ապահով ընտրել իր աշխատանքը կամ մասնագիտությունը և գրադարձիկ ձեռնարկատիրական գործունեությամբ): Աշխատելու իրավունքը Սահմանադրական դատարանի (այսուհետ՝ Դատարան)

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կողմից սահմանվել է որպես ազատ ձեռնարկատիրության իրավունք: Դատարանը հավելել է, որ այս իրավունքը չի ապահովում տվյալ աշխատանքը (գրադադարությունը) ձեռք բերելու սուբյեկտիվ իրավունք, այլ ենթադրում է, որ պետությունը չափում է խոչընդոտի կամ արգելի անձին դառնալ ձեռնարկատեր [4]: Հունգարիայի Սահմանադրական դատարանը, քննության առնելով աշխատանքն (մասնագիտությունն) ընտրելու ազատությունը, օրինակ՝ բեկանել է տեղական կառավարման մարմինների կողմից տարսիների արտոնագրերի համար որոշակի քանակ սահմանելու պահանջը սահմանափակող օրենսդրական նորմը՝ գործելով, որ տաքսիների արտոնագրերի համար քանակ սահմանելը աշխատանք (մասնագիտություն) ընտրելու իրավունքի ավելորդ և անհամաշափ սահմանափակում է [5]: Դատարանն արձանագրել է, որ ազատ ձեռնարկատիրության (տնտեսական գործունեության) իրավունքը հանդիսանում է աշխատանքն (մասնագիտությունն) ազատ ընտրելու և դրանով գրադարձը իրավունքի մի մաս, որն, իր հերթին, աշխատանքի իրավունքի բաղկացուցիչն է: Ձեռնարկատիրական գործունեությամբ գրադարձը ազատությունը նշանակում է, որ պետությունը չի կարող անձին արգելել գրադարձի ձեռնարկատիրությամբ, թեև, աշխատանքն ու մասնագիտությունն ազատ ընտրելու իրավունքն ունի նոյն պաշտպանությունը պետության միջամտությունից, ինչպես և մնացած իրավունքներն ու ազատությունները: Այդուհանդերձ, տվյալ իրավունքի սահմանափակումների սահմանադրականությունը գնահատվում է երկու կարողոր հարթություններում, այն է՝ արդյո՞ք սահմանափակումը վերաբերում է աշխատանք կամ մասնագիտություն ազատ ընտրելուն, թե՞ գրադարձըն: Բոլոր դեպքերում սահմանափակումները կարող են ունենալ օրյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներ: Օրինակ՝ տարսիների արտոնագրերի քանակը սահմանելը օրյեկտիվ չափանիշ է: Եթե սահմանված քանակը լրանար, ապա անհնար կլիներ այս աշխատանքի ընտրությունն անկախ անձի մասնագիտական կարողություններից: Հետևաբար, նման օրյեկտիվ սահմանափակումը պետք է լինի անհրաժեշտ ու անխուսափելի և հանդիսանա նվազագույն սահմանափակող միջոց՝ կարգավորման նպատակին հասնելու ուղղությամբ: Սուբյեկտիվ չափանիշը նոյնպես սահմանափակում է, սակայն նման չափանիշներին համապատասխանել տեսականորեն կարող են բոլորը: Հետևաբար, օրենսդրության այս առումով փոքր-ինչ ավելի լայն հայեցողության շրջանակ ունի, քան օրյեկտիվ չափանիշներ սահմանելիս [6]:

Պորտուգալիայի Սահմանադրական դատարանը, 2001թ. մայիսի 2-ին քննության առնելով դեղատանային գործունեություն իրականացնելու մասին

օրենսդրական կարգավորումները, նշել է, որ աշխատանքը (գրադարձը) ընտրելու ազատությունը լոկ տնտեսական գործունեությամբ գրադարձը երաշխիք կամ հիմք չէ, այլ նաև՝ արտահայտում է անհատի աշխատանքի իրավունքը: Նշված ազատությունն անձը պետք է իրականացնի ի շահ իր մասնագիտության (օրինակ՝ դեղագործ) աշխատելով և՝ դեղագործական գործունեություն իրականացնելու տնտեսավարող այլ սուբյեկտի ենթակայությամբ, և՝ ինքնագրադարձ եղանակով: Այդ երկու եղանակների միջև ընտրության կատարումը նույնպես պաշտպանվում է Սահմանադրությամբ: Չնայած աշխատանքի ազատ ընտրության իրավունքի նման լայն մեկնաբանմանը, դատարանը սահմանադրական է համարել օրենսդրական կարգավորումն առ այն, որ դեղագործական գործունեություն իրականացնելու համար դեղագործը պետք է պարտադիր հանդիսանա դեղատան սեփականատեր [7]:

Աշխատանքի ազատ ընտրության վերաբերյալ նոյնաբնույթ մեկնաբանում ունի նաև Լիխտենշտեյնի Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), որը առևտրի և արդյունաբերության ազատությունը համարել է աշխատանքն ազատ ընտրելու և դրանով գրադարձը երաշխիք: Խորհուրդը չեղյալ է համարել օրենսդրական այն կարգավորումը, որ հատուկ մասնագիտական գիտելիք պահանջող գործունեությամբ գրադարձը համար անհրաժեշտ է ստանալ բույլտվություն: Ըստ Խորհուրդի՝ նման ձևակերպումը չի պարունակում բավարար չափով որոշակիություն՝ հաշվի առնելով, որ սահմանված չեն այն բոլոր մասնագիտությունները, որոնցով գործունեություն ծավալելիս պետք է ունենալ բույլտվություն: Մասնագիտություն (գրադարձը) ընտրելու համար սահմանափակումներ սահմանող իրական հիմքերը պետք է հստակ սահմանեն ինքնաշխատ գործունեության այն բոլոր տեսակները, որտեղ կան արգելվներ [8]:

Բազմաթիվ են Գերմանիայի Սահմանադրական դատարանի՝ մասնագիտության (գրադարձի) ազատ ընտրության իրավունքի որպես տնտեսական գործունեության հիմք դիտարկող մեկնաբանությունները և դատողությունները²: Թերևս սա պայմանագրված է այն հանգամանքով, որ տնտեսական գործունեությամբ գրադարձը իրավունքի մասին առանձին հոդված այս պետության Սահմանադրության մեջ չկա: Այսպես, օրինակ՝ ուշագրավ գործերից է դեղատանային գործունեություն իրականացնելու մասին գործը: Այս գործով դիմողը վիճարկել է նոր դեղատաների ստեղծմանը վերաբերող Բավարիա նահանգի լիցենզավորման համակարգը: Ըստ նահանգի կանոնների՝ նոր դեղատուն հիմնելու բույլտվություն տրամադրվում էր, եթե անձը կարողանում էր ապացուցել իր տնտեսական կարողությունը և մոտակա դեղատաների գործունեությանը տնտեսական վճար

պատճառման բացառումը: Նշված գործով Սահմանադրական դատարանը մեկնաբանել է աշխատանքի էությունը՝ սահմանելով, որ Սահմանադրության 12-րդ հոդվածի առաջին մասը՝ պաշտպանում է ժմանակակից հասարակության համար կարևոր մաս հանդիսացող՝ որոշակի միջավայրում յուրաքանչյուր քաղաքացու ազատությունը՝ իմնաված աշխատանքի բաժնաման վրա: Համապատասխանաբար՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի զբաղվել այն գործունեությամբ, որն, իր կարծիքով, նա պատրաստ է դարձնել իր մասնագիտությունը և կյանքի հիմքը: Հոդվածի առաջին մասն երաշխավորում է անձի՝ ավելին քան անկախորեն զբաղմունք ստանձնելու ազատությունը: Այս հիմնարար իրավունքը կոչված է պաշտպանելու աշխատանքի տնտեսական հիմքը, սակայն այն աշխատանք է դիտարկում նաև անձի զբաղմունքը: Այս առումով աշխատանքը պետք է ընկալել անձի անհատականության հետ փոխհարաբերության համատեքստում: Սա այնպիսի կապ է, որը ձևավորում և ամբողջացնում է անձին իր զբաղմունքով ամբողջ կյանքի ընթացքում. աշխատանքը մարդու գոյության հիմքն է, որի միջոցով մարդը միաժամանակ նպաստում է համընդհանուր սոցիալական արգասիքին [9, էջեր 299-300]:

Նշված որոշումը կարևորվում է նրանով, որ դատարանը «զբաղմունք (մասնագիտություն)» եզրույթը մեկնաբանեց այնքան լայն, որ, ըստ էության, անձի ցանկացած զբաղմունք՝ լինի դա գործառուի ենթակայության տակ աշխատանք, թե ինքնազբաղվածություն, կամ պետական, թե մասնավոր ոլորտի աշխատանք, առևտրային գործունեություն, և այլն, որն իր սեփական հոգսերը հոգալու համար հարմար է, համարեց տվյալ հոդվածի պաշտպանության առարկա [10]: Դատարանը նաև հստակեցրեց աշխատանքի (մասնագիտության) ընտրության կանոնակարգման սահմանները՝ զբաղմունք (մասնագիտություն) ընտրելը և դրանով զբաղվելն աշխատանքի ընտրության երկու եզրերն են: Ըստ էության, անձը մասնագիտություն ընտրելիս ընտրում է նաև դրանով զբաղվելը: Օրենսդրի կողմից աշխատանքով կամ մասնագիտությամբ զբաղվելը կանոնակարգելը կարող է ազդել զբաղմունքի ընտրության ազատության վրա: Հետևաբար, որքան էլ որ օրենսդրին վերապահված է աշխատանքով զբաղվելու կանոնակարգումը, միևնույն է, դրա հետևանքով աշխատանքի ընտրությունը պետք է մնա ազատ: Զբաղմունքի (աշխատանքի) ընտրությունն անձի կամքի ազատ արտահայտումն է, այն ինքնորոշման քայլ է և պետք է հնարավորինս պաշտպանված լինի պետության միջամտությունից: Մինչդեռ, զբաղմունքով (աշխատանքով) զբաղվելով անձն անմիջականորեն ազդում է հասարակական կյանքի վրա: Ահա զբաղվածության այս տեսակետն է, որ ի շահ հասարակու-

թյան և այլոց կարող է կարգավորվել օրենսդրի կողմից. «Որքան կանոնակարգումն ուղղված է մասնագիտությունն ընտրելուն, այնքան սահմանափակման եզրերը նեղ են, որքան ուղղված է մասնագիտությամբ զբաղվելուն, այնքան եզրերը կարող են լայնանալ:»⁴ [11]:

Վերջին շրջանում Գերմանիայի Սահմանադրական դատարանի կողմից քննված գործերը (14.01.2014թ. թիվ 1 BvR 2998/11 և 1 BvR 236/12 որոշումներ) վկայում են վերջինս դիրքորոշման մասին առ այն, որ մասնագիտություն (զբաղմունք) ընտրելու ազատությունը տարածվում է նաև իրավաբանական անձանց վրա: Դրանցով ակնհայտ է դառնում, որ տնտեսական գործունեության պաշտպանությունը ներառված է «մասնագիտություն (զբաղմունք) ընտրելու ազատություն» եզրույթում, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասին օրենսդրական կարգավորումները խախտում են մասնագիտություն (զբաղմունք) ընտրելու ազատությունն այնքանով, որքանով դրանք խոչընդոտում են ընկերությանը տնտեսական գործունեությունը իրականացնել՝ միաժամանակ զբանցվելով և որպես իրավաբանական զբասենյակ, և որպես արտոնագրային հավատարմատարների զբասենյակ՝ նախատեսելով, որ իրավաբանները հանդիսանալու իրավաբանական ընկերության, իսկ հավատարմատարներ՝ հավատարմատարների զբասենյակի, և, որ խոչոր բաժնետերերը ունենան ձայնի իրավունք ու մասնակցեն զբասենյակի կառավարմանը [12]:

Այսպիսով, ամփոփելով տարբեր երկրների սահմանադրական դատարանների փորձը՝ եկանք այն եզրակացության, որ աշխատանքն ազատ ընտրելու իրավունքը վերաբերում է ոչ միայն գործատուի մոտ աշխատանքին, այլ նաև՝ զբաղմունքի, զբաղվածության այլ եղանակներին: Այսինքն, «աշխատանք» եզրույթը ունի լայն նշանակություն, այն ներառում է անձի զբաղվածությունն ու մասնագիտացնումը: Բացի այդ, աշխատանք (զբաղմունք) մասնագիտությունը ընտրելու ազատությունն ենթադրում է նաև ընտրվածով զբաղվելու ազատություն: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա ՀՀ Սահմանադրությամբ «աշխատանք» եզրույթը չունի առանձին բնորոշում: Հայկական իրավագիտության մեջ առկա է տեսակետ, որ մասնագիտության, զբաղմունքի (գործունեության) տեսակ ընտրելու ազատությունը հանդիսանում է աշխատանքի ազատ ընտրության մասը [13], սակայն նման մեկնաբանությունները դատական պրակտիկայում կամ իրավական գիտության մեջ չեն հանգեցրել այնպիսի եզրահանգման, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը՝ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի դրսնորումներից է:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Այսպես, աշխատանքն ազատ ընտրելու իրավունքի բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից երբեք չի բացահայտվել որպես գրադարձ (գործունեություն) ընտրելու իրավունք, նույնիսկ, եթե նման առիր ստեղծվել է: Օրինակ՝ 18.04.2014թ. թիվ ՍԴ-1148 գործով դիմողը պահանջել է Սահմանադրությանը հակասող ճանաչել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումն առ այն, որ փաստաբանական դպրոցի ունկնդիր կարող է լինել այն գործունակ ֆիզիկական անձը, ով ունի իրավաբանական կրթության բակալավրի կամ դիվանագործական մասնագետի որակավորման աստիճան: Դիմողը նշել է, որ, ունենալով իրավագիտության մագիստրոսի բարձրագույն կոչում, չի կարող դառնալ փաստաբանական դպրոցի ունկնդիր և գրադարձի տեսակ ընտրել փաստաբանական գործունեությունը, քանի որ ունկնդիր դառնալու համար պահանջվում է բակալավրի կամ դիվանագործական մասնագետի որակավորում: Թեև դիմումի հիմքում դրվել են աշխատանքն ազատ ընտրելու, կրթություն ստանալու և օրենքի առջև հավասար լինելու սահմանադրական իրավունքները՝ Սահմանադրական դատարանը գերծ է մնացել քննարկվող օրենսդրական նորմը և աշխատանքի ազատ ընտրության իրավունքի կապը միմյանց հետ հարաբերելուց և օրենսդրական նորմը հակասահմանադրական է ճանաչվել հիմք ընդունելով իրավական պետությունում անձի իրավական ակնկալիքների և սահմանափակման համաշխատության սկզբունքները [14]:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ աշխատանքն աշխատողի կողմից անձամբ, որոշակի վարձատրությամբ, որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում կատարվող աշխատանքային գործառույթներն են, ընդ որում աշխատողը պետք է ենթարկվի գործառույթներին կարգավահական կանոններին [15]: Աշխատանքի այս բնորոշումը բավականին նեղ է և չի ներառում ինքնազբաղ անձանց աշխատանքը, այսինքն կարող է կիրառվել միայն գործառույթի և աշխատողի միջև իրավահարաբերություններում: «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսվող գործունեության տեսակները գրադածության առավել լայն շրջանակ են ներառում, դրանք են՝

- գործառուների մոտ վարձու աշխատանքային գործունեությունը (այդ թվում՝ ՀՀ օրենքներով նախատեսված ծառայությունների կադրերի ռեզերվում գտնվելը, բացառությամբ վարձատրություն չնախատեսող դեպքերի),

- քաղաքացիական պայմանագրով ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների կատարումը,

- անհատ ձեռնարկատիրական և նոտարի գոր-

ծունեությունը,

- արտոնագրային վճար վճարողի⁵ գործունեությունը,
- ժամկետային պարտադիր գինվորական ծառայությունը,

- ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցումը⁶ [16]:

Հարկ է ընդգծել, որ ձեռնարկատիրական գործունեությամբ գրադարձը իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ աճրագրված է որպես տնտեսական գործունեությամբ գրադարձը իրավունքի մաս (ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդված) [17] և, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, հանդիսանում է գրադարձածության եղանակներից մեկը: Զբաղվածությունն իր հերթին աշխատանքի բաղկացուցիչներից է: Ելնելով դատություններից՝ կարելի է եզրահանգել, որ աշխատանքն ազատ ընտրելու իրավունքը տնտեսական գործունեությամբ գրադարձը իրավունքի դրսերումներից կամ գործիքներից մեկն է, այնքանով, որքանով ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսական գործունեության ձևերից մեկն է: Արտասահմանյան երկրների փորձը հուշում է նաև, որ աշխատանք (գրադարձ) ընտրելու իրավունքը վերաբերում է ոչ միայն աշխատանքը (գրադարձության) ոլորտն ու տեսակն ընտրելուն, այլ նաև՝ դրանով գրադարձը: Հայաստանի Հանրապետությունն այս առումով չի կարող բացառություն լինել: Զբաղմունքի (գրադարձության) որոշակի տեսակներով գործունեություն ծավալելը որոշ դեպքերում կարող է հնարավոր լինել միայն ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու եղանակով⁷:

Այսպիսով՝ արտասահմանյան մի շարք երկրների փորձի և ներպետական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը որոշակիորեն համընկնում է ձեռնարկատիրական գործունեությամբ գրադարձը իրավունքի հետ և հանդիսանում է տնտեսական գործունեություն իրականացնելու իրավունքի գործիքներից մեկը: Հետևապես, ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու վերաբերյալ օրենսդրական կարգավիրման արդյունքում սահմանվող արգելվները կարող են արգելվներ հանդիսանալ աշխատանքը (գրադարձը) ընտրելու, ինչպես նաև դրանով գրադարձը համար, ինչն անհրաժեշտ է նկատի ունենալ տնտեսական գործունեությամբ գրադարձը իրավունքի իրականացման կառուցակարգեր մշակելիս:

¹ Օրինակ՝ Ալբանիայի 1998թ. ընդունված և 2008թ. փոփոխություններով Սահմանադրություն (հոդված 49-րդ), Բէլառուսիայի 1996թ. ընդունված և 2004թ. փոփոխություններով Սահմանադրություն (հոդված 41-րդ), Բուլղարիայի 1991թ. ընդունված և 2007թ. փոփոխություններով Սահմանադրություն (հոդված 48-րդ), որքատիայի 1990թ. ընդունված և 2010թ. փոփոխություններով Սահմանադրություն (հոդված 55-րդ), Զեկիայի 1993թ. ընդունված և 2009թ. փոփոխություններով Սահմանադրություն (հոդված 26-րդ), Մակեդոնիայի 1991թ ընդունված և 2011թ. փոփոխություններով Սահմանադրություն (հոդված 32-րդ), Ալվենիայի 1991թ. ընդունված և 2006թ. փոփոխություններով Սահմանադրություն (հոդված 49-րդ), Սերբիայի 2006թ. Սահմանադրություն (հոդված 60-րդ), Ալվակիայի 1992թ. ընդունված և 2019թ. փոփոխություններով Սահմանադրություն (հոդված 35-րդ), Ուկրաինայի 1996թ. ընդունված և 2019թ. փոփոխություններով Սահմանադրություն (հոդված 43-րդ):

² Տե՛ս, Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի 30.07.2003թ. թիվ 1 BvR 792/03 որոշումը // Bulletin of Venice Commission of November 2004, էջ 470,

Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի 14.01.2014թ. թիվ 1 BvR 2998/11, 1 BvR 236/12 որոշումներ // Bulletin of Venice Commission of December 2014, էջ 77,

Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի 07.03.2017թ. թիվ 1 BvR 1314/12, 1 BvR 1630/12, 1 BvR 1694/13, 1 BvR 1874/13 որոշումներ // Bulletin of Venice Commission of December 2014, էջ 55

³ Տե՛ս, Գերմանիայի Սահմանադրության 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր գերմանացիներն իրավունք ունեն ազատորեն ընտրել իրենց գրադաստինքն ու մասնագիտությունը, աշխատանքի վայրը և ուսուցման վայրը:

Չքաղաքներով և մասնագիտությամբ գրադաստինքն ու մասնագիտությամբ կարող է կարգավորվել օրենքով կամ օրենքին համապատասխան:

⁴ Տե՛ս, Long-Haul Track Licensing (1975) և Technical Licensing (1992) դատական գործերի վերլուծությունը Դոնալդ Կոմմերսի՝ “The Constitutional Jurisprudence of the Federal Republic of Germany” գործում:

⁵ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է 01.01.2018թ.:

⁶ Իհարկե, այս ցանկը չի կարելի համարել սպառիչ, քանի որ այն տրված է միայն «Չքաղաքածության մասին» ՀՀ օրենքում գրադաստության եզրույթը բացահայտելու նպատակով:

⁷ Օրինակ, խնդրահարույց է «Անհատ ձեռնարկատիրոց մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում առկա կարգավորումն առ այն, որ անհատ ձեռնարկատեր չի կարող հաշվառվել սնանկ ճանաչված այն ֆիզիկական անձը, որը դիմում տալու պահին չի կատարել սնանկ ճանաչելու համար իմբը հանդիսացած իր պարտավորությունները:

Աշխատանքի ազատ ընտրության նման լայն սահմանափակման հետևանքով, կարող է ստացվել, որ բոլոր սնանկ ճանաչված ֆիզիկական անձներ, ընտրելով գրադաստություն, չեն կարող դրանով գրադաստինքն (օրինակ, սնանկ ճանաչված անձը, ստանալով փաստարանի արտոնագիր, չի կարող գրադաստինքն փաստարանական գործունեությամբ, քանի որ ունի չկատարված դրամական պարտավորություններ): Նման իրավակարգավորումն, ըստ Էուրյան, բույլ չի տալիս անձին վերաբներվել հասարակություն, ինչպես նաև զրկում է անձին ապրուստի միջոց վաստակելու հնարավորությունից, համապատասխանարար գրկելով նաև սնանկ ճանաչելու համար իմբը հանդիսացած պարտավորությունները նարելու հնարավորությունից: Բացի այդ, «Անհնկության մասին» ՀՀ օրենքով (հոդված 97-րդ) սահմանված է ֆիզիկական անձի սնանկ ճանաչվելու արդյունքում դրամական պարտավորություններից ազատվելու իրավական հետևանքը (որոշակի բացառություններով, օրինակ՝ սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրերի ընթացքում ստանած պարտավորություններից չի ազատվում): Սինչեն, անհատ ձեռնարկատեր դառնալու համար սնանկ ճանաչված ֆիզիկական անձի չկատարած բոլոր պարտավորություններն են հանդիսանում արգելվ, ինչը չի բխում իրավական որոշակիության սկզբունքից և հանդիսանում է աշխատանքի ազատ ընտրության իրավունքի անհարկի սահմանափակում:

Օգուազործված գրականության ցանկ

1. Попова А. Конституционное право зарубежных стран. Краткий курс лекций, Юрайт, М., 2012, С. 44-45.
2. Blanpain R., Araki T., Ouchi Sh. Labour Law in Motion: Diversification of the Labour Force & Terms and Conditions of Employment, Kluwer Law International, the Netherlands, 2005, էջ 136:
3. Sadurski W. Rights before Courts. A Study of Constitutional Courts in Postcommunist States of Central and Eastern Europe, Second Edition, Springer, 2014, էջ 276:
4. Decision of Constitutional Court of Hungary N 54/1993:
5. Decision of Constitutional Court of Hungary N 21/1994:
6. Solyom L., Brunner G., Breyer S. G. Constitutional Judiciary in a New Democracy: The Hungarian Constitutional Court, University of Michigan Press, USA, 2000, էջ 296:
7. Պորտուգալիայի Սահմանադրական դատարանի 02.05.2001թ. թիվ 187/01 որոշում // Bulletin of Venice Commission of March 2002, էջեր 331-334:
8. Լիխտենշտեյնի Պետական Խորհրդի 31.10.2005թ. թիվ StGH 2004/76 որոշում // Bulletin of Venice Commission of October 2006, էջ 460:
9. Currie D. P. The Constitution of the Federal Republic of Germany, the University of Chicago Press, Chicago, 1994, էջեր 299-300:
10. Vobkuhle A., Bumke Ch. German Constitutional Law: Introduction, Cases and Principles, Oxford University Press, Oxford, 2019, էջ 248:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

11. Donald P. Kommers, The Constitutional Jurisprudence of the Federal Republic of Germany, 2nd edition, Duke University Press, Durham and London, 1997, էջ 278:
12. Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի 14.01.2014թ. թիվ 1 BvR 2998/11, 1 BvR 236/12 որոշումներ // Bulletin of Venice Commission of December 2014, էջ 77:
13. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ Գ. Հարությունյանի խմբագրությամբ, Երևան, Իրավունք, 2010, էջ 389:
14. ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2014թ. թիվ ՍԴ-1148 որոշում:
15. ՀՀ աշխատանքային օրենսգիրը՝ ընդունված 09.11.2004թ.:
16. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված՝ 11.12.2013թ.:
17. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով:

Изабелла Искандарян

Соискатель кафедры теории права и Конституционного
права Российско-Армянского Университета

РЕЗЮМЕ

Некоторые правовые вопросы свободного выбора труда в свете международной практики

Настоящая статья рассматривает судебно-правовой опыт некоторых стран в сфере права на свободный выбор труда, представляет экономическую основу этого права, выявляет содержание и применение этого права в Республике Армения. В статье обосновывается, что выбор занятий и сферы деятельности является частью права на свободный выбор труда, который может осуществляться путем самостоятельной и экономической деятельности. В статье делается заключение о том, что право на свободный выбор труда является одним из способов осуществления экономической деятельности и в результате законодательных регулирований экономической деятельности право на свободный выбор труда может ограничиваться.

Ключевые слова: право на труд, право на свободный выбор труда, право на экономическую деятельность, право на предпринимательскую деятельность.

Izabella Iskandaryan

Researcher at Russian-Armenian University
Department of Theory of Law and Constitutional Law

SUMMARY

Legal aspects of free choice of employment in the light of international practice

The article examines the international judicial practice of various states in the field of the right to free choice of employment, reveals its economic basis and presents the content of this right and the practice of its implementation in the Republic of Armenia. The article substantiates that the choice of occupation is also a part of free choice of employment, and it can be practiced in a self-employed manner and as an economic activity. The article concludes that free choice of employment is one of the tools of implementation of the right to economic activity, thus in the course of legal regulations of economic activities, the right to free choice of employment may encounter limitations.

Key words: right to work, right to free choice of employment, right to economic activity, right to entrepreneurship.

Բնագիրը ներկայացվել է 09.04.2020թ.

Ընդունվել է տպագրության 28.04.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Ս. Իսկանդարյանը

Ո-ՈԲԵՐՏ ՄՀԵՐՅԱՆ

Իրավագիտության մագիստրոս

**ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Սույն աշխատանքն ուսումնասիրում է մեղադրանքի գիտական և օրենսդրական բնորոշումները, դրա քրեադրատավարական և նյութական դատավարության հմաստներով տեսական ըմբռնումները, ինչպես գործող օրենսգրքում, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ)՝ մեղադրանքի վերաբերյալ տեղ գտած դրույթներում, ՀՀ Վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի՝ թեմային վերաբերելի մի շարք որոշումներում և վճիռներում: Ուսումնասիրել ենք նաև մեղադրանքի կառուցվածքային նորմեները, դրա պարզ և բարդ տեսակները: Որոշ առաջարկների և նկատառումների հետ մեկտեղ առաջարկում ենք նաև մեղադրանքի ընդհանրական հասկացությունը, որն էլ ամփոփում է սույն գիտական հոդվածը:

Հիմնարարեր՝ մեղադրանք, նյութական իմաստով մեղադրանք, դատավարական իմաստով մեղադրանք, որպես մեղադրյալ ներգրավել, քրեական հետապնդում հարուցել, դատախազ, մեղադրանք առաջարել, մեղադրանք ներկայացնել, մեղադրանքի երկարը և եռատարը մողելներ, պարզ մեղադրանք, բարդ մեղադրանք, Նախագիծ, Վճռաբեկ դատարան, Եվրոպական դատարան:

Մեղադրանքը քրեական դատավարության շարժի ուժն է, որի միջոցով ապահովում է քրեական հետապնդման կառուցվակարգի գործունեությունը: Առանց մեղադրանքի քրեական արդարադատությունն առարկայագործ է: Մեղադրանքի գործառույթը սերտորեն կապված է ինչպես պաշտպանության, այնպես էլ արդարադատության իրականացման գործառույթի հետ: «Մեղադրանք» հասկացությունն իր բնորոշումը և բնութագիրը ստացել է քրեական դատավարության գիտության և օրենսդրության կողմից:

Քրեական դատավարության գիտության կողմից մեղադրանքի բնորոշման հետ կապված առկա են բազում տեսական բանավեճեր և դրա իմաստի ընկալման տարբեր մոտեցումներ: Մեղադրանքը բնորոշվում է՝ որպես քրեադրատավարական գործառույթ և մեղադրողի գործունեության միջոց՝, որպես անձին մեղսագրվող հակադրավական և հանրության հանար վտանգավոր գործողությունների կամ անգործությունների ամբողջություն՝, որպես դատավարական հարաբերություն, որը ծագում է պետության և որպես մեղադրյալ ներգրավված անձին՝, որպես դատարանին ուղղված պահանջ՝ մեղադրանքի մասին պահանջել մեղադրյալին⁵:

Որոշ քրեադրատավարագետների կողմից մեղադրանքը ներկայացվում է որպես քրեական հայց, որը մեղադրական իշխանությունը ներկայացնում է դատարան: Քրեական հայցի առարկան են կազմում՝ հանցագործություն կատարելու մեջ մեղադրյալի մեղավորության մասին պնդումը, և

դատարանին հասցեագրված պահանջը՝ մեղավոր ճանաչված անձին նկատմամբ կիրառել քրեական օրենսգիրը⁶:

Տեսության մեջ առավել տարածված մոտեցում է «մեղադրանք» հասկացության իմաստային ընկալումը նյութական և դատավարական իմաստներով: Նյութական իմաստով՝ մեղադրանքը կոնկրետ անձին մեղսագրվող հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) նկարագրությունն է քրեադրատավարական փաստաթղթերում, իսկ դատավարական իմաստով՝ օրենքով իրավասու մարմինների և անձանց՝ հանցագործություն կատարելու մեջ մեղադրին հայտնաբերելուն և նրան դատապարտելուն ուղղված դատավարական գործունեությունը:

Մեր տեսակետը հետևյալն է. նյութական իմաստով՝ մեղադրանքը կախվածություն ունի մեղադրանքից՝ քրեադրատավարական իմաստով: Իրավասու մարմինների կողմից հանցագործության բացահայտմանն ուղղված գործողություններն ի վերջո հանգեցնում են դրանց արդյունքից ձեռք բերված անփոփմանը քրեադրատավարական փաստաթղթերում՝ հանցավոր արարքի նկարագրման եղանակով: Ինքնին մեղադրանքը քրեադրատավարական կատեղորիա է, ուստի, եթե այն դիտարկում ենք քրեադրատավարական և նյութական իմաստների տեսանկյունից, ապա, միանշանակորեն, առաջնահերթությունը մենք տալիս ենք քրեադրատավարականին: Որպես ասվածի հիմնավորում՝ նշենք, որ կոնկրետ անձին մեղ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սագրվող արարքը նկարագրելիս, մեղադրանքը հիմնվում է քրեական օրենսգրքի նորմերի վրա, քանի որ արարքի իրավաբանական որակումը ձևակերպված է հենց քրեափական նորմերում։ Սակայն, վերացական ձևով հանցակազմերը դիտարկելիս, առանց կոնկրետ անձի արարքը որակելու նպատակ հետապնդելու, մենք որևէ աղերս չենք ունենում մեղադրանքի հետ, ուստի հանցակազմը քրեափական կատեգորիա է, իսկ մեղադրանքը՝ քրեադատավարական։

Մեղադրանքի օրենսդրական բնորոշումները պայմանականորեն կարող ենք բաժանել 3 խմբի՝ ՀՀ քրեական դատավարության բուն օրենսգրքում (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր. կամ գործող օրենսգրք), ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) վճիռներում ձևակերպված մեկնաբանություններ։

«Մեղադրանք» հասկացության օրենսդրական բովանդակության բացահայտումը գործնական կարևորություն ունի դատավարական մի շարք այլ կառուցակարգերի, մասնավորապես, մեղադրանքը փոփոխելու և լրացնելու, մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտների պատշաճ կիրառության համար։ Բացի այդ, այն սերտորեն կապված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետով երաշխավորված՝ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացված լինելով՝ անձի նվազագույն իրավունքի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 67-րդ հոդվածով, ՀՀ քր. դատ. օր.-ի 19-րդ հոդվածով սահմանված՝ պաշտպանության իրավունքի արդյունավետ ապահովման հետ։

ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ մեղադրանքը, քր. դատ. օր.-ով նախատեսված կարգով, ներկայացված հիմնավորում է՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չբույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին։ Նշված բնորոշումից բխում է, որ «մեղադրանք» եզրույթը ՀՀ քր. դատ. օր.-ից՝ ընկալվում է նյութափական իմաստով։ Նկատենք, որ օրենսդրական բնորոշման մեջ նշվում են «որոշակի անձ», «քրեական օրենքով չբույլատրված արարք» ձևակերպումները, ինչը բույլ է տալս եզրակացնել, որ «մեղադրանք» եզրույթը բացարձակ չի կապվում հանցագործության կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի հետ։ Դասական առումով մե-

դադրանքի հետ են առնչվում նաև, օրինակ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը։

Ձևակերպման առումով մոտեցումը այլ է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով, որի 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ մեղադրանքը որոշակի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին վարկած է, որն ունի փաստական և իրավական հիմնավորում։ Մեղադրանքի փաստական և իրավական կողմերը միևնույն իրավական հասկացության անբաժանելի տարրերն են, որոնք անպայմանորեն պետք է փոխամածայնեցված լինեն և չհականեն միմյանց, հակառակ պարագայում՝ կառաջանա ներքին անհամապատասխանություն, ինչը կիանգեցնի մեղադրանքի ոչ լրիվության ու անհստակության՝ իր հետ բերելով առաջացած բացքողումները շտկելու անհրաժեշտություն՝ անձին ստիպելով իրավունքների սահմանափակման հանգամանքը շարունակել կրել վարույթն իրականացնող մարմնի թերացումների պատճառով։ Ուստի Նախագծի որդեգրած մոտեցումը՝ օրենսդրական մակարդակով մեղադրանքի կառուցվածքը փաստականի և իրավականի բաժանելը, կարծում ենք, որ արդարացված է, քանի որ այդ պարագայում առավել ճիշտ կասհմանագատվեն մեղադրանքը փոփոխելու ռեժիմները, մեղադրանքը փոփոխելու իրավասությանք օժտված յուրաքանչյուր սուրյեկտի կողմից մեղադրանքը փոփոխելու սահմանները։ պատահական չէ, որ նման պարագայում որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու իրավակարգավորումները ևս Նախագծի հեղինակները փորձել են համապատասխանեցնել մեղադրանքի առաջարկվող հասկացությանը։

Նախագծի 6-րդ հոդվածի 41-րդ կետը, դատախազի կողմից անձի ենթադրյալ հանցագոր արարքը նկարագրող և դրա իրավական գնահատականը պարունակող որոշում կայացնելը կամ ենթադրյալ տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելը, բնորոշել է որպես քրեական հետապնդման հարուցում։ Նախագծի 189-րդ հոդվածով սահմանվում է, որ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցվում է հսկող դատախազի որոշմամբ՝ նրա կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա։ Վերոնշյալ փաստերի առկայության դեպքում քննիչն իրավասում է հսկող դատախազին ներկայացնել անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին միջնորդություն՝ դրան կցելով վարույթի նյութերը և մատնանշելով այդ փաստերը հաստատող ապացույցները։

Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նշվում են մեղադրանքի փաստական հիմքը և արարքի իրավական գնահատականը: Դատախազն իրավունք չունի քննիչին հանձնարարել ներկայացնելու անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշակի բովանդակության միջնորդություն կամ կազմելու այդպիսի որոշման նախագիծ:

Ըստ էության, Նախագծի 189-րդ հոդվածով սահմանված հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը գործող օրենսգրքի որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ ուրվագծով մեղադրանքի բովանդակությունն արտահայտող դատավարական փաստաթղթի նոր դրսեռումն է:

Հատկանշական է, որ դեռևս 2007 թվականին՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը Ա. Սերոբյանի գործով՝ արտահայտել էր հետևյալ դիրքորոշումը. «Եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում օգտագործված «մեղադրանք» եզրույթը հասկացվի սոսկ «քրեափրավական որակում» իմաստով և այն իր մեջ չներառի արարքի քրեափրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալ և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կիսի՝ վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի քրեափրավական որակությունը պաշտպանվելու իրավունքը առարկայագուրկ է»: Ուստի մեղադրանքի փաստական հիմքի և իրավական գնահատականի առանձնահատուկ նախատեսումը քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ, կարծում ենք, որ արդարացված է:

Նկատենք, որ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման կայացումը Նախագծով վերածվել է դատախազի մենաշնորհային իրավունքի՝ ի հաշիվ գործող օրենսգրքով առկա՝ քննիչի համապատասխան իրավունքի սահմանափակման: Գործող իրավակարգավորումներով դատախազը ստուգում է հետաքննության և նախաքննության մարմինների գործողությունների և դրանց հիման վրա կայացվող դատավարական փաստաթղթերի, այդ թվում՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման օրինականությունը: Գտնում ենք, որ դրանց միայն օրինականությունը ստուգելու բավարար չէ: Եթե հարցը դիտարկենք անձի իրավունքների սահմանափակման տեսանկյունից, ապա ակնհայտ է դառնում, որ անձի իրավունքները սահմանափակվում են կամ դրանց առավել սահմանափակման հմարավորությունները մեծա-

նում են հենց մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացման պահից: Օրինակ՝ ինչպես գործող օրենսգրքով, այնպես էլ Նախագծով՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառման իրավաչափության պայման է հանդիսանում. անձի՝ մեղադրյալի, կարգավիճակ ձեռք բերած լինելը: Հետևապես, հարցը դիտարկելով այդ հարդությունում՝ գտնում ենք, որ դատախազի՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման միայն օրինականության ստուգումը բավարար չէ, և անհրաժեշտ է այս դեպքում կիրառել ստուգման առավել բարձր չափանիշներ, որը պետք է դրսուրվի գործով առկա փաստերի անմիջական հետազոտմաբ և գնահատմաբ: Մեղադրանքի պաշտպանության գործառույթը Սահմանադրությունը վերապահել է դատախազին, ուստի դատախազը պետք է պաշտպանի այն, ինչ ինքն է գնահատել և առաջ քաշել, ոչ թե այն՝ ինչը ստուգել, իսկ որոշ դեպքերում, ընդամենը բերել «վրայով անցել» և հաստատել դրա օրինականությունը:

Անհրաժեշտ ենք համարում նաև Նախագծով քրեական հետապնդում հարուցելու մասին քննիչի միջնորդության ստացման պահից դրա բավարարման և համապատասխան դատավարական ակտի կայացման կամ միջնորդության մերժման մասին որոշման կայացման համար սահմանված 12 ժամյա պահանջը փոփոխել և դարձնել 36 ժամ՝ հիմնավորված, պատճառաբանված, պատշաճ և որակով դատավարական ակտ կայացնելու նկատառումով: Գտնում ենք, որ անձի իրավունքների վրա էականորեն ազդող նման կարևորության փաստաթղթի կազմումը 12 ժամում կատարելու պահանջը կարող է հանգեցնել բազմաթիվ ծանր հետևանքների, մասնավորապես՝ որոշ դեպքերում միջնորդության անհարկի բավարարման՝ հետևապես քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման կայացման, կամ թեկուզ արդարացիորեն միջնորդության բավարարման և համապատասխան որոշման կայացման, սակայն թույլ պատճառաբանվածությամբ և հիմնավորվածությամբ:

Նախագծի 190-րդ հոդվածը սահմանում է, որ քննիչը մեղադրյալին մեղադրանք է ներկայացնելու քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը ստանալուց հետո 18 ժամվա ընթացքում: Այնուհետ քննիչը նրան է հանձնում քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը, պարզաբնում մեղադրանքի փաստական հիմքը և իրավական գնահատականը, պարզաբնում իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև մեղադրյալին հանձնում է դրանց ցանկը: Վերոնշյալ գործողությունների կատարումը հաս-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տատվում է քննիչի կողմից կազմված արձանագրությամբ, որը ստորագրում են քննիչը, մեղադրյալը և մասնակցող այլ անձինք:

Ինչպես նկատում ենք, այս պարագայում և Նախագծում կա փոփոխություն առ այն, որ մեղադրանք առաջադրելու ինստիտուտը վերանվանվել է մեղադրանք ներկայացնելու, ինչն ավելի լավ է արտահայտում այդ քրեադատավարական ինստիտուտի էությունը: Կարծում ենք, որ առաջին հայցքից ձևական թվացող այս փոփոխությունն իրականում առավել քան բովանդակային բնույթ է կրում: «Առաջադրել» նշանակում է հայտնել, հայտարարել որևէ բանի մասին՝ պահանջելով բավարարում, բացատրություն: «Ներկայացնել» նշանակում է ցույց տալ որևէ բան հաստատող փաստաթուղթ և այլն¹⁰: Հաշվի առնելով բայերի իմաստային երանգներն ու մեղադրյալի՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը՝ կարծում ենք, որ «ներկայացնել» ձևակերպման կիրառումն օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Ինչ վերաբերում է հոդվածի բուն բովանդակության փոփոխությանն, ապա նշենք, որ այս պարագայում ևս հստակեցվել է մեղադրանքի էությունն¹¹ ու դրա բաժնանումը փաստական հիմքի և իրավական գնահատականի, ինչը մեղադրյալին պարզաբանվում է:

Մեղադրանքի և դրա արտահայտման հիմնական եղանակներին՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմանը և մեղադրական եզրակացությանը, անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում: Սուորև անդրադառնանք դրանցից մի քանիսին՝ մեջբերելով նաև որոշումների հետ սերտ աղերս ունեցող որոշ իրավակարգավորումներ:

Ա. Պայպյանի գործով¹² կայացված որոշման մեջ, Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևակորել այն մասին, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 202-րդ (որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը և կարգը) և 270-րդ (մեղադրական եզրակացությունը) հոդվածների վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը երկու դեպքում էլ օգտագործել է «մեղադրանքի ձևակերպում» եզրույթը, որի կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար փունքավոր և հակադրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը¹³: Հեղինակների երկրորդ խումբն առանձնացնում է կատարված հանցագործության փաստական հանգամանքներն ու մեղադրանքի իրավական ձևակերպումը, որն իրենից ներկայացնում է կոնկրետ հանցագործության հատկանիշները, և արարքի իրավաբանական որակումը¹⁴: Այսինքն՝ հեղինակների այս խումբը մեղադրանքը դիտարկում է եռատար կառուցվածքով:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար փունքավոր, հակադրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն:

Վճռաբեկ դատարանի կողմից մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորվել է այն հանգամանքով, որ համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը:

Եսության մեջ մեղադրանքի կառուցվածքի առումով առկա է երկու հիմնական տեսակետ: Առաջին տեսակետի կողմնակիցները մեղադրանքը դիտարկում են երկտարր կառուցվածքով, համաձայն որի՝ մեղադրանքի ձևակերպումն հետևյալն է՝ գործով հաստատված, հանրության համար փունքավոր և հակադրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին, և մեղադրանքի իրավաբանական որակումը՝ քրեական օրենքի այն կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը¹³: Հեղինակների երկրորդ խումբն առանձնացնում է կատարված հանցագործության փաստական հանգամանքներն ու մեղադրանքի իրավական ձևակերպումը, որն իրենից ներկայացնում է կոնկրետ հանցագործության հատկանիշները, և արարքի իրավաբանական որակումը¹⁴: Այսինքն՝ հեղինակների այս խումբը մեղադրանքը դիտարկում է եռատար կառուցվածքով:

Թե՛ Եվրոպական դատարանի, թե՛ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներում զարգացվել է մեղադրանքի երկտարր կառուցվածքի գաղափարը: Այսպես, անձի՝ իրեն առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու իրավունքի մեկնաբանության համատեքստում Եվրոպական

դատարանն իր նախադեպային իրավունքում իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ անձը պետք է պաշտոնապես տեղեկացվի իրեն առաջադրված մեղադրանքի փաստական հիմքի՝ իրեն մեղսագրվող արարքի փաստական հանգամանքների (մեղադրանքի հիմք) և մեղադրանքի իրավական հիմքի՝ իրեն մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականի (մեղադրանքի բնույթ) մասին¹⁵: Ընդ որում, Եվրոպական դատարանը նշված իրավունքը դիտարկում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (թ) ենթակետով երաշխավորված՝ անձի՝ իր պաշտպանությանը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու իրավունքի հետ փոխադարձ կապի մեջ¹⁶:

Ինչպես արդեն նշել ենք, մեղադրանքի կառուցվածքի վերաբերյալ նույնանան իրավական դիրքորոշում է արտահատել նաև Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Գ. Շատարյանի և այլոց գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշել է. «Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար փոխանակող և հակահրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքի ձևակերպմանը բովանդակային առումով ներկայացվող պահանջների բացահայտման հարցը պետք է քննարկել արդար դատարներության հիմնարար իրավունքի համատեքստում, և «...համապատասխան փաստարդերում մեղադրանքի ամրագրումը հանդիսանում է այն դատավարական միջոցը, որով ապահովում է քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքը տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի իրավական և փաստական հիմքերի մասին (...): (...) [Մեղադրանքի ձևակերպման մեջ], բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագրության տեղից, ժամանակից և եղանակից, մանրանամորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաբարավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագրության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, եթե իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական

փաստարդերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ (...)»:

Տեսական գրականության մեջ առանձնացվում են նաև «պարզ» և «քարդ» մեղադրանքները: Այս դասակարգման հիմքում ընկած են մեղադրանքների ձևակերպման կառուցվածքների միջև օրյեկտիվորեն գոյություն ունեցող տարբերությունները և դրանց հարաբերակցությունը քրեական օրենքի մեկ կամ մի քանի նորմերի հետ, մեղադրանքում ներառված հանցագրությունների քանակը, ինչպես նաև այն հանգամանքը, թե արարքը մեղսագրվում է մեկ, թե մի քանի անձանց:

Պարզ մեղադրանքն անձին մեղադրելն է մեկ պարզ հանցագրության կատարման մեջ: Այս դեպքում մեղադրյալին վերագրվում է մեկ պարզ հանցագրության կատարում, որը որակվում է քրեական օրենսգրքի մեկ նորմով և չի կարող բաժանվել առանձին հանցագրությունների:

Բարդ մեղադրանքն առկա է, եթե անձին առաջարկել է այնպիսի ձևակերպման մեղադրանք,

ա) որը թեև համապատասխանում է քրեաբարավական մեկ նորմի հատկանիշներին, սակայն բաղկացած է մի քանի կետերից, օրինակ՝ մի քանի հանցավոր արարքներ կատարելու մեջ անձին առաջարկված մեղադրանքը,

բ) որի ձևակերպումը բաժանված չէ կետերի, քանի այն ներառում է քրեական օրենքի տարբեր նորմերով որակվող մի քանի հանցավոր արարքների կատարում: Դա կարող է լինել հանցագրությունների իդեալական համակցության դեպքում²¹:

«Քարդ» մեղադրանքի վերաբերյալ Ա., Ս. և Ա. Բաղալյանների գործով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի հանցակիցներից յուրաքանչյուրին մեղսագրվող գործողությունների (անգործության) մանրակրկիտ նկարագրությունը, այդ բփում՝ հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները, որի դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել պաշտպանության իրավունքի և մրցակցային դատավարության իրականացումը: Բացի այդ, արարքը մի խումք անձանց կողմից կատարված լինելու դեպքում մեղադրանք առաջարկելիս համապատասխան դատավարական փաստարդերում հանցակիցներից յուրաքանչյուրի հանցավոր գործողությունների նկարագրությունն անհրաժեշտ նախապայման է՝ անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունք-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ներին համապատասխան նրանց քրեական պատասխանատվության հարցը լուծելու համար:

Ուշագրավ է նաև Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվող՝ «քրեական մեղադրանք» հասկացության կապակցությամբ: Մասնավորապես, «Եվկեներն ընդդեմ Բելգիայի գործով վճռում²³ Եվրոպական դատարանը նշել է, որ «քրեական մեղադրանք» եզրույթը պետք է հասկանալ ոչ թե ձևական (փաստարդային), այլ՝ բովանդակային իմաստով: «Մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես արված տեղեկացում այն մասին, որ առկա է նրա կողմից քրեորեն հետապնդելի արարք կատարելու վերաբերյալ ենթադրություն:»

Հետագայում Շուրինսկին ընդդեմ Սլովենիայի գործով վճռում²⁴ Եվրոպական դատարանը, զարգացնելով իր դիրքորոշումը, ընդգծել է, որ անձին կատամամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետը սահմանում է, որ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու, իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին: Ի պաշտպանություն այս դրույթի կենսագործմանը՝ Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետի դրույթները թելադրում են՝ շահագրգուված անձին «մեղադրանքի» մասին տեղեկացնելիս ցուցաբերել ծայրահեղ զգուշավոր մոտեցում: Մեղադրական եզրակացությունը վճռորոշ դեր է խաղում քրեական հետապնդման մեջ. դրա հանձնման պահից մեղադրվող անձը համարվում է իրեն ներկայացված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին պաշտոնապես և գրավոր ձևով տեղեկացված:»²⁵:

Զարգացնելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Եվրոպական դատարանը նշել է. «...մեղադրյալին փոխանցման ենթակա անհրաժեշտ տեղեկատվությունը վերաբերում է հանցանքի «քննույթին և հիմքին»: «Քննույթ» նշանակում է այն հանցանքը, որի համար նա մեղադրվում է, իսկ «հիմք» բառը ցույց է տալիս այն գործողությունները, որոնք վերջինս են-

թաղրաբար կատարել է: Հանցագործության մանրամասները չափազանց կարևոր են, քանի որ դրանց մատուցման պահից է կասկածյալը պաշտոնապես տեղեկացվում իր դեմ ներկայացված մեղադրանքների փաստական և իրավավան հիմքերի մասին:»²⁶:

«Մեղադրանք» հասկացության վերաբերյալ պողիտիվ իրավունքի և նախադեպային իրավունքի համակարգային դիտարկման և համադրման արդյունքում, կարելի է նշել, որ նեղ իմաստով մեղադրանքն արտացոլվում է՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման մեջ կամ մեղադրական դատավճռում: Լայն իմաստով մեղադրանքն արտացոլվում է ցանկացած դատավարական ակտում, որտեղ տրվում են այնպիսի ձևակերպումներ կամ կատարվում են այնպիսի գործողություններ, որոնցից հետևում է, որ կոնկրետ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք (օրինակ՝ քրեական գործ հարուցելու մասին որոշում, անձին կատամամբ ձերբակալում կամ խափանման միջոց կիրառելու մասին փաստարդերում և այլն):

Այսպիսով, ընդհանրացնելով մեղադրանքի ձևակերպման շուրջ առկա օրենսդրական սահմանումները, Նախագծի մոտեցումը և քրեադատավարագետների կարծիքները՝ առաջարկում ենք դրա սահմանման հետևյալ տարրերակը. մեղադրանքը քր. դատ. օր.-ով նախատեսված կարգով իրավասու մարմնի կողմից որոշակի անձի վերաբերյալ ունեցած և պատշաճ գնահատված տեղեկատվության հիման վրա առաջարկված պատճառաբանված և հիմնավորված վարկածն է այդ անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու մասին, որի էությունն են կազմում դրա հիմքը՝ մեղադրվող արարքի փաստական հանգամանքները և բնույթը՝ անձին մեղադրվող արարքին տրված իրավական գնահատականը:

- ¹ Стrogович М. Курс советского уголовного процесса. Т. 1. М., 1968, С. 7.
- ² Мизулина Е. Уголовный процесс: концепция самоограничения государства. Тарту, 1991. С. 14-26.
- ³ Жогин Н. Предварительное следствие/ Н. В. Жогин, Ф. Н. Фаткулин. - М.: Юрид. лит., 1965, С. 189.
- ⁴ Даев В. К понятию обвинения в советском уголовном процессе// Правоведение. 1970. N 1. С. 85.
- ⁵ Полянский Н. К вопросу о юридической природе обвинения перед судом// Правоведение. 1960, N 1, С. 110.
- ⁶ Александрова И., Круглов И., Кучин А., Смолин А.Г. Уголовно-правовые и уголовно-процессуальные аспекты сделки о признании уголовного иска; МВД РФ, Нижегородская академия. Н. Новгород, 2007, С. 24.
- ⁷ Фаткулин Ф. Обвинение и судебный приговор. Казань, 1963, С. 13-25.
- ⁸ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ. - հ. 3. -Եր. 2016. -Էջ 218:
- ⁹ Արքուր Սերոբյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշում:
- ¹⁰ Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակություն, Երևան, 1976թ., էջեր 103, 1065:
- ¹¹ Գործող օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած «մեղադրանքի էություն» ձևակերպումն ընդհանրական է և ոչ լիարժեք, ուստի չենք կարող չհամաձայնել Նախագծի հեղինակների հետ՝ այն որպես մեղադրանքի «փաստական հիմք և իրավական զնահատական» ներկայացնելու հարցում:
- ¹² Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշում, 17-19-րդ կետեր:
- ¹³ Добропольская Т. Изменение обвинения в судебных стадиях советского уголовного процесса. М., 1977, С. 11-16.
- ¹⁴ Фаткулин Ф. Обвинение и изменение его в суде. азань, 1963, С. 35-43.
- ¹⁵ Penev v. Bulgaria գործով Եվրոպական դատարանի 2010 թվականի հունվարի 7-ի վճիռ, գանգատ թիվ 20494/04, 33-րդ և 42-րդ կետեր:
- ¹⁶ Pelissier and Sassi v. France գործով Եվրոպական դատարանի Սեծ պալատի 1999 թվականի մարտի 25-ի վճիռ, գանգատ թիվ 25444/94, կետ 54:
- ¹⁷ Արդեն նշել ենք, որ մեղադրանքի կառուցվածքի վերաբերյալ Նախագծի մոտեցումը՝ երկտարր մողելն է, ուստի կոկոնությունից խուսափելու համար այսուել չենք անդրադառնա այդ հարցին: Տե՛ս 2-րդ էջում:
- ¹⁸ Գևորգ Շաղարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԸԴ/0002/01/11 որոշում, 15-րդ, 16-րդ և 21-րդ կետեր:
- ¹⁹ Տե՛ս նոյն որոշման 16-րդ և 21-րդ կետերը:
- ²⁰ Ровнейко В. Изменение обвинения в суде первой инстанции по Российскому уголовно-процессуальному законодательству. Дис.... канд. юрид.наук. Ижевск, 1996, С. 34-35.
- ²¹ Добропольская Т. Изменение обвинения в судебных стадиях советского уголовного процесса. М., 1977. С. 22.
- ²² Արքուր, Մացակ և Արմեն Քադայյանների գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0227/01/12 որոշում, 18-19 կետեր:
- ²³ Դեվերն ընդդեմ Բելգիայի (Deweert v. Belgium) գործով Եվրոպական դատարանի 1980 թվականի փետրվարի 27-ի վճիռ, գանգատ թիվ 6903/75, կետ 44:
- ²⁴ Շորինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia) գործով Եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 18-ի վճիռ, գանգատ թիվ 19611/04, կետ 62:
- ²⁵ Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի (Kamasinski v. Austria) գործով Եվրոպական դատարանի 1989 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ, գանգատ թիվ 9783/82, կետ 79:
- ²⁶ Pelissier and Sassi v. France գործով Եվրոպական դատարանի Սեծ պալատի 1999 թվականի մարտի 25-ի վճիռ, գանգատ թիվ 25444/94, կետ 51:
- ²⁷ Ղամբարյան Ա. Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում: Ուսումնական ձեռնարկ: Երևան: 2016, էջ 37:

Роберт Мгерян
Магистр права

РЕЗЮМЕ

Понятие обвинения и функциональный характер в уголовном процессе РА

Данная работа изучает научные и законодательные характеристики обвинения, теоретические подходы связанные с его уголовно-процессуальным и материально-правовым понятиям, как в действующем кодексе, так же в Проекте, ряд решения и постановления Кассационного суда РА и Европейского суда. А также изучали структурные модели обвинения, его простые и сложные виды. Вместе с некоторыми предложениями предлагаем позицию общей концепции обвинения, что и обобщает данная научная статья.

Ключевые слова: обвинение, обвинение в материально-правовом смысле, обвинение в процессуальном смысле, привлекать в качестве обвиняемого, возбудить уголовное преследование, прокурор, предъявить обвинение, представить обвинение, двухэлементные и трехэлементные модели обвинения, простое обвинение, сложное обвинение, Проект, Кассационный суд, Европейский суд.

Robert Mheryan
Master of Laws

SUMMARY

The concept of a charge and its functional characteristics in the criminal procedure of RA

The following article discusses scientific and legal specifications of the charge, theoretical perceptions of its material-legal and judicial-legal senses, clauses on a charge both in the current Code and the Draft, a range of decisions and judgments related to the topic made by the Court of Cassation of RA and the European Court. We have also investigated structural models of a charge, its simple and complex types. Along with some suggestions and considerations we suggest general concept of a charge which summarizes this scientific article.

Key words: charge, material-legal charge, judicial-legal charge, involve as an accused, bring criminal prosecution, prosecutor, file a charge, bring a charge, two-element and three-element models of a charge, simple charge, complex charge, Draft, Court of Cassation, European Court.

Բնագիրը ներկայացվել է 17.03.2020թ.
Ընդունվել է տպագրության 30.04.2020թ.
Հողածր Երաշխավորել է տպագրության (գրախոսել է)
իրավաբանական գիտությունների թեկնածու S. Սուջյանը

ԱՀԱՄՈՆ ՌՈՒՇԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տեղեկատվության անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի ծրագրային ճարտարագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

ԿԻԲԵՐՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՍԱՆ ԻՐԱՎԱԿԱՌՈՒՅՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀՆԴԱՆՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն հոդվածում տարբում է համաշխարհային սոցիալական երևոյթի՝ կիբերհանձագործության վերլուծություն, որն իրենից ենթադրում է նորարար տեխնոլոգիաների ոլորտում անօրինական գործունեություն, որը վնասում է պետությունների, կազմակերպությունների և անձանց շահերին: Սույն հոդվածում առաջարկվում են կիբերանվտանգության ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ (օրինակ՝ տեղեկատվական առցանց հարթակի ստեղծումը), որոնք կապահովեն համեմատաբար կիբերանվտանգության բարձր մակարդակ: Հոդվածի շրջանակներում տրվում է կիբերհանձագործությունների կանխարգելման իրավակառուցակարգային հասկացությունը՝ միևնույն ժամանակ նշելով կիբերհանձագործության կանխարգելման միջազգային դրվագնական ելակետային խնդիրները:

Հիմնարարեր - անդեկատվական տեխնոլոգիաներ, կիբերհանձագործության կանխարգելման միջազգային դրվագնական ելակետային խնդիրներ, կիբերհանձագործության կանխարգելում, կաղամիություն, կիբերանվտանգություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկա փուլը բնուրագրվում է՝ որպես տեղեկատվական ազդեցության հնարավորություն անհատական և հասարակական գլխակցության վրա, արդյունքում՝ տեղեկատվության ազատ հասանելիությունը անխուսափելի հակալիքին է դառնում տեղեկատվական անվտանգությանը: Այսպիսով, հաստատվում է մարդու, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանության անհրաժեշտությունը տվյալ ոլորտում: Տեղեկատվական անվտանգության ոլորտում արդիական է անշափահասների կողմից համացանցում տեղակայված տեղեկատվական արտադրանքի տարածման և օգտագործման խնդիրը:

Մասնավորապես, համակարգչային-տեղեկատվական առաջընթացի ամենամեծ ձեռքբերումը համացանցի (ինտերնետ) ստեղծումն էր, որը, ինչպես նշում էր «գլոբալ գյուղ» եզրույթի հեղինակ, կանադացի հայտնի փիլիսոփա՝ Մարշալ Մարշլուհանը (Marshall McLuhan). «...մարդկանց միջև անտեսում է բոլոր սահմանները՝ տարածություն, ժամանակ, մշակույթ, ավանդույթ, աշխարհայացք և այլն, որի արդյունքում աշխարհն այնքան է սեղմվում, որ կարծես դառնում է մի ամբողջ գլոբալ գյուղ՝»:

Համացանցն իր էռությամբ տեղեկատվական միջավայր է, որի ազդեցությունը յուրաքանչյուր անշափահասի կյանքի վրա ամեն տարի մեծանում է: Համացանցը երեխաներին առաջարկում է հնարավո-

րությունների լայն ընտրանի՝ արտահայտելու իրենց անհատականությունը, ստանալու կրթություն և այլն: Սակայն, միևնույն ժամանակ, այն իրենից վտանգ է ենթադրում՝ հասանելի դարձնելով բացասաբար ազդող տեղեկատվության, ինչպիսիք են՝ անպարկեցած նյութերը, սեռական շահագործումն ու բռնությունը, կիբերբուլինգը և անձնական տվյալների անհարիք կիրառումը: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալների՝ օրական ավելի քան 175.000 երեխա առաջին անգամ է մուտք գործում համացանց, այն է՝ յուրաքանչյուր կես վայրկյանը մեկ, մեկ երեխա[1]:

Տեղեկատվության զարգացման անխուսափելի հետևանքն է սոցիալական ցանցերը և մարդկանց իմաստգործումը սոցիալական ցանցերում (VKontakte, Odnoklassniki, Facebook, Twitter և այլն): Տեղեկատվության զարգացումն ունի դրական կողմ, այն է՝ ավանդական ԶԼՄ-ների միավորման համար տեղեկատվության փոխանակման նոր հնարավորություններ ստեղծելը, որոնցից շատերի մասին մի քանի տարի առաջ հնարավոր չեր, նոյնիսկ, պատկերացնել, իսկ շատերն էլ, որոնց մասին հնարավոր չել պատկերացնել այսօր, կատեղծվեն ապագայում: Միևնույն ժամանակ, դրական միաստումներին զուգընթաց, կիբեր տարածքում առկա հանցավոր գործունեությունը զարգանում է և աճում: Նման հանցագործությունները ոչ միայն ծայրաատիճան եկամտաբեր են, այլև, որոշ դեպքերում, անպատիճ՝ կատարման մերողի առանձնահատկության պատճառով: Կառա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վարությունները պարտավորություն ունեն իրենց քաղաքացիներին բույլ տալու անարգել մուտք գործել համացանց:

21-րդ դարում պետությունները, ֆիզիկական սահմաններից զատ, բաժանված են նաև վիրտուալ սահմաններով: **Պետական վիրտուալ տարածքը (սահմանը)** ֆիզիկական (մատերիա) իրականությունից սկիզբ առնող (երբեմն էլ անկախ) և վերջինիս համար հետևանքներ առաջացնող արհեստական (սուրյեկտիվ) իրականության այն հարթակն (սուրստանց) է, որտեղ շոշափվում են պետության և հասարակության անվտանգության, սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական, կրոնական և մշակութային շահերը (կեցությունը), օգտակարությունը, որոնց սահմանները վերջանում են այնտեղ, որտեղ սկսվում է մեկ այլ պետության վերոնշյալ շահերի սահմանները:²

Ժողովրդավարական կառավարությունների պարտավորությունն է՝ մշակել օրենսդրություն և կանոնակարգել, որոնք հնարավորություն կտան ունենալ անկախ և բազմակարծիք ԶԼՄ-ներ, տեղեկատվության ազատ հոսք առանց սահմանների, անարգել մուտք համացանց և ցանցային գրագիտության զարգացում:[2] Կառավարությունները պետք է մեծ դերակատարում ունենան, երբ խոսքը ցանցային բռվանդակության և երեխանների պաշտպանության, խորականությունների դեմ պայքարի, ատելության և կիրերանացագործության հրահրման մասին է: Հարցն այն չէ՝ արդյոք կառավարությունները պետք է կարգավորեն համացանցը, թե՞ ոչ, այլ թե ինչպե՞ս, ի՞նչ և ի՞նչ ծավալով բռվանդակություն պետք է կարգավորվի: Արդյոք պետական կարգավորումն արդյունավե՞տ է, եթե ոչ, ապա կա՞ն այնպիսի մերողներ, որոնք կարող են ավելի արդյունավետ լինել:

Ամերիկյան Ազգային անվտանգության ծառայության [3] համակարգերից մեկը, որը կոչվում է Boundless Informant, բույլ է տալիս տեսնել, թե որ երկրից ինչ քանակությամբ տվյալներ են գողացվել վերջին 30 օրվա ընթացքում: Ըստ Է. Սնոուդենի 2013 թվականին տրամադրած քարտեզի՝ Հայաստան այդ պահին քավականին մեծ հետաքրքրություն է ներկայացրել ամերիկյան գործակալության համար, քանի հարեւան Վրաստանը կամ Աղրբեջանը: Իսկ Red October կոչվող վիրուսային համակարգը, որը, ամենայն հավանականությամբ, կազ ուներ Չինաստանի հետ, լրտեսում էր քաղմարիկ երկրների պետական կառույցներին: Ըստ Կասպերսկի լաբարատորիայի կողմից կատարված հետազոտության՝ Հայաստանը համարվում է ամենավարակված երկրներից մեկը:[4]

2000 թվականին Ավստրիայում կայացած ՍԱԿ-

ի՝ Հանցագործության կանխարգելման և իրավախախտողների հետ վարվելու համաժողովում տրվել է կիրերանացագործության հետևյալ բնորշումը. «Կիրերանացագործությունն ընդգրկում է ցանկացած հանցագործություն, որը կատարվում է համակարգչային համակարգի կամ ցանցի օգնությամբ, համակարգչային համակարգի կամ ցանցի շրջանակներում, կամ համակարգչային համակարգի կամ ցանցի դեմ»:

Այդ համաժողովում առանձնացվել է նաև կիրերանացագործության երկու կատեգորիա՝ կիրերանացագործություն նեղ իմաստով, որն ընդգրկում է համակարգչային համակարգի և համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված արարքները, և կիրերանացագործություն լայն իմաստով (հանցագործություններ, որոնք կապված են համակարգչի օգտագործման հետ), որն ընդգրկում է համակարգչային համակարգի կամ ցանցի միջոցով կատարվող ցանկացած հանցավոր արարք կամ կապված է դրա հետ, ինչպես նաև՝ հարակից հանցանքները:[5]

Ժամանակակից համակարգչային վիրուսները բարդ ծրագրեր կամ նույնիսկ ծրագրային համակարգեր են, գրված համակարգչային չարագործների կողմից և օգտագործվում են վերոնշյալ նպատակով, սակայն կիրառվում են շատ ավելի կատարյալ եղանակներով, ինչն անշափ դժվար է դարձնում դրանց դեմ պայքարը: Սակայն, կիրերանացագործությունները միայն ծրագրերի տարածումը կամ օգտագործումը չեն:

ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ գլուխը քրեական պատասխանատվություն է սահմանում այն բոլոր հանցագործությունների համար, որոնցով կարող է վտանգվել տեղեկատվական համակարգերի անվտանգությունը, այն է՝ համակարգչային տեղեկատվության համակարգ առանց բույլտվության մուտք գործելը (ներքափանցելը), համակարգչային սարտածը, համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը և այլն: [6]

ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ գլուխը նկարագրված հանցակազմերն առավելագույնս ներառում են համակարգչային տեղեկատվության դեմ կատարվող հանցագործությունների տեսակները: Սակայն, չի կարելի նոռանալ տեխնիկական առաջնաբան սրբնաթագավորությունը տեմպերի մասին. այս պարագայում կարենրվում է օրենսդրի և իրավակիրառ մարմնի կապը, որն անշափ կարևոր է տվյալ տեսակի հանցագործությունների արդյունավետ բացահայտման համար:

Այս ամենին գուգընթաց, կարևորվում է միջազգային համագործակցությունը, քանի որ կիրերան-

ցազործությունների վերջին տարիներին զարգացման միտումների ուսումնահրությունները ցույց են տալիս, որ տարեցտարի ավելանում են անդրսահմանային բնույթ կրող հանցատեսակները: Այսպէս՝ համակարգչային հարձակում կազմակերպող կարող է գտնվել որևէ եվրոպական երկրում, օգտագործել որևէ ասիական երկրում վարակված համակարգչների խումբ և գրոհ կազմակերպել լատինաամերիկյան որևէ պետությունում գտնվող, իրեն հետաքրքրող համակարգչային համակարգի վրա, որի արդյունքում հնարավոր կլինի հափշտակել գումարներ չորրորդ երկրում գտնվող բանկից: Նմանատիպ հանցատեսակները վերջին տարիներին լայն տարածում են ստացել ամբողջ աշխարհում:


Վերը նշվածին հարկ է ավելացնել նաև ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածները, որոնք առավել հաճախակի կատարվում են համակարգչային տեղեկատվական համակարգերի օգնությամբ՝ հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօռինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը, երեխային պոռնկության կամ պոռնոգրաֆիական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը և այլն:[7]

Այսօր վիրտուալ և ֆիզիկական փոխներթափանցման հարցը կիրեանվտանգության դաշտում արդիական է, այն պատճառով, որ տեղի է ունենում վիրտուալ ու ֆիզիկական աշխարհների փոխներթափանցում. քանի որ վիրտուալ աշխարհում ծավալվող գործունեությունը կարող է լուրջ ազդեցություն գործել ֆիզիկական աշխարհի վրա՝ ինչպես նպաս-


տելով, այնպես էլ՝ էապես խարարելով պետության բնականոն գործունեությանը: Կիրերհամակարգերից ուազմական և տնտեսական գործունեության կախվածությունը պետությունների համար ստեղծում է խոցելի կողմեր, ինչից կարող են օգտվել միջազգային հարաբերություններում ոչ պետական մասնակիցները, ինչպես նաև որոշ պետություններ: Հատկապես, լուրջ վտանգ է ներկայացնում միջուկային գենքի կիրեապահովածության հարցը:

Այսպիսով՝ կիրերտարածությունը դարձել է ազգային և միջազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների հիմնական արյուրներից մեկը, քանի որ արդի տեխնոլոգիական զարգացման պայմաններում կիրերտարածությունում հարձակման բազմաբնույթ հնարավորություններն ավելի լայն են, քանի պաշտպանությանը:[8] Քանի որ ժամանակակից աշխարհում հասարակական և պետական գործունեության մի զգայի մասն իրականացվում է հեռահղողակցության դաշտում, ուստի անշափ հրատապ է դառնում կիրերհանցագործության և կիրերահարեկության խնդիրը: Այսօր կիրերհանցագործությունը լուրջ վտանգ է ներկայացնում պետության էներգահամակարգերին, օդային փոխադրումներին և նույնիսկ միջուկային օբյեկտներին: Նշված վտանգներից ապահովագրված չեն Հայաստանի Հնարապետությունը: Հաշվի առնելով մեր երկրի աշխարհաքաղաքական դիրքը՝ կիրերհանցագործությունները կարող են լուրջ սպառնալիք ներկայացնել Հայաստանի Հնարապետության ազգային անվտանգությանը: Վերջին տարիներին անցկացվել է կիրերհանցագործության դեպքերի տվյալների վերլուծությունը, որի արդյունքները ներկայացնենք գրաֆիկի տեսքով (Գրաֆիկ 1)[9]

■ Բացահայտված դեպքեր
■ Հացահայտված դեպքեր



■ Բացահայտված դեպքեր
■ Հացահայտված դեպքեր



Գրաֆիկ 1. Կիրերհանցագործությունների դեպքերը ՀՀ 2018-2019թ.

Թվային աշխարհում կիրերհանցագործություններից պաշտպանվելու պարտավորությունը բոլորին է՝ կառավարություններինը, ընտանիքներինը, դպրոցներին ու այլ հաստատություններինը: Բայց նաև մասնավոր հատվածը, հատկապես՝ տեխնոլո-

գիաների և հեռահղողակցության ոլորտները, կարևոր և յուրահասուկ պարտավորություն ունեն թվային տեխնոլոգիաների՝ հասարակության վրա թողած ազդեցությունը ձևավորելու հարցում. պարտավորություն, որ մինչ այժմ լուրջ չի ընդունվել:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր հատվածի ուժն ու ազդեցությունը պետք է օգտագործվի, որպեսզի բարելավվեն ոլորտի տվյալների ու գաղտնիության երիկական նորմերը և ծավալի այնպիսի գործունեություն, որ կապահպան առցանց հարթակում գտնվող երեխաների շահերը: Փորձագետների շրջանում չկան կիրերանվտանգության խնդրի նկատմամբ միասնական մոտեցումներ: Սակայն, կիրերանվտանգություն ապահովելու համար առաջարկվում են մի քանի մեթոդներ՝

1. Համակարգել համաշխարհային, տարածաշրջանային և ազգային արձագանքը: Սենք պետք է ուժեղացնենք քաղաքականություն մշակողների, իրավապահ մարմինների և SS ոլորտի միջև համագործակցությունը, որպեսզի տեխնոլոգիական արտադրանքի ստեղծման ընթացքում ներդրվեն անվտանգության նորմեր /սկզբունքներ/ և միասին աշխատենք, որպեսզի վերջ դնենք թրաֆիքինգին, ինչպես նաև՝ մարդկանց /մասնավորապես՝ երեխաների/ շահագործման առցանց այլ միջոցներին:

2. Երաշխավորել մարդկանց տվյալների գաղտնիությունը: Մասնավոր հատվածի ու կառավարության կողմից ավելի մեծ հանձնառություն է անհրաժեշտ քաղաքացիների տվյալների պաշտպանության և տեղին օգտագործման հարցում: Առցանց տվյալները հավաքագրելիս և օգտագործելիս պետք է հաշվի առնել և կիրառել միջազգային նորմերը: Իսկ քաղաքացիներին /մասնավորապես՝ երեխաներին/ պետք է սպառեցնել, թե ինչպես պաշտպանվել այն ամենից, ինչը վտանգում է իրենց տվյալների գաղտնիությունը:

3. Հասարակությանը զինել առցանց հարթակում՝ ապահովելով հասանելի թվային գրագիտությամբ: Նաև կառավարությունների ու SS ոլորտի մասնագետների ավելի սերտ համագործակցությամբ պետք է ստեղծվեն S&S հարթակներ և այնպիսի դասացուցակ, որպեսզի կրտսեր դպրոցից մինչև ավագ դպրոցից աշակերտները սովորեն ճիշտ օգտվել առցանց հարթակում տեղադրված նյութերից և չվտանգեն իրենց անձնական տվյալները: Առցանց գրադարանները պետք է բարելավվեն, իսկ հանրային գրադարանները պետք է վերազինվեն, որպեսզի թվային հմտություններ սովորեցնող դասեր անցկացվեն: Քաղաքացիներին /մասնավորապես՝ երեխաներին/ պետք է սպառեցնել տարրերակել ու զգուշանալ առցանց վտանգներից և ոչ սսույց տեղեկատվությունից, իսկ թվային քաղաքացիությունն էլ դարձնել թվային գրագիտության կենտրոնական բաղադրիչ:

4. Գնահատել մասնավոր հատվածի յուրահատուկ դերը: SS ոլորտում պետք է ներդնել ու պարտադրել տվյալների և գաղտնիության երիկական նորմեր, որոնք պաշտպանում են առցանց հարթա-

կում գտնվող անձանց շահերը, այդ թվում՝ այնպիսի երիկական պրոդուկտի ստեղծում և տարածում խրախուսել, որ կնվազեցնի հասարակությանն ուղղված ոխուսերը:

5. Ներդնել այնպիսի լուծումներ, որոնք տեղեկություն կտրամադրեն առցանց հարթակում գտնվող երեխաների, համազանցի առաջարկած հնարավորությունների և հնարավոր վտանգների մասին: Սեզավելի շատ տեղեկություն է հարկադրու առցանց հարթակում գտնվող երեխաների ու նրանց գործունեության մասին, որպեսզի կարողանանք այդ տվյալները կիրառել կարգավորող այնպիսի նորմերում ու քաղաքականություններում, որոնք կճանաչեն երեխաների հասուն կարիքներն ու իրավունքները: Թվային աշխարհի մարտահրավերները հաղթահարելու համար պետք է համաշխարհային մակարդակում ուժեղացնել համակարգումն ու տեղեկատվության փոխանակումը: Պետք է ուժեղացնել համագործակցությունը երեխաների հարցերով գրադպուկագների հետ և կանոնավոր կերպով համագործակցել օրինապահ մարմինների ու քաղաքականությունը մշակողների հետ: [1]

Հաշվի առնելով վերը նկարագրված հիմնախնդիրները՝ կիրերիանցագործություններից խուսափելու և կիրերիանցագործությունների քանակը նվազեցնելու նպատակով՝ առաջարկվում է ստեղծել առցանց հարթակ, որը կազմված կլինի չորս հիմնական մասերից: Առաջին մասում կլինի տեղեկատվություն կիրերիանցագործությունների, դրանց կատարման մերողների ու հաճախականությունների մասին, երկրորդ մասում տեղադրված կլինի մանրամասն տեղեկատվություն, թե ինչպես խուսափել տարատեսակ կիրերիանցագործություններից, օրինակ՝ ինչպիսի գաղտնաբառեր օգտագործել կայքերում, որպեսզի բարձրացնել անձնական տվյալների պաշտպանվածության մակարդակը, քանի որ «քույլ» կամ օգտատերերի կողմից հաճախ օգտագործվող զաղոնաբառը հնարավորություն է տալիս կիրերիանցագործին մուտք գործել օգտատիրոջ անձնական կայք և վերցնել կամ խախտել անձնական տվյալների ճշտությունը: Հարթակի երրորդ մասում կլինին օրենքների կետեր, թե ինչպիսի արարքներն են քրեորեն պատժել:

Օրրորդ մասում կլինի անանուն հարցում կազմված մի քանի հարցերից՝ օգտատիրոջ սեռը, տարիքը, մասնագիտությունը, որքա՞ն ժամանակ է անց կացնում համացանցում, հանդիպե՞լ է երբեք կիրերիանցագործության, եղե՞լ է արդյոք կիրերիացագործության զին: Այս հարցումը հնարավորություն կընձեռի հավաքել տեղեկատվություն կիրերիանցագործությունների մասին և կազմել անընդիատ բար-

Մացվող Վիճակագրություն:

Այսպիսով, կիրերիանցագործությունը վերացնելու, ինչպես նաև կիրերիանցագործության զոհ շղանալու ամենապարզ ուղիներից մեկը սպառելու է, քեզ ինչպես պաշտպանվել առցանց միջավայրում և ինչպես չինել կիրերիանցագործների հետ քիրախ:

Ամփոփելով վերոգրյալ՝ գտնում ենք, որ կիրեր-
հանցագործությունների կանխարգելումը, դա պե-
տուրյան վիրտուալ տարածքում (սահմանում) ֆիզի-
կական և իրավաբանական անձանց, ինչպես նաև
պետության իրավունքներն ու օրինական շահերը
պաշտպանելու նպատակով՝ իրավական, սոցիալա-
կան, ռազմական և տնտեսական անհրաժեշտ կա-
ռուցակարգերի ստեղծումն ու գործարկումն է, որոնց
միջոցով պետությունը կարողանում է բացահայտել,
կանխել և պատիժ կիրառել (սանկցիա կիրառել) կի-
րերանցավորության նկատմամբ:

Սիևույշ ժամանակ, գտնում ենք, որ կիբերհանցագործությունների կանխարգելումը պետք է խարսխված լինի ներքոի իշխալ միջազգային դրվագներին եւ կակետային խնդիրների վրա՝ միջազգային վիրտուալ տարածքի կարգավորման համընդիանուր նորմատիվների սահմանում, միջազգային փոխգործակցություն կիբերհանցագործության բացահայտման՝ կանխման (սանկցիավորման) պատճամիջոց կիրառելու նպատակով, միասնական տեղեկատվատեխնիկական անվտանգության համակարգերի ստեղծում ու գործարկում, խոցելի խմբերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գերակայություն միջավետական շահերի նկատմամբ (օրինակ՝ մանկական պոռնոգրաֆիայի տարածման դեմ միջազգային պայքար՝ անկախ պետական և խմբային, ֆինանսական կամ այլ շահերից) և այլն:

¹ Հայրապետյան Ա. «Միգրացիոն իրավունքը միջազգային իրավական դոկտրինայում և պրակտիկայում», «Արդարադատություն» գիտական հանդես (2016-4(35), էջ 24, հղում՝ 3-րդ և 4-րդ: <https://ardaradatutyunjournal.com/wp-content/uploads/2018/12/35-2016-4.pdf>

²Հայրապետյան Ա. «Միջազգին իրավունքը միջազգային իրավական դոկտրինայում և պրակտիկայում», «Արդարադատություն» գիտական հանդես (2016-4(35), էջ 24: <https://ardaradatutyunjournal.com/wp-content/uploads/2018/12/35-2016-4.pdf>

Оқынушылардың жаңы орындары

1. ՅՈՒՆԻՍԵՖ-ի 2017թ. «Երեխաների իրավիճակն աշխարհում. Երեխաները թվային դարում»
[https://www.nsa.gov/](https://www.unicef.org/armenia/%D5%B4%D5%A1%D5%B4%D5%AC%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D6%85%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BE%D5%A5%D5%AC%D5%AB-%D6%84%D5%A1%D5%B6-175000-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A1%D5%B4-%D5%BD%D5%AF%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-D6%85%D5%A3%D5%BF%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%81%D5%A1%D5%B6%D6%81%D5%AB%D6%81%D5%9D,(վերջին անգամ դիտվել է 03.04.2020)2. Դեերյան Ա., Ղազարյան Ա., Մարտիրոսյան Ա., Դարբինյան Ա. «Կիբեռտիրույթ տեղեկատվական անվտանգություն և իրավունք»:3. Ամերիկյան Ազգային անվտանգության ծառայության Boundless Informant /<a href=) (վերջին անգամ դիտվել է 03.04.2020):
 4. «Կասպերսկի» լարորասողիայի կիբեռապահնայինների վերլուծություններ և արյունըներ (վերջին անգամ դիտվել է 03.04.2020) <https://securelist.com/red-october-diplomatic-cyber-attacks-investigation/36740/>:
 5. Tenth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders Vienna, 10-17 April 2000, Report of the Tenth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Paragraph 161-174,էջ 26:
 6. Հայաստանի Հանրապետության քրեսկան օրենսդիր
<https://www.arlis.am/documentView.aspx?docid=69646> (վերջին անգամ դիտվել է 03.04.2020)
 7. Կիբեռիանցազրությունների դեմ պայքարի առանձնահատկությունները մոտեցումները և ահազանգերին արձագանքումը <https://www.police.am/news/view/%D5%AF%D5%AB%D5%A2%D5%A5%D6%80%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%A4%D5%A5%D5%B4%D5%BA%>

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

D5%A1%D5%B5%D6%84%D5%A1%D6%80%D5%AB-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B6%D5%B1%D5%
 B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%
 B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B4%D5%B8%D5%BF%D5%A5%D6%81%D5%
 B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D6%87-%D5%A1%D5%
 B0%D5%A1%D5%A6%D5%A1%D5%
 D5%
 B6%D5%A3%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-D5%A1%D6%80%D5%
 B1%D5%A1%D5%A3%D5%
 A1%D5%
 B6%D6%84%D5%B8%D6%82%D5%
 B4%D5%A8.html (վերջին անգամ դիտվել է 03.04.2020):
 8. Քարումյան Վ. Գ. Կիբեռանվտանգությունը որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ
<http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haykakan%20Banak/2012%284%29.pdf> (վերջին անգամ դիտվել է 03.04.2020)
 9. Կիբեռհանգագործությունների դիմամիկան Հայաստանում
https://infocheck.am/am/posts/235?fbclid=IwAR3_2duQEqpfTE0D9Oz37lMPRgvHkZsOjnJflGQ77JAoo8A-L1xRBqTc6E
 (վերջին անգամ դիտվել է 03.04.2020).

Արօն Ռշանյան

Студент 4-го курса отдела инженерии программного обеспечения,
 кафедры информационной безопасности и программного обеспечения
 института информационных и телекоммуникационных технологий
 и электроники Национального политехнического университета Армении

РЕЗЮМЕ

Общие вопросы правовой структуры для предотвращения киберпреступности в Республике Армении

В этой статье анализируется такое глобальное социальное явление, как киберпреступность, т.е. незаконные действия в области инновационных технологий, которые наносят ущерб Республике Армении, интересам организаций и физических лиц. В данной статье предлагается ряд мер кибербезопасности, таких как создание онлайн информационной платформы, которая обеспечит относительно высокий уровень кибербезопасности. В статье рассматриваются правовая основа для предотвращения киберпреступности, в то же время отмечаются международные доктринальные проблемы предотвращения киберпреступности.

Ключевые слова: информационные технологии, международные доктринальные проблемы предотвращения киберпреступности, киберпреступление, секретность, кибербезопасность.

Aharon Rushanyan

4th year student of the Chair of Software Engineering,
 Department of Information Security and Software Development
 of the Institute of Information and Telecommunication Technologies
 and Electronics of the National Polytechnic University of Armenia

SUMMARY

General issues of legal structures for preventing cybercrime in the Republic of Armenia

This article describes the analysis of global social phenomenon as cybercrime - illegal deployment in areas of technological innovation, which cause damage to the Republic of Armenia, interests of organizations and persons. Here it is suggested a variety of cybersecurity, such as creating an online information platform, which will provide high level of cybersecurity. The article provides the legal basis for preventing cybercrime, while at the same time, international doctrinal problems of preventing cybercrime are noted.

Key words: Information technology, International Doctrinal Issues in Preventing Cybercrime, cybercrime, privacy, cybersecurity.

Բնագիրը ներկայացվել է 07.04.2020թ.

Ընդունվել է տպագրության 28.04.2020թ.

Հողվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ. Թումասյանը

ԶՈՀՐԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության
ամբիոնի ասպիրանտ

**ՀՈՎԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՍԱՐ**

Հոդվածում խոսվում է օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետությունում հողի սեփականության իրավունքի սահմանափակման, դրա բացառությունների, ինչպես նաև այդ սահմանափակմամբ պայմանափորված, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց շահերի պաշտպանության մասին:

Հիմնարարեր՝ սեփականության իրավունքը, իրավունքի սահմանափակում, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, իրավարանական անձի լուծարում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 2-րդ գլուխը նվիրված է մարդու և քաղաքացու իրավունքներին, և բոլոր դեպքերում, եթե խոսքը վերաբերում է մարդու (յուրաքանչյուր ոք) իրավունքներին, ապա դրանից, ՀՀ քաղաքացիներից բացի, օգտվում են նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ միասին՝ օտարերկրյա քաղաքացիներ): Իսկ, եթե Սահմանադրությամբ իրավունք է վերապահվում ուղղակիորեն քաղաքացուն, ապա այդ իրավունքներից օգտվում են ՀՀ քաղաքացիություն ունեցող անձինք¹: Բայց և այսպես, մարդու իրավունքների հասպածում կարող են նախատեսված լինել օտարերկրյա քաղաքացիների իրավունքների ուղղակի սահմանափակումներ: Այսպես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Այսինքն՝ Սահմանադրությունն ուղղակիորեն սահմանում է օտարերկրյա քաղաքացիների՝ ՀՀ-ում հողի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու արգելիք կանխավարկածը՝ օրենքով այլ բան նախատեսված չլինելու պարագայում:

Սահմանադրական մակարդակում ամրագրված նման սահմանափակումը բխում է այս ընդհանուր գաղափարախոսությունից, որ սակավահող Հայաստանում հողի նկատմամբ սեփականության հարաբերությունների ձևավորման այս փուլում շարունակում է առաջնային մնալ պետական անվտանգության հիմնախնդիրը²:

Խոշոր պետությունների մեծ մասի սահմանադրություններում (օրինակ՝ ԱՄՆ, Գերմանիա) նման սահմանափակում առկա չէ: Ոչ մեծ պետու-

թյունների մի մասի սահմանադրություններում (Էստոնիա, Շվեյցարիա, Լյուքսեմբուրգ) ևս՝ վերոնշյալ սահմանափակումը բացակայում է: Բայց և այսպես, կան պետությունները, որոնց սահմանադրությունները պարունակում են նման դրույթներ: Այսպես՝ Մոլդովայի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ Մոլդովայի Հանրապետությունում պաշտպանվում է օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց սեփականության իրավունքը: Օտարերկրյա իրավարանական անձանց և քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Մոլդովայի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքի ձեռքբերման կարգը և պայմանները կարգավորվում են օրենքով³:

Հողի սեփականության իրավունքի սահմանափակման հետաքրքիր նորմ է պարունակում Վրաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Վերջինիս համաձայն՝ զյուղատնտեսական նշանակության հողը՝ որպես հատուկ նշանակության ունտուր, կարող է պատկանել միայն պետությանը, իմքնակառավարվող միավորին, Վրաստանի Հանրապետության քաղաքացուն կամ Վրաստանի Հանրապետության քաղաքացիների միությանը: Բացադրիկ դեպքեր կարող են սահմանվել օրգանական օրենքով, որն ընդունվում է Խորհրդարանի անդամների ընդիւնուր քվի առնվազն երկու երրորդով⁴:

Անհրաժեշտ է նշել, որ հողի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումը չի տարածվում այլ անշարժ գույքի վրա: Հողը մտնում է անշարժ գույքի բովանդակության մեջ, սակայն անշարժ գույքը չի սահմանափակվում միայն հո-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դով: ՀՀ սահմանադրական դատարանը, իր ՍԴ-1432 որոշմամբ, անդրադառնալով հողի վերաբերյալ օրենսդրական ծևակերպումներին, նշել է դրա մի քանի առանձնահատկությունները.

- հողն անշարժ գույքի տեսակ է, որը, ինչպես նաև վերջինիս կարգավիճակը (ներառյալ՝ դրա նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները) օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման,

- հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը սեփականատիրոջ կողմից իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքն է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ,

- հողամասի նկատմամբ իրավունքների (այդ թվում՝ սեփականության իրավունքի) սահմանափակումները սահմանվում են անմիջականորեն՝ օրենքով, այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ դատական կարգով,

- սահմանված են հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման և սահմանափակման դեպքերը, այդ թվում՝ հողամասի վրա սեփականատիրոջ պարտավորություններով պայմանավորված բռնագանձում տարածելիս,

- սահմանված են հողամասերի սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ կապված պարտադիր վճարումների կատարման հետ:

Հողի նկատմամբ օտարերկրյա քաղաքացիների սեփականության իրավունքի հնարավոր դեպքերը նախատեսվում են ՀՀ հողային օրենսգրքով: Վերոնշյալ օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ քացառությամբ օրենքով սահմանված դեպքերից: Բացառություն են կազմում միայն Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք:

Իսկ հատուկ կացության կարգավիճակ անձին կարող է տրվել միայն երկու դեպքում՝ նա ազգությամբ հայ է կամ Հայաստանում տնտեսական կամ մշակութային գործունեություն է ծավալում: Մնացած բոլոր դեպքերում օտարերկրյա քաղաքացիները չեն կարող Հայաստանի Հանրապետությունում օգտվել հողի նկատմամբ սեփականության իրավունքից: Սակայն նման կարգավորումն առանձին դեպքերում կարող է եական վեաս պատճառել նրանց վերջիններիս շահերի պաշտպանության օրենսդրական կարգավորումների բացակայու-

թյան պայմաններում:

Վերոգրյալի համատեքստում նախ քննարկման է արժանի այն դեպքը, երբ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը ձեռք է բերում շինություն կամ այլ անշարժ գույք Հայաստանի Հանրապետության տարածքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականատիրոջը պատկանող հողամասի վրա գտնվող շենքի կամ շինության նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցելիս օտարվում է նաև շենքի, շինության գրադեբած հողամասի մասը, ինչպես նաև՝ հողամասի նկատմամբ այն իրավունքները, որոնք անհրաժեշտ են շենքի, շինության օգտագործման և սպասարկման համար: Իսկ նոյն օրենսգրքի 564-րդ հոդվածի համաձայն՝ շենքի, շինության կամ այլ անշարժ գույքի վաճառքի պայմանագրով գնորդին այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցելու հետ միաժամանակ փոխանցվում է հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:

Սույն իմադերատիվ նորմերի նպատակն է հանդիսանում կրծատել այն դեպքերը, երբ հողի և դրա վրա գտնվող շինության կամ այլ անշարժ գույքի սեփականատերերը տարրեր անձինք են: Ընդ որում՝ տվյալ նորմը պաշտպանում է պայմանագրի երկու կողմերին, քանի որ անհասկանալի է, թե ինչ կերպ կարող է վաճառողը տիրապետել կամ օգտագործել իրեն պատկանող հողամասը այն դեպքում, երբ դրա վրա առկա է դրան ամրակցված այլ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք:

Բայց լայնապես, հաշվի առնելով Սահմանադրության 60-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված սահմանափակումը՝ օտարերկրյա քաղաքացիները հողին ամրակցված անշարժ գույքը ձեռք բերելիս չպետք է ձեռք բերեն դրա տակ գտնվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը: Նման դեպքում օտարերկրյա քաղաքացիներն օգտվում են այդ հողամասի օգտագործման իրավունքից՝ չհանդիսանալով դրա սեփականատերը: Արդյունքում, ստացվում է, որ հողամասի և դրա վրայի շինության սեփականատեր-վաճառողը, վաճառելով շինությունը կամ հողմասի վրա գտնվող այլ անշարժ գույքը, չի փոխանցում օտարերկրյա քաղաքացի գնորդին հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ օրենսդիրը չի կարգավորում նման դեպքերում հողամասի և դրա իրավատերերի իրավական կարգավիճակը:

Երկրորդ, օտարերկրյա քաղաքացին կարող է

բաժնեմաս (բաժնետոմս) ունենալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Նման պայմաններում անհրաժեշտ է դիտարկել իրավաբանական անձի լուծարման դեպքում դրան պատկանող գույքի ճակատագիրը: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պարտատերերի պահանջները բավարելուց հետո իրավաբանական անձի մնացած գույքը հանձնվում է նրա հիմնադիրներին (մասնակիցներին), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարերկրա քաղաքացիները (քացառությամբ՝ կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց) չեն օգտվում հոդի սեփականության իրավունքից, ապա հարց է առաջանում, թե ինչ պետք է լինի լուծարվող իրավաբանական անձին սեփականության իրավունքը պատկանող հոդի հետ: Բնականաբար, օրենքով այլ բան նախատեսված չլինելու պարագայում, այն չի կարող փոխանցվել օտարերկրյա ֆիզիկական անձ հիմնադիրին (մասնակցին), բայցևայնպես վերջինիս ընկերության լուծարման դեպքում ընկերության մնացած գույքից բաժին ստանալու իրավունքը չպետք է խախտվի, և նա առնվազն պետք է ստանա փոխհատուցում դրա դիմաց:

Միևնույն ժամանակ նման պայմանների առկայության դեպքում անհրաժեշտ է դիտարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդվածի կիրառելիության հարցը Սահմանադրության 60-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված արգելքի պայմաններում: Այսպես՝ վերոնշյալ 282-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օրենքով թույլատրվող հիմքերով անձին որպես սեփականություն անցել է այնպիսի գույք, որը սեփականության իրավունքի ծագման պահին օրենքի ուժով չէր կարող նրան պատկանել, սեփականատերն այդ գույքը պետք է օտարի դրա նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից մեկ տարվա ընթացքում, եթե այլ ժամկետ նախատեսված չէ օրենքով:

Բայցևայնպես, գտնում ենք, որ Սահմանդրության 60-րդ հոդվածի 6-րդ մասում նշված սահմանափակման բացառությունը (հոդի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները, քացառությամբ օրենքով սահմանված դեպքերի) չի վերաբերում ժամանակավորապես հոդի սեփականատեր դառնալու դեպքերին, և վերոնշյալ բացառություններն ուղղակիրեն նախատեսված են ՀՀ հոդային օրենսգրքով: Ընդ

որում՝ անհրաժեշտ է դիտարկել այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդվածի կիրառելիության դեպքում՝ իրավաբանական անձինք և նրանց հիմնադիրները՝ (մասնակիցները) օտարերկրյա քաղաքացիները, ՀՀ-ում հոդի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով, կարող են արհեստականորեն իրենց մասնակցությամբ իրավաբանական անձանց տանել լուծարման, և դա կարող է պարբերական բնույթ կրել: Իսկ նման պայմաններում չի իրագործվի պետական անվտանգության ապահովման նպատակ հետապնդող Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված արգելքը: Հետևապես, իրավաբանական անձանց լուծարման դեպքում դրանց մասնակից օտարերկրյա քաղաքացիները (քացառությամբ՝ կացության հատուկ կարգավիճակ ունեցող օտարերկրացիների) չպետք է հանդիսանան իրավաբանական անձի լուծարումից հետո մնացած հոդամասի սեփականատերը: Բայցևայնպես, օտարերկրյա քաղաքացիները դրա դիմաց պետք է համարժեք փոխհատուցում ստանալու հնարավորություն ունենան: Նման ընթացակարգ մեր օրենսդրությամբ նույնպես առկա չէ:

Իրավաբանական անձանց լուծարման դեպքում դրա մասնակիցները կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը նշանակում են լուծարման հանձնաժողով (լուծարող): Լուծարման հանձնաժողովը (լուծարողը) ստեղծվում է իրավաբանական անձանց պարտատերերի հայտնաբերման և վերջիններիս նկատմամբ իրավաբանական անձի պարտավորությունների կատարումն այդ իրավաբանական անձի գույքով իրականացնելու համար:

Կարծում ենք, որ այն դեպքում, եթե լուծարվող իրավաբանական անձի մասնակից է հանդիսանում կացության հատուկ կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացին, ապա նախ, պետք է հնարավորություն տալ իրավաբանական անձի հոդի նկատմամբ սեփականության իրավունքի իրավունակություն ունեցող մասնակցին վճարի դիմաց ձեռք բերել հոդամասի այն բաժինը, որը ձեռք կրերեք օտարերկրյա քաղաքացին՝ Սահմանադրությամբ սահմանված սեփականության իրավունքի սահմանափակման բացակայության պարագայում: Իսկ եթե որոշակի ժամկետում իրավաբանական անձի նման մասնակցի բացակայության դեպքում, ապա ողջամիտ կինին օրենքով սահմանել լուծարման հանձնաժողովի (լուծարողի) պարտականություն, իրավաբանակային սակարկությունների միջոցով վաճառել հոդամասը և օտա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թերկրյա քաղաքացուն հանձնել վաճառքից ստացված գումարը՝ հանելով վաճառքին ուղղված բոլոր ծախսերը:

Նման կարգավորմամբ ինչպես հնարավորություն չի տրվի կացության հատուկ կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացուն ՀՀ-ում հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերել, այնպես էլ կպաշտպանվի վերջինիս փոխհատուցում ստանալու իրավունքը իրավաբանական անձի լուծարման դեպքում:

Անհրաժեշտ է ուշադրության իրավիրել նաև այն հանգամանքը, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 6-րդ մասով հողի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու արգելվ սահմանված է օտարերկրյա քաղաքացիների, բայց ոչ օտարերկրյա իրավաբանական անձանց համար:

Նման տրամաբանությամբ է գրված ՀՀ հողային օրենսգիրքը, քանի որ այն որպես հողային հարաբերությունների առանձին սուբյեկտ է դիտարկում ինչպես օտարերկրյա քաղաքացիներին, այնպես էլ օտարերկրյա իրավաբանական անձանց, սակայն հողի նկատմամբ սեփականության իրավունքը ունենալու սահմանափակում նախատեսվում է միայն օտարերկրյա քաղաքացիների համար:

Նման մոտեցումը պայմանավորված է Սահմանադրության 74-րդ հոդվածի սահմանափակ մեկնաբանմամբ, որի համաձայն՝ **հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ**. Այսինքն՝ օրենսդիրը հողային հարաբերությունները կարգավորելիս առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ իրավաբանական անձանց վրա տարածվում են միայն հիմնական իրավունքները և ազատությունները, բայց ոչ դրանց նկատմամբ սահմանված սահմանափակումները:

Թեև տեսության մեջ առկա է մոտեցում առաջն, որ Սահմանադրությունն ուղղակիորեն չի նշում, սակայն սահմանադրական նորմերի հմաստից բխում է, որ իրավաբանական անձինք համարվում են Սահմանադրությամբ ուղղակիորեն ամրագրված պարտականությունների կրող սուբյեկտներ, ինչպես նաև Սահմանադրությունից բխող այլ պարտականությունների կրող սուբյեկտ : Հետևապես, կարծում ենք, որ նոյն մոտեցումն առկա պետք է լինի նաև հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ, այսինքն՝ մարդու համար նախատեսված հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակումը պետք է տարածվի նաև իրավաբանական

անձի վրա այնքանով, որքանով այդ սահմանափումներն իրենց էությամբ կիրառելի են վերջինիս նկատմամբ. Իսկ դա տրամաբանական է, քանի որ Սահմանադրության 2-րդ գլուխում իրավունք սահմանող հոդվածներում նշվում են նաև այդ իրավունքը սահմանափակման հիմքերը, որոնք նույնական պետք է լինեն նաև իրավաբանական անձանց նկատմամբ, եթե դրանց էությունից այլ բան չի բխում:

Նման մոտեցմամբ առաջնորդվելիս կհետևի, որ օտարերկրյա քաղաքացու համար սահմանված հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակումը տարածվում է օտարերկրյա իրավաբանական անձի վրա: Այսինքն՝ եթե օտարերկրյա քաղաքացիները չեն օգտվում հողի սեփականության իրավունքից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ապա օտարերկրյա իրավաբանական անձինք նոյնպես չեն օգտվում հողի սեփականության իրավունքից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ըստ որում վերոնշյալ սահմանափակման տարածումը օտարերկրյա իրավաբանական անձանց վրա համապատասխանում է նաև Սահմանադրության 60-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված սահմանափակման նպատակին: Պատճառ այն է, որ պետական անվտանգության համար օտարերկրյա իրավաբանական անձանց հողի նկատմամբ սեփականության իրավունքից սպասելի հնարավոր վտանգը ավելի պակաս չէ, քան առկա կլիներ օտարերկրյա քաղաքացիների սեփականության առկայության դեպքում: Հետևապես, ՀՀ տարածքում օտարերկրյա հնարավոր բացասական ազգեցությունը սահմանափակելու նպատակին համահունչ է Սահմանադրության 60-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանափակման տարածումը նաև օտարերկրյա իրավաբանական անձանց վրա:

Սակայն, ինչպես արդեն նշեցինք, օրենսդիրը ՀՀ հողային օրենսգրքով անմիջական սահմանափակում նախատեսել է հենց օտարերկրյա քաղաքացիների համար՝ ուղղակիորեն չնշելով սահմանափակում օտարերկրյա իրավաբանական անձանց համար:

Ի տարրերություն հայաստանյան օրենսդիր՝ Ռուսաստանի Դաշնության հողային օրենսգրքն ուղղակիորեն խոսում է նաև օտարերկրյա իրավաբանական անձանց նկատմամբ առկա սահմանափակումների մասին, մասնավորապես՝ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրյա իրավաբանական անձինք սեփականության իրավունքով չեն կարող տիրապետել սահմանամերձ տարածքներում անդակայ-

ված հողամասեր, որոնց ցանկը սահմանում է Ռուսաստանի Դաշնության Նախագահը՝ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի մասին դաշնային օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության հատուկ նախատեսված այլ տարածքներ՝ դաշնային օրենքներին համապատասխան։

ՀՀ հողային օրենսգրքով՝ օտարերկրյա իրավաբանական անձանց համար չկա հողի սեփականություն ձեռք բերելու արգելվ, ինչն անտրամարանական է, քանի որ օտարերկրյա քաղաքացիները ցանկության դեպքում կարող են փաստացի հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերել օտարերկրյա իրավաբանական անձի միջոցով։ Թեև նման սահմանափակման բացակայությունը կարող է նպաստել օտարերկրյա ներդրումների աճին, միաժամանակ կարող է որոշակի ռիսկ ներկայացնել ՀՀ պետական անվտանգության համար։

Անփոփելով վերոգրյալը՝ հանգում ենք այն եղակագության, որ.

1. անհրաժեշտ է հստակ սահմանել այն հողամասի և դրա իրավաբերերի իրավական կարգավիճակը, որի վրա գտնվող շինությունը կամ այլ անշարժ գույքը ձեռք է բերվել կացության հատուկ

կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու կողմից,

2. անհրաժեշտ է իրավական կարգավորման ենթակել իրավաբանական անձի լուծարումից հետո մնացած հողամասի ճակատագիրը և այդ իրավաբանական անձի մասնակից հանդիսացող կացության հատուկ կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու փոխհատուցում ստանալու իրավունքը,

3. անհրաժեշտ է սահմանադրական մակարդակով հստակ սահմանել, որ իրավաբանական անձանց վրա տարածվում են հիմնական իրավունքները և ազատությունները, դրանց սահմանափակումները՝ այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատությունները, դրանց սահմանափակումները իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ։ Ընդ որում՝ կարծում ենք, որ նպատակահարմար է նաև ուղղակիորեն նշել, որ օտարերկրյա իրավաբանական անձանց վրա տարածվում են օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված հիմնական իրավունքները և ազատությունները, դրանց սահմանափակումները։

¹ Միևնույն ժամանակ, Սահմանադրության մի քանի հոդվածներով առածնին իրավունքներ են վերապահվում միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող անձանց։

² Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան, Երևան 2010, էջ 376։

³ Մոլովայի Հանրապետության Սահմանադրություն, 128-րդ հոդված։

⁴ Վրաստանի Հանրապետության Սահմանադրություն, 19-րդ հոդված, մաս 4-րդ։

⁵ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, մաս 1-ին։

⁶ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան, Երևան 2010, էջ 507։

⁷ Ռուսաստանի Դաշնության հողային օրենսգիրք, 15-րդ հոդված, 3-րդ մաս։

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ. փոփոխություններով)
2. Մոլովայի Հանրապետության Սահմանադրություն
3. Վրաստանի Հանրապետության Սահմանադրություն
4. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունված՝ 05.05.1998թ.)
5. ՀՀ հողային օրենսգիրք (ընդունված՝ 02.05.2001թ.)
6. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 25.12.2006թ.)
7. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴ-1432 որոշումը
8. Ռուսաստանի Դաշնության հողային օրենսգիրք (ընդունված՝ 28.09.2001թ.)
9. Հարությունյան Գ., Վաղարշյան Ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան 2010։

Зорак Апресян
Аспирант кафедры юриспруденции
Европейского университета

РЕЗЮМЕ

Ограничение прав собственности на землю для иностранных граждан

В статье рассматриваются ограничение права собственности иностранных граждан и лиц, не имеющих гражданства, на землю в Республике Армения, его исключения, а также защита интересов иностранных граждан и лиц, не имеющих гражданства, в связи с этим ограничением.

Ключевые слова: право собственности, ограничение права, иностранный гражданин, лицо, не имеющее гражданства, ликвидация юридического лица.

Zohrak Apresyan
PhD Student of the Chair of law
of the European University

SUMMARY

Restriction of the right of land ownership for foreign citizens

This article discusses the restriction of the right of land ownership of foreign citizens and stateless persons in the Republic of Armenia, its exceptions, as well as the protection of the interests of foreign citizens and stateless persons conditioned by that restriction.

Key words: right of ownership, restriction of right, foreign citizen, stateless person, liquidation of a legal person.

Բնագիրը ներկայացվել է 21.04.2020թ.

Ընդունվել է տպագրության 05.05.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Խաչատրյանը

ՎԱՀԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի հայցորդ

ՀՀ ՕՐԵՆՍԴԻՐ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՓՈԽԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում ներկայացված են օրենսդիր և դատական իշխանությունների փոխհարաբերությունների այն իմանալիքները, որոնք առկա են Հայաստանի Հանրապետությունում գործող խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում։ Խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում ուսումնասիրվել է օրենսդիր իշխանության ակտիվ դերակատարություն՝ ուղղված դատական իշխանության կազմակերպման, կազմակորման և գործառնության օրենսդրական իմքերի սահմանադրական կարգավորումներին։

Անդրադարձ է կատարվում Բարձրագույն դատական խորհրդի անդամների և Սահմանադրական դատարանի դատավորների ընտրությանը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման գործող իրավակարգավորումներին և առկա խնդիրներին։ Կարևորվել է ՀՀ օրենսդիր և դատական իշխանության մարմինների միջև փոխգործակցող կապի խորացում՝ պետական իշխանության լիարժեք և արյունավետ գործադրումն ապահովելու նպատակով։

Հիմնարարեր – օրենսդիր իշխանություն, դատական իշխանություն, դատավոր, խորհրդարանական կառավարման համակարգ, Բարձրագույն դատական խորհրդ, Ազգային ժողով:

Յուրաքանչյուր իրավական պետությունում դատական իշխանության կազմակերպման և անկախության սահմանադրակարգավական իմանական սկզբունքների երաշխավորումն ու գործադրումը ապահովում է դատական համակարգի պաշտպանվածությունը պետական իշխանության տարաբնույթ ազդեցություններից, դատական համակարգի անկախությունն ու դինամիկ կայունությունը, և այդ համակարգի տարրերի միջև փոխհամաձայնեցված ներդաշնակությունը։ Դատական իշխանությունը պետական իշխանության ինքնուրույն և անկախ ճյուղ է, որը պատկանում է բացառապես պետական հատուկ մարմիններին՝ դատարաններին, կոչված է հատուկ դատավարական կարգով լուծելու իրավական բնույթ ունեցող սոցիալական կոնֆլիկտները, այսինքն՝ իրականացնելու արդարադատություն¹։ Դատական իշխանության կայացվածության առումով բավականին արդիական է Ռ.Ռ. Սալիմզյանովայի այն տեսակետը, որ դատական իշխանության անկախության և ինքնուրույնության սկզբունքի իրացվածության աստիճանը իրավական պետության կայացածության և ժողովրդավարական իրավաքաղաքական ռեժիմի ցուցանիշն է²։

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների ընթացքում ուշադրության կենտրոնում են եղել նաև դատական իշխանության առնչվող սահմանադրական կարգավորումների իմանահարցերը։ Մաս-

նավորապես՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում(այսուհետ՝ Հայեցակարգ) նշվում է, որ միայն գործառության, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անհրաժեշտ ու բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է երկրում իրավունքի գերակայության, արյունավետ արդարադատության և արդար դատաքննության երաշխավոր հանդիսանալ։ Սակայն, վերջին տարիներին, հասարակության իրավագիտակցության բարձրացման, քաղաքացիական հասարակության զարգացման պայմաններում, այս ոլորտում բացահայտվել կամ ընդգծվել են մի շարք առանցքային խնդիրներ, որոնք ժողովրդավարական և իրավական պետությունների լավագույն ավանդույթներին համահունչ արյունավետ լուծումներ են պահանջում հենց Սահմանադրության մակարդակով³։ Դատական իշխանության կայացվածության առումով բավականին արդիական է Ռ.Ռ. Սալիմզյանովայի այն տեսակետը, որ դատական իշխանության անկախության և ինքնուրույնության սկզբունքի իրացվածության աստիճանը իրավական պետության կայացածության և ժողովրդավարական իրավաքաղաքական ռեժիմի ցուցանիշն է²։

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության՝ որպես իշխանությունների բաժնման և հավասարակշռման սահմանադրական համակարգում կայունացնող ու հավասարակշռող մարմնի, կազմակերպման և գործունեության սահմանադրական իրավագիտական իմանահարցերը ուղղակի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որեն կապված են օրենսդիր իշխանությունն իրականացնող մարմնի՝ Ազգային ժողովի առանձնահատուկ և ակտիվ դերակատարման հետ:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում՝ հստակ ամրագրվեց Ազգային ժողովի ակտիվ դերակատարությունը: Մասնավորապես՝ Ազգային ժողովի դերը առաջին հերթին կայանում է նրանում, որ, կոնկրետացնելով սահմանադրական դրույթները, հենց նա է ձևավորում դատական իշխանության կազմակերպման, կազմավորման և գործառնության օրենսդրական հիմքերը: Սահմանադրության մեջ նաև հստակ ամրագրում է ստացել Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ ԲԴԽ) կազմի և կազմավորման, Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման կարգերի վերաբերյալ սահմանադրական լուծումները: Պետք է նշել այն հանգանանքը, որ սահմանադրական փոփոխություններով կարևորվեց Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատական իշխանության անկախության ապահովման երաշխավորի, գործունեության արդյունավետության սահմանադրական երաշխիքները: Դատական խորհրդների կամ դրանց համարժեք մարմինների ստեղծումը տարբեր երկրներում յուրովի լուծումներ են ստացել: Սակայն, Վենետիկի հանձնաժողովը, տարբեր իրավական համակարգերի բազմազանությունը նկատի ունենալով, այնուամենայնիվ, առաջարկում է, որ բոլոր պետությունները, որոնք դեռևս նման խորհրդներ չունեն՝ քայլեր ձեռնարկեն այդպիսիք ստեղծելու ուղղությամբ⁴:

Տարբեր երկրներում գոյություն ունեցող դատական խորհրդների կազմավորման իրավական հիմքերը հաշվի առնելով՝ պետք է նշել, որ ամենահաջողված մոդելներն են համարվում այնպիսինները, որոնցում ներկայացված են պետական և քաղաքացիական հասարակության գործիքները⁵:

ՀՀ Սահմանադրության 173-րդ հոդվածում ամրագված է, որ Բարձրագույն դատական խորհրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Գործող սահմանադրական կարգավորման պայմաններում Բարձրագույն դատական խորհրդը, ըստ էության, ՀՀ արդարադատության խորհրդի իրավահաջորդը լինելով, փորձել է ստանձնել առավելագույն կայունացնող դեր, և զերծ պահել դատական իշխանությանը ցանկացած ոչ իրավաչափ միջամտությունից և ներզործությունից: Այս պնդման համար հիմք կարող է հանդիսանալ նաև այն հանգանանքը, որ համաձայն

Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ Բարձրագույն դատական խորհրդն է հաստատում իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառուվարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար: Վենետիկի հանձնաժողովը այս հարցի հետ կապված՝ հայտնել է այն դիրքորոշումը, որ Բարձրագույն դատական խորհրդը կարող է լինել դատական իշխանության ներկայացնության գործընթացում՝ բյուջեի նախագիծ կազմելով և իրավասու մարմնին առաջարկ ներկայացնելով: Հաշվի առնելով, որ դատական իշխանության անկախությունը ուղղակիորեն կապված է նաև ֆինանսավորման հետ՝ կարծում ենք, որ ճիշտ է այդ լիազորությունը սահմանադրութեան Բարձրագույն դատական խորհրդին վերապահելը:

2005 թվականի նոյեմբերի 27-ի Սահմանադրության փոփոխություններով՝ 94.1-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում էին Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ, իինք տարի ժամկետով, օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության 174-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդը կազմված է տասն անդամից: Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնինգ տարվա փորձառությամբ իրավաբան-գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր (Սահ. հոդ. 174-րդ): Քննարկվող հոդվածի 7-րդ մասով նաև սահմանվում է, որ Բարձրագույն դատական խորհրդն իր կազմից Դատական օրենսդրով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի

Կողմից ընտրված անդամներից: Նախորդ սահմանադրական կարգավորումներով Արդարադատության խորհրդի նիստերը հրավիրում և վարում էր ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ինչը, մեր կարծիքով, բավականին վիճահույց էր: Չնայած այն հանգամանքին, որ երկրի բարձրագույն աստյանի դեկավարը Արդարադատության խորհրդում չուներ քվեարկության իրավունք, այնուամենայնիվ, խորհրդի ներքին անկախության երաշխավորման տեսանկունից ոչ իրավաչափ ներգործության վտանգ էր պարունակում: Մեր համոզմամբ, ԲԴԽ-ի նախագահի ընտրության ներկա սահմանադրական լուծումը՝ խորհրդի առավել արդյունավետ գործունեությունը ապահովելու երաշխիք կարող է հանդիսանալ: Այս կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը արձանագրել է, որ դատական իշխանության անկախությունը երաշխավորող ինքնավար դատական խորհրդի ստեղծումը չի ենթարկում, որ դատական համակարգը պետք է ամբողջովին լինի ինքնակառավարվող: Դատական իշխանության վարչական կառավարումը չպետք է ամբողջովին լինի դատավորների ձեռքում: Դեռ ավելին՝ հանձնաժողովի կարծիքով՝ խորհրդի անդամները կարող են առավելապես լինել ոչ դատավորներ՝ մասնագիտական համայնքի ներկայացուցիչներ, ինչը կապահովի դատական համակարգի շահառուների ներկայացվածությունը, և գտնում ենք, որ խորհրդի կազմում հավասար թվով դատավոր և ոչ դատավոր անդամների նախատեսումը կարող է բացառել կորպորատիվիզմը և սեփական նեղ շահերով առաջնորդվելու վտանգը:

Սահմանադրական նոր կարգավորումների պարագայում Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման ձևը կարելի է հաջողված համարել, քանի որ խորհրդի հինգ անդամներին Ազգային ժողովի կողմից ընտրելը ավելի նպատակահարմար է, քան երկրի նախագահի կողմից ուղղակի նշանակելը: Այստեղ կարևոր է նաև այն հանգամանքը, որ անդամները ընտրվում են Ազգային ժողովի կողմից որպես մեծամասնության պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երեք հինգերորդի կողմից, ինչն էլ, կարծում ենք, հնարավորություն կստեղծի խորհրդարանական ընդդիմությանը իր խոսքն ասելու խորհրդի անդամների ընտրության վերաբեյալ:

Կարևոր է նաև փաստել այն խնդրի մասին, որը առկա էր Արդարադատության խորհրդի ձևավորման ժամանակ նախորդ օրենսդրական կարգավորումներում և ինչը, մեր կարծիքով, բավականին վիճահարույց է թվում: Այսպես՝ 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված դատական

օրենսգրքով սահմանվում էր, որ Արդարադատության խորհրդի՝ Հանրապետության Նախագահի կողմից նշանակված իրավաբան-գիտնականների լիազորությունները դադարում են Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները դադարելու դեպքում, իսկ Ազգային ժողովի կողմից նշանակված իրավաբան-գիտնականների լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու կամ Ազգային ժողովի արձակման դեպքում: Այս իրավիճակում իրավաբան-գիտնականների պաշտոնավարումը ուղղակիորեն կապված էր ՀՀ Նախագահի կամ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետների հետ, քանի որ նշված սուբյեկտների լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու պարագայում՝ իրավաբան-գիտնականների լիազորությունները նույնպես կրադարեցվեին: Իսկ ներկա օրենսդրական կարգավորումներով, սահմանադրության մակարդակով ամրագրված է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի: Առաջին հայացքից կարող է տպագրություն ստեղծվել, որ սահմանադրական այս կարգավորումը բավականին հիմնավոր երաշխիքներ կարող է ստեղծել ԲԴԽ-ի անդամների անկախի և անկողմնակալ գործունեության համար, սակայն ինչպես ցույց տվեց ժամանակը, սահմանադրական այս կարգավորումը արգելվ չի հանդիսացավ, որպեսզի նոր իշխանության կողմից ստեղծվեր այնպիսի իրավիճակ, եթե նախկին իշխանությունների կողմից ընտրված ԲԴԽ-ի որոշ անդամներ հրաժարականի դիմումուն:

Պետք է նկատել, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում՝ առանձնակի ուշադրության է արժանացել դատական համակարգի կազմավորման ընթացակարգը: Կարևոր է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կոնկրետ գործերի ըննության արդյունքում, որպես դատական իշխանության անկախության աստիճանի չորս չափանիշներից մեկը՝ առանձնացրել է դատավորների նշանակման եղանակը⁸:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում բավականին ամրապնդվել է Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը և փոփոխվել է լիազորությունների շրջանակը: Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջարկել միայն դատավորների: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ: Սահմանադրական դատարանն իր կազմից՝ վեց տարի ժամկետով, ընտրում է Սահմանադրական դատարանի նախագահ և փոխնախագահ՝ առանց վերընտրվելու իրավունքի (Սահ.հոդ.166-րդ, մաս 1-ին, մաս 2-րդ): Սահմանադրական նոր լուծումը՝ կապված Սահմանադրական դատարանի դատավորների որոշակի ժամկետով ընտրության հետ, կարծում ենք, բավականին վիճելի է: Նաև ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով՝ պաշտոնավարման ժամկետը համարվում է դատավորի անկախության երաշխիքներից մեկը⁹: Ուստի, գտնում ենք, որ այս կարգավորումը կարող է որոշ դեպքերում դատական իշխանության անկախության և հետևաբար՝ արդյունավետ արդարադատության իրականացման խոշնոտ հանդիսանալ:

Սահմանադրական փոփոխություններով նոր կարգ սահմանվեց նաև Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման համար: Այսպես՝ Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ, իսկ վերջինս առաջարկող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից: Գտնում ենք, որ այս պարագայում Հանրապետության նախագահին վերապահել է միայն արարողակարգային գործառույթ, և կարելի էր ուղղակի սահմանել, որ Վճռաբեկ դատարանի դատավորին ընտրում է Ազգային ժողովը, քանի որ Նախագահին այլ բան չի մնում, քան նշանակել դատավորին: Սահմանադրության նույն հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ Վճռաբեկ դատարանի նախագահը ընտրվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի ժամկետով՝ բացառելով վերընտրության հնարավորությունը: Ինչպես արդեն վերևում նշեցինք՝ բավականին արդյունավետ կարգավորում է դատարանի նախագահների ընտրվելը ոռտացիոն սկզբունքով. Վճռաբեկ դատարանի և Վճռաբեկ դատարանի պալատների նա-

խագահները՝ 6, իսկ մյուս դատարանների նախագահները՝ 3 տարի ժամկետով (Սահ., հոդ. 166-րդ, մաս 4-6-րդ): Նախկին օրենսդրական կարգավորման համաձայն՝ դատարանի նախագահները նշանակվում էին որպես դատավոր պաշտոնավարման ամբողջ ժամկետի համար, ինչն էլ հանգեցնում էր զերկենտրոնացման: Եվ շատ դեպքերում հաշվի չէր առնվում այն հանգամանքը, որ դատարանի նախագահը ևս դատավոր է, ով ունի որոշակի լրացուցիչ լիազորություններ՝ կապված դատարանի բնականու գործունեության ապահովման հետ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ թեև օրենսդիր մարմնի կողմից դատավորների նշանակումը տարածված միջազգային փորձ է, այնուամենայնիվ, Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ դատավորների ընտրությունը Ազգային ժողովի կողմից թվում է առավել ժողովրդավարական մեխանիզմ, բայց կարող է նաև դատավորներին ներգրավել քաղաքական գործունեության մեջ և հանգեցնել գործընթացի քաղաքականացմանը¹⁰: Վենետիկի հանձնաժողովի կարծիքով՝ խորհրդարանն, անկասկած, առավել ներքաշված է քաղաքական խաղերի մեջ, և դատավորների ընտրությունը խորհրդարանում կարող է հանգեցնել քաղաքական գործաքննության ուժությունը անդամ կարող է ցանկանալ ունենալ իր սեփական դատավորը¹¹: Նշված խնդրի առնչությամբ մենք չենք կիսում Վենետիկի հանձնաժողովի մտահղությունը, քանի որ, չբացառելով գործընթացի հնարավոր քաղաքականացման հետ կապված տեսակետը, պետք է կարևորել այն երաշխիքը, որի համաձայն՝ մեր օրենսդրական կարգավորմամբ, Վճռաբեկ դատարանի դատավորներն ընտրվում են ոչ թե որոշակի ժամկետով, այլ մինչև պաշտոնավարման ժամկետի ավարտը, և Ազգային ժողովը դատավորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման լիազորություն չունի: Եվ վերջապես՝ խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում այս կարգավորումը հնարավորություն է տալիս երկրի բարձրագույն դատական ատյանի անդամներին ընտրել ժողովրդի կողմից առաջնային մանդատով օժտված ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի միջոցներ:

Անփոփելով վերը շարադրվածը՝ պետք է արձանագրել, որ ինչպես և ժողովրդավարական ցանկացած պետությունում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանության լիարժեք և արդունավետ գործադրման գլխավոր գրավականը իշխանության ճյուղերի միջև փոխգործական կապի գարգացումն է: Մեր համոզմամբ՝ քնննարկված սահմանադրական նոր լուծում-

ները իրական հնարավորություն կարող են ստեղծել օրենսդիր և դատական իշխանության մարմինների միջև փոխգործակցության կապի խորացման համար՝ միաժամանակ կարեղելով նաև օրենսդ-

րական դաշտի շարունակական զարգացման ուղիները:

¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնարանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարույոնյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 897:

² Տե՛ս, Սալիմզյանովա Պ. Պ. Նезависимость судебной власти как гарантия правового государства. 2007, С. 8.

³ Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014, էջ 32:

⁴ Տե՛ս, Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France.

⁵ Տե՛ս, <https://www.encj.eu/images/stories/pdf/judiciaries/authemaandelena2004judicialcouncilslessonslearnedeuropelatinamerica.pdf>

⁶ Տե՛ս, Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France.

⁷ Տե՛ս, Venice Commission, CDL-INF(1998)009, Opinion on recent amendments to the law on Major constitutional provisions of the Republic of Albania, 9-12-րդ կետեր, CDLAD(2007)028, Report on Judicial Appointments by the Venice Commission, 27-րդ և 30-րդ կետեր, CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina, 30-31-րդ կետեր, CDL-AD(2002)012, Opinion on the Draft Revision of the Romanian Constitution, 66-րդ կետ, CDL-AD(2002)021, Supplementary Opinion on the Revision of the Constitution of Romania, 21-22-րդ կետեր, CDL-AD(2005)003, Joint opinion on a proposal for a constitutional law on the changes and amendments to the Constitution of Georgia by the Venice Commission and OSCE/ ODIHR, 102-րդ կետ, CDL-AD(2012)001, Opinion on Act CLXII of 2011 on the Legal Status and Remuneration of Judges and Act CLXI of 2011 on the Organisation and Administration of Courts of Hungary, 45-րդ կետ:

⁸ Տե՛ս, CASE OF FINDLAY v. UNITED KINGDOM (App. 22107/93), 25 of February 1997, par. 73 (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58016>); Affaire RYWIN c. POLOGNE (Reguete 6091/06, 4047/07, 4070/07, 18/02/2016), § 220:

⁹ Տե՛ս, CASE OF FINDLAY v. UNITED KINGDOM (App. 22107/93), 25 of February 1997, par. 73 (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58016>); Affaire LUKA c. ROUMANIE, (Reguete 34197/02), 21/07/2009, § 37 (<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-93648>)

¹⁰ Տե՛ս, Վենետիկի հանձնաժողովի թիվ 403/2006 (CDL-AD(2007)028) կարծիքը, 9-10-րդ պարբերությունների:

¹¹ Տե՛ս, Venice Commission, Opinion on the Draft Law on Judicial Power and Corresponding Constitutional Amendments of Latvia, CDL-AD (2002) 26, para. 22:

Օգուազործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2005 թվականի, 2015 թվականի փոփոխություններով):
2. Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրը ՀՀ Սահմանադրական օրենք:
3. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնարանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարույոնյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010:
5. Սալիմզյանովա Պ. Պ. Նезависимость судебной власти как гарантия правового государства. Казань, 2007.
6. Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Courts and Judges, CDL-PI(2015)001 2015, Strasbourg, France.
7. Վենետիկի հանձնաժողովի թիվ 403/2006 (CDL-AD(2007)028) կարծիքը:

Ваге Багдасарян
Соискатель Академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Взаимоотношения судебной и законодательной властей РА в условиях парламентарного правления

В статье представлены те проблемы взаимоотношений законодательной и судебной властей, которые присутствуют в РА в условиях действующего парламентарного правления. Была изучена активная роль законодательной власти, направленная на конституционные поправки законных оснований, организации, формирования и применения судебной власти при парламентарной форме правления.

В статье было обращено внимание на выбор судей высшего судебного совета и конституционного суда, а также на действующие правовые поправки и присутствующие проблемы назначения судей апелляционного суда.

Была отведена важная роль углублению взаимодействующей связи между законодательной и судебной властями РА, для полноценного и эффективного применения государственной власти.

Ключевые слова: *законодательная власть, судебная власть, судья, парламентарная система управления, высший судебный совет, национальное собрание.*

Vahe Baghdasaryan

Applicant of the Public Administration Academy of the RA

SUMMARY

The relations between legislative and judicial powers of RA in the conditions of parliamentary governance system

The article presents the relations issues between legislative and judicial powers which exist in the conditions of parliamentary governance system operating in the Republic of Armenia. The active role of the legislative power that is aimed at organizing the judicial power, as well as its formation and the constitutional regulations of the legislative bases of function was studied in the conditions of parliamentary form of government.

The article refers to the election of the members of the Supreme Judicial Council and the judges of the Constitutional Court, as well as to the operating legal regulations and existing issues about the appointment of the Court of Cassation judges. The expanding on the interoperating connection between the bodies of legislative and judicial powers of RA was highlighted with the aim of providing complete and efficient use of the state power.

Key words: *legislative power, judicial power, judge, parliamentary governance system, Supreme Judicial Council, National Assembly.*

Բնագիրը ներկայացվել է 24.04.2020թ.
Ընդունվել է տպագրության 28.04.2020թ.
Հողվածը երաշխավորել է տպագրության (զրախոսել է)
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ստեփանյանը

JUSTICE
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829 1252

